



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

4566

Опытные работы

83

Г-56

2011

83-2

2-56

4



JUNGEBAU  
ORLEANS

ARBEITSGEMEINSCHAFT

VON  
GEORG BARCKHARDT

SEPARAT ABDRUCK AUS DER ZEITSCHRIFT 'FORDE'

2003

**SCHILLER'S**  
**JUNGFRAU VON ORLEANS**

ARMENISCHE UEBERSETZUNG

VON

GEORG BARCHUDARIANZ

SEPARAT ABDRUCK AUS DER ZEITSCHRIFT «**PORDZ**»

309  
**ՕՐԼԵԱՆԻ ԿՈՅՄԸ**

ՎԻՊԱՍԱՆԱԿԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ

ՀԻՆԳ ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱՄԲ

հեղինակություն

**ՉԻԼԼԵՐԻ**

SCHILLER'S

**JUNGFRAU VON ORLEANS**

Թարգմանեց

ԳԵՈՐԳ ԲԱՐԻՈՒԴԱՐԵԱՆՑ

8955



1878

Թ Ի Ս Ղ Ի Ս

Հ. Էնֆիանանցի եւ ընկ. տպարանում:

# ՕՐԼԷԱՆԻ ԿՈՅՄԸ

Վ Ի Պ Ա Ս Ա Ն Ա Կ Ա Ն Ո Ղ Բ Ե Ր Գ Ո Ւ Թ Ի Ի Ն

## Զ Ի Լ Լ Ե Ր Ի

### Ա Ն Ձ Ի Ն Ք

ԿԱՐԼՈՍ ԵՕԹՆԵՐՈՐԴ, Ֆրանսիայի թագաւորը:  
 ԹԱԳՈՒՀԻ ԻՋԱԲՕ, նորա մայրը:  
 ԱԳՆԷՍ ՍՕՐԷԼ, նորա սիրուհին:  
 ՓԻԼԻՊՊՈՍ ԲԱՐԻ, Բուրգունդիայի դուքսը:  
 ԿՈՄՍ ԴԻԻՆՈՒԱ:  
 ԼԱ ՀԻՐ . . . } Թագաւորական օֆիցիւրներ:  
 ԴԻԻ ՇԱՏԷԼ }  
 ԲԷՅՄՍԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԸ:  
 ՇԱՏԻԼԵՕՆ, Բուրգունդիայի սպսկաւ:  
 ԲԱՈՒԼ, Լոտարինդիացի սպսկաւ:  
 ՏԱԼԲՕ, Անգլիացոց սպարապետ:  
 ԼԻՕՆԷԼ . . . } Անգլիացոց զորավարներ:  
 ՖԱՍՏՕԼՖ }  
 ՄՕՆԿՕՄԵՐԻ, մի վալիսցի:  
 ՕՐԼԷԱՆԻ ԽՈՐՀՐԳԱԿԱՆՆԵՐԸ:  
 ԱՆԳԼԻԱՅՈՑ ՄՈՒՆԵՏԻԿ:  
 ՏԻԲՕ ԴԱՐԿ, հարուստ գիւղացի:  
 ՄԱՐԿՕ, . . . }  
 ԼՈՒԻՉՕՆ, . . . } նորա աղջիկները:  
 ՅՈՎՀԱՆՆԱ . . . }  
 ԷՏԻԷՆ . . . }  
 ԿԼՕԴ ՄԱՐԻ } նոցա փեսացուները:  
 ԲԱՅՄՕՆԴ }  
 ԲԷՐՏՐԱՆ, ուրիշ գիւղացի:  
 ՄԻ ՍԵՒ ԱՍՊԵՏԻ ԵՐԵՒՈՅԹ:  
 ԱԾԻԱԳՈՐԾ և ՆՈՐԱ ԿԻՆԸ:  
 ԶԻՆՈՒՈՐՆԵՐ և ԺՈՂՈՎՈՒՐԴ, ԱՐԳՈՒՆԻ ՊԱՇՏՕՆԱԿԱԼՆԵՐ, ԵՊԻՍ-  
 ԿՈՊՈՍՆԵՐ, ԱԲԵՂԱՆԵՐ, ՄԱՐՇԱԼՆԵՐ, ԳԱՏԱԻՈՐՆԵՐ, ՊԱԼԱՏԱԿԱՆ-  
 ՆԵՐ և թագաւորութեան հանդիսին մասնակցող ուրիշ չխօսող անձինք:

309

8

Дозволено цензурою. Тифлисъ. 3 ноября 1877 г.

1878

# Ն Ա խ Ե Ր Գ Ա Ն Ք

## Վ ի գ ի շ ղ ա կ ա ն տ Ե ս ա ր ա ն

Աջ կողմը մի սուրբ պատկեր մատուռի մէջ, ձախ կողմը մի բարձր կաղնի:

### Ա.Ո.Ա.ՋԻՆ ԵՐԵՒՈՅԹ

ՏԻԲՕ Գ՝ԱՐԿ, ՆՈՐԱ ԵՐԵՔ ԱՂՋԻԿԸ, ԵՐԵՔ ԵՐԻՏԱՍԱՐԳ  
ՀՈՎԻԻՆԵՐ, Նոցա փեսացուները

ՏԻԲՕ

Այ՛, սիրելի հարեաններ, մենք  
Այսօր դեռ ևս Ֆրանսիացի ենք,  
Ազատ բընակիչ և տէր այն երկրի,  
Որ մեր պապերը մշակում էին:  
Ո՛վ դիտէ, վաղը մեզ ով հրամայէ,  
Արդէն ամեն տեղ փոփոկեցնում է  
Անգլիացին իւր յաղթական դրօշը,  
Եւ Ֆրանսիայի ծաղկած դաշտերը  
Ոտնակոխ անում նորա ձիերը:  
Նրան յաղթանակով ֆարիզն ընդունեց  
Եւ Դազօբէրի հին թագով պսակեց  
Մի օտար ցեղի շառաւղին. իսկ մեր  
Թագաւորների թողը թագազուրկ,  
Հալածական է իւր տէրութեան մէջ:  
Նրա դէմ կռւում է թշնամու զօրքում  
Մօտ ազգականն ու առաջին պէրը.

Նոցա առաջնորդն է իւր չար մայրը:  
Չորս կողմն այրվում են զիւղեր, քաղաքներ,  
Եւ հեպհեստէ հրդեհի ծուխը  
Մօտենում է այ՛ խաղաղ վայրերին:—  
— Այս պատճառով էլ, սիրելի զրացիք,  
Աստծով վճռել եմ, որովհետեւ դեռ  
Այսօր կարող եմ, ապահովեցնել  
Աղջկերանցս: Այժմ պաշտպանի  
Կարօտ է կինը, և հաւատարիմ  
Սիրով հնար է տանել ամեն բեռ:  
(առաջին հովուին)

— Դուք իմ Մարգօին ուզում էք, է՛տիէն:  
Մեր արտերը կից, սրտերն համաձայն,  
Լաւ ամուսնական կապի է նշան:  
(երկրորդին)

Կլօդ Մարի, լուռ էք, և Լուիզօնս  
Աչքերը գետնին է խոնարհեցնում:  
Ի՞նչպէս բաժանեմ զոյգ սիրող սրտեր,  
Որովհետեւ չէք դուք գանձերի տէր:  
Այժմ ո՞վ ունի գանձ: Տունն ու շտեմարան  
Կլինին թշնամուն կամ կրակին աւար,  
Միայն հաւատարիմ կուրծքը աղամարդու  
է մի ամուր յարկ այժմ կնոջ համար:

ԼՈՒԻՉՕՆ

Հայրիկ:

ԿԼՕԴ ՄԱՐԻ

Լուիզօն:

ԼՈՒԻՉՕՆ (գրկելով Յովհաննային)

Սիրելի քոյր իմ:

ՏԻԲՕ

Ամենքին կրտամ երսուն օրավար,  
Մի տուն և մի հօտ — և ինչպէս որ ինձ  
Օրհնել է Աստուած, թող օրհնէ և ձեզ:

ՄԱՐԳՕ (գրկելով Յովհաննային)

Քոյր, ուրախացրու մեր հօրը, վեր առ

Մեզնից օրինակ. թող այսօր կապուխ  
երեք ուրախ կապ:

ՏԻԲՕ

Հիմա գընացէք

Եւ պատրաստուեցէք. վաղը հարանիք է:

Թող բոլոր գիւղը միասին տօնէ:

(Երկու զոյգը հեռանում են թե թեի տուած:)

### ԵՐԿՐՈՐԴ ԵՐԵՒՈՅԹ

ՏԻԲՕ, ԲԱՅՄՕՆԴ, ՅՈՎ, ՀԱՆՆԱ:

ՏԻԲՕ

Ճաննէտ, քոյրերդ հարանիք են անում,

Եւ բաղդաւորուած տեսնելով նոցա,

Ուրախանում է իմ ծերութիւնը.

Դու միայն տալիս ես սրտիս ցաւ ու վեշա:

ԲԱՅՄՕՆԴ

Ինչի՞ աղջկադ յանդիմանում ես:

ՏԻԲՕ

Տես, այս պատուական երիտաւարդը,

Որ ամբողջ գիւղում չունի իւր հատը,

Ահա՛ այժմ արդէն երրորդ աշունքն է

Նուիրել է քեզ իւր սրտի սէրը,

Եւ լուռ ցանկութեամբ սրտի փափագով

Աշխատում է նա ստանալ քո ձեռը:

Բայց դու մերժում ես նորան սառնութեամբ.

Այլ և ոչ մինը մեր հովիւներից

Մի քաղցր ժպիտ չըստացաւ քեզնից:

Ես քեզ տեսնում եմ ծաղիկ հասակում,

Հասել է կեանքիդ շքեղ զարունը,

Քաղցր յոյսերի ժամանակն է դա.

Բայց զուր սպասում եմ, որ քնքոյշ սիրոյ

Ծաղկի կոկոնը բացուի ու բերէ

Ոսկէ պտուղը: Բ'հ, ես այդ բանին

Հաւան չեմ երբէք: Դա մի նշան է

Մոլորուած բնութեան: Ես չեմ հաւանում

Այն սիրտը, որ ցուրտ և փակ է մնում;

Երբ որ հասել է սիրելու ժամը:

ԲԱՅՄՕՆԴ

Մի այդպէս, հայր Արկ. թողէք իւր կամքին:

Իմ Յովհաննայի սէրն է մի ազնիւ,

Երկնային պտուղ, և պատուականը

կամաց է հասնում: Այժմ նա դեռ ևս

Սիրում է ապրել լեռների վերայ,

Նա վախենում է թողնել իւր բարձր

Ազատ արօտը և մտնել մարդկանց

Խոնարհ յարկի տակ, որ բնակարան է

Պէս պէս հոգսերի: Յաճախ զարմանքով

Նայում եմ նորան խոր ձորի միջից,

Երբ լերան գլխին կանգնած է լինում

Նա իւր հօտի մէջ ազնիւ հասակով

Եւ շուրջ նայում է ծանր հայեացքով,

Եւ այդ միջոցին թւում է նա ինձ

Մի վե՛մ էակ ուրիշ աշխարհից:

ՏԻԲՕ

Այդ բանն է ահա, որ ընդդէմ է ինձ:

Նա միշտ փախչում է քոյրերի ուրախ

Ընկերութենից, դէպի ամայի

Լեռներն է դիմում: Հաւր չըխօսած

Ջարթում է, թողնում իւր անկողինը,

Եւ կէս գիշերին, երբ մարդ ուզում է

Մարդուն մօտ լինել, գիշերաշօջիկ

Թռչունների պէս նա դուրս է սողում

Սոսկալի մռայլ աղջամուղջի մէջ.

Եւ չորեքթեան ճանապարհի վրայ

Ծածուկ խօսում է լերան ոգու հետ:

Ինչի՞ անպատճառ նա միշտ այստեղ է

Քչում իւր հօտը: Յաճախ տեսնում եմ

Նորան մտախոհ ամբողջ ժամերով  
 Նստած դրուխդեան այն ծառի տակը,  
 Որից փախչում են բոլոր բաղդաւոր  
 Արարածները, որովհետեւ է  
 Այնտեղ ապահով: Այն ծառի տակը  
 Մի չար էակ է բնակվում շատ հին,  
 Հեթանոսական ժամանակներից:  
 Գիւղի ծերերը պատմում են միմեանց  
 Սոսկալի վէպեր այդ ծառի մասին.  
 Եւ զարմանալի ձայներ են լսվում  
 Երբեմն նորա մութը ճիւղերից:  
 Ես ինքս տեսայ, երբ որ զիշերով  
 Անց էի կենում այդ ծառի մօտով,  
 Նստած նորա տակ ուրուական մի կին,  
 Որ իւր լայնածալ հանդերձի տակից  
 Զորացած ձեռը մեկնեց դէպի ինձ,  
 Կարծես ուզում էր քաշել ինձ իւր մօտ.  
 Բայց ես իմ հոգին Աստծուն յանձնելով,  
 Շուտով հեռացայ արագ քայլերով:

ԲԱՅՄՕՆԻ

(Յոյց տալով սուրբ պատկերը մատուռի մէջ):

Այն սուրբ պատկերի ներկայութիւնը,  
 Որ շուրջ պիռուճ է իւր օրհնութիւնը,  
 Ոչ սատանայի դժոխային հնարքը  
 Բերում է աղջկազ այս ծառի տակը:

ՏԻԲՕ

Ո՛չ, ո՛չ, զուր չէին իմ երազները.  
 Ես երեք անգամ տեսայ նրան Բէյմում  
 Մեր արքաների դահի վրայ բազմած.  
 Շողջողուն պսակ եօթը աստղերով  
 Ունէր ճակատին, ձեռին դայիսոն,  
 Որից երեք հատ սպիտակ շուշաններ  
 Բողբոջում էին: Եւ ես, իւր հայրը,  
 Երկու քոյրերը, իշխաններ, կոմսեր,  
 Սպիտկոպոսներ, թագաւորն ինքը

Նորա առաջը խոնարհում էինք:  
 Ո՞րտեղից է այս շքեղութիւնը  
 Իմ խրճիթի մէջ: Ո՛հ, սա մի խորին  
 Անկման նշան է: Այլաբանօրէն  
 Ներկայացնում է այս զգուշացուցիչ  
 Երազն ինձ նորա փառասիրութիւնն:  
 Նա ամաչում է իւր ստոր կոչումից,  
 Պատճառ որ Աստուած զարդարել է նրան  
 Բարձր ձիրքերով և գեղեցկութեամբ  
 Աւելի քան միւս հովիւ-հիներին:  
 Եւ այդ պատճառով նա մննդում է  
 Իւր մէջ յանցաւոր մեծամտութիւն:  
 Մեծամտութիւնն էր հրեշտակների  
 Անկման պատճառը. մեծամտութիւնն  
 է, որով մարդուն բռնում է չարը

ԲԱՅՄՕՆԻ

Ո՞վ է այնպէս հեղ և առաքինի,  
 Ինչպէս ձեր դուստրը: Զէ՞ որ նա սիրով  
 Սպասաւորում է իւր մեծ քոյրերին:  
 Թէև ամենից շնորհալին է նա,  
 Բայց դուք տեսնում էք նուստ աղախնի պէս  
 Միշտ հնազանդութեամբ կատարում է նա  
 Ամենամանր ծառայութիւններ.  
 Եւ զարմանալի կերպով աճում են  
 Նորա ձեռի տակ ձեր հօտն ու հունձը:  
 Բողբոջ, ինչ որ նա կատարում է  
 Բաղդաւորութեամբ միշտ աւարտում է:

ՏԻԲՕ

Այո՛, այդպէս է: Անհասկանալի  
 Բաղդաւորութիւն— Ես սարսափում եմ  
 Այդ օրհնութենից— Բայց բաւական է.  
 Ել բան չեմ ասում. չեմ ուզում խօսել  
 Միթէ կարո՞ղ եմ ես իմ սեփական  
 Սիրական զաւակս ամբաստանել:  
 Ես միայն կարող եմ զգուշացնել նորան,  
 Կարող եմ նորա համար աղօթել:

Եւ զգուշացնումեմ—Փախիր այս ծառից,  
 Մենակ մի' մնար. և կէս գիշերին  
 Մի' փորիր գետնից պէս պէս արմատներ,  
 Մի' շինիր խմբէքներ, աւաղի վերայ  
 Մի' գծիր ձևեր—Ոգիները շատ  
 Հեշտ են զրգուվում: Նորա սպասում են  
 Բարակ յարկի տակ, թիթե ձայնի վրայ  
 Շուտ դուրս են վազում: Մենակ մի' մնար:  
 Նոյն խակ երկնքի տիրոջ մօտեցաւ  
 Փորձիչ սատանան անապատի մէջ:

**ԵՐՐՈՐԴ ԵՐԵՒՈՅԹ**

ԲԵՐՏՐԱՆ, մտնում է մի սաղաւարտ ձեռին, ՏԻԲՕ, ԲԱՅՄՕՆԴ,  
 ՅՈՎՀԱՆՆԱ:

ԲԱՅՄՕՆԴ

Լռեցէք: Ահա՛ Բերտրանը քաղաքից  
 վերադառնում է: Տեսէք, ինչ ունի:

ԲԵՐՏՐԱՆ

Ինչի՞ զարմացած նայում էք դուք ինձ:  
 Ձեզ զարմացնում է անշուշտ այս բանը:

ՏԻԲՕ

Այո՛, այդպէս է: Ասացէք ի՞նչպէս  
 Ընկաւ ձեր ձեռը այդ սաղաւարտը:  
 Ինչի՞ էք բերում այդ չարագուշակ  
 Նշանը դուք այս խաղաղ վայրերը:

ԲԵՐՏՐԱՆ

Ինքս էլ չը գիտեմ, թէ ինչպէս ընկաւ  
 Այս բանն իմ ձեռը: Ես վժիռւորում  
 Գնեցի ինչ ինչ երկաթեղէններ.  
 Անթիւ բազմութիւն կար շուկայի մէջ,  
 Որովհետեւ շատ փախստականներ  
 Որէանից նոր հէնց հասան այնտեղ:

Եւ տարածեցին անյաջող լուրեր  
 Պատերազմական: Բոլոր քաղաքը  
 Շփոթութեան մէջ էր: Եւ երբ ամբողջ  
 ձեղքելով անցայ, յանկարծ մօտեցաւ  
 Ինձ մի թխադէմ գնչու կին, ձեռին  
 Այս սաղաւարտը և մի սուր հայեացք  
 Ձգելով ինձ վրայ ասաց. բարեկամ,  
 Դուք որոնում էք ձեզ մի սաղաւարտ:  
 Ահա՛ այստեղ է ձեր որոնածը:  
 Առէք, զընեցէք, շատ աժան կը տամ—  
 Զինուորներին տար, ասացի նորան.  
 Ես գիւղացի եմ: Ի՞նչ հարկաւոր է  
 Ինձ մի սաղաւարտ: Նա չը հեռացաւ  
 Եւ պատասխանեց. «Այժմ պողպատէ  
 Մի գլխի ծածկոց քարաշէն տանից  
 Աւելի արժէ:» Այսպէս խօսելով  
 Հետևում էր ինձ փողոցէ փողոց  
 Առաջարկելով ինձ իւր ապրանքը,  
 Որ ինձ պէտքը չէր: Տեսայ զեղեցիկ,  
 Փայլուն սաղաւարտ և մի ասպետի  
 Գլխի արժանի, և մինչ ձեռս առած  
 Տարակուսելով մտածում էի  
 Այս զարմանալի արկածի վերայ,  
 Կինը էլ չը կար: Ամբողջ նորան  
 Քշէլ տարել էր իւր հետ այնտեղից,  
 Եւ այսպէս մընաց սաղաւարտը ինձ:

ՅՈՎՀԱՆՆԱ

(Շտապով ձեռը մեկնելով:)

Տուէք ինձ:

ԲԵՐՏՐԱՆ

Սա ձեզ ի՞նչ հարկաւոր է:  
 Ազճկայ գլխի յարմար զարդ չէ սա:

ՅՈՎՀԱՆՆԱ

(Խլում է նորա ձեռից սաղաւարտը:)

Այս սաղաւարտը ինձ է պատկանում:

ՏԻՔՕ

Վ՛հ, այս աղջիկը ինչքե՞ր է անում:

ԲԱՅՄՕՆԻ

Թողէք իւր կամքին: Շատ վայելուչ է  
 Նորան այս զարդը պատերազմական,  
 Որովհետեւ մի քաջ և այրական  
 Միրա է ամփոփվում նորա կուրծքի մէջ:  
 Յիշեցէք, ինչպէս յաղթեց նա վազրին,  
 Այն զարհուրելի կատաղած գազանին,  
 Որ մեր հօտերը ոչնչացնում էր,  
 Մեր հովիւներին սարսափեցնում էր:  
 Այս առիւծասիրտ աղջիկը կուռեց  
 Մենակ վազրի հետ, որից և խըլեց  
 Գառը, որին նա արդէն տանում էր  
 Արիւնտութեամբ: Որքան կուզէ քաջ  
 Լինէր այն գլուխը, որ վարդարեւ է  
 Այս սաղաւարտը, անշուշտ սորանից  
 Արժանաւոր չէր:

ՏԻՔՕ (Բերտրանին)

Ասացէք, ի՞նչ նոր

Տարաբաղդութիւն յատահել է մեզ  
 Պատերազմի մէջ: Նչ էին պատմում  
 Փախստականները Օրլէանից:

ԲԵՐՏՐԱՆ

Աստուած ինքն օգնէ մեր թագաւորին  
 Եւ ողորմի մեր տարաբաղդ երկրին:  
 Ձարդուած ենք երկու ճակատամարտում,  
 Ֆրանսիայի մէջն է կանգնած թշնամին.  
 Բոլոր երկիրը մինչև Լօարը  
 Նորա ձեռին է — Եւ հիմա նա իւր  
 Բոլոր սպիտակ մէկտեղ ժողոված,  
 Օրլէան քաղաքն ունի պաշարած:

ՏԻՔՕ

Աստուած, դու օգնիր մեր թագաւորին:

ԲԵՐՏՐԱՆ

Անթիւ հրրազէնք բերուած է այնտեղ.

Եւ ինչպէս ամառը մեղուները  
 Փեթակի բոլորքը բզզում են,  
 Ինչպէս սևացած օդից իջնում է  
 Մորեխի ամպը և մղոններով  
 Մածկում է հողը, այնպէս ծածկել է  
 Օրլէանի շուրջ բոլոր դաշտերը  
 Թշնամիների անհամար զօրքը,  
 Որ բաղկացած է պէսպէս ազգերից.  
 Եւ լեզուների անհասկանալի  
 Խառնուրդից բանակը դարձում է:  
 Որովհետեւ և հրգօր Բուրգունդը,  
 Որ իշխում է շատ երկիրների վրայ,  
 Ժողովել է իւր բոլոր մարդկանցը.  
 Լիւախացոց, նոյնպէս և Լուքսեմբուրգացոց,  
 Հէննացոց, այլև Նամուրի բնակչաց,  
 Երջանիկ Բրաբանտ նահանգի մարդկանց,  
 Եւ շքեղ Գէնացոց, որոնց հագուստն է  
 Թաւիշ ու մետաքս, և Ձէլանդացոց,  
 Որոնց քաղաքները բարձրանում են  
 Ծովի ջրերից. և Հոլլանդացոց,  
 Որոնք կթում են բազմաթիւ հօտեր.  
 Ուտրեխտացոց, նոյն խի վեհ Ֆրիսլանդացոց,  
 Որոնք նայում են դէպ' հիւսիսային  
 Բևեռը երկրի — Գոքա բոլորը  
 Հզօր Բուրգունդի դրօշակի ատին են  
 Եւ կամենում են նուաճել Օրլէան —

ՏԻՔՕ

Ո՛հ, ինչ տարաբաղդ ցաւալի վէճ է,  
 Որ Ֆրանսիայի որդոց գէնքերը  
 Ուղղում է նոյն խի Ֆրանսիայի սրտին:

ԲԵՐՏՐԱՆ

Այլև պատմում են, որ նմանապէս  
 Պառաւ թագուհին, հրապարտ խղարօն,  
 Զրահապատ շրջում է բանակի մէջ  
 Եւ իւր թունաւոր խայթող խօսքերով

Գրգռում է նա զօրականների  
Կատաղութիւնը յատուկ որդու դէմ,  
Որին կրքել է մայրական զրկում:

ՏԻՔՕ

Անիծած լինի, և թող փրչացնէ  
Նորան Տէր Աստուած, ինչպէս փչացրեց  
Երբեմն հրպարտ Իզաբէլային:

ԲԷՐՏՐԱՆ

Այդ պաշարումը կառավարում է  
Պարսպակործան ահեղ Սալբուրին.  
Նորան աջակից են առիւծասիրտ  
Լիօնէլ կոմսը և Տայբօն, որ իւր  
Սրով հընձում է ժողովուրդներին  
Պատերազմի մէջ: Յանդուգն հոգով  
Երգուել են նոքա անպատուութեան տալ  
Քսողաքի բոլոր օրիորդներին

Եւ սրին զօհել սուր կրողներին:

Քաղաքի շուրջը շինել են նոքա  
Չորս բարձր աշտարակ, որոնց վերայից  
Սալբուրի կոմսը արիւնափափազ  
Աչքով համբում է փողոցների մէջ  
Շուտ անցնողներին: Բանի մի հաղար  
Ծանր գնդակներ արգէն ձգուած են  
Խեղձ քաղաքի մէջ: Եկեղեցիքը  
Քարուքանդ արած. և Նօտր-Դամի  
Այն արքայական մէծ աշտարակը  
Խոնարհեցրել է իւր վեհ գրլուխը:  
Այլև ահաններ փոքուած են տակը  
Եւ դժոխքի վերայ կանգնած քաղաքը  
Սարսափած սպասում է ամեն վայրկեան,  
Թէ ահա հասաւ ժամն իւր կործանման:

(Յովհաննան ահանջ է դնում մեծ ուշադրութեամբ և ծածկում է սաղա-  
արտը:)

ՏԻՔՕ

Բայց ո՛ր են Սենտրալ և Լա Հիր  
Իրանց հատուկ քրտով և Ֆրանսիայի

Պաշտպան քաջասիրտ Դիւնուա կոմսը,  
Որ այդքան առաջ գնաց թշնամին:  
Ո՞ր է ինքն արքան և միթէ անհոգս  
Նայում է նա իւր տէրութեան վտանգին,  
Իւր քաղաքների աւերմունքներին:

ԲԷՐՏՐԱՆ

Արքան Շինօնումն է իւր պալատով,  
Զօրութիւն չունի պատերազմելու:  
Զօրավարների անվեհեր ոգին,  
Դիւցազունների բազուկն ի՞նչ օգուտ,  
Երբ որ երկիւղը տիրել է զօրքին:  
Սարսափը, կարծես Աստուծոց ուղարկուած,  
Բռնել է նոյն խի քաջերի սիրտը:  
Զուր են խրախոյաներ կարդում իշխաններ:  
Ինչպէս ոչխարները գայլի առաջ  
Ահով և դողով իրար են կպչում,  
Նոյնպէս և Ֆրանկը իւր մեծ պապերի  
Փառքը մոռացած պատասպարվում է  
Ամբոցների մէջ: Միայն մէկ ասպետ,  
Ինչպէս լսեցի, կազմել է մի գունդ,  
Բազկացած տասնեւինգ դրօշակներից,  
Որով օգնութիւն է գնում արքային:

ՅՈՎՀԱՆՆԱ (շուտ)

Ի՞նչպէս է կոչվում այդ քաջ ասպետը:

ԲԷՐՏՐԱՆ

Բօդրիկուր: Սակայն դժուար թէ նորան  
Յաջողի ծածկուիլ թշնամու աչքից,  
Որ երկու զօրքով հեռամուտ է նրան:

ՅՈՎՀԱՆՆԱ

Այժմ ի՞նչ տեղ է կանգնած ասպետը:

ԲԷՐՏՐԱՆ

Նա վօկուլօրից հեռու է հազիւ  
Օրուայ ճանապարհ:

ՏԻՔՕ (Յովհաննային)

Ի՞նչ ես այն բանը  
Հարցնում, ինչ որ քեզ է վերաբերում:

ԲԷՐՏՐԱՆ

Եւ որովհետեւ թշնամին այդքան  
 Շատ զօրացել է, իսկ թագաւորից  
 Օգնութիւն չըկայ, ապա վճռեցին  
 Վօհուլօրի մէջ անձնատուր լինել  
 Բուրգունդի դքսին: Այսպէս կազատուինք  
 Օտարի լծից, հին արքայական  
 Յեղին մընալով — Գուցէ և թագը  
 Հին ցեղին անցնի, եթէ երբեմն  
 Բուրգունդն ու Ֆրանսիան հաշտուին իրար հետ:

ՅՈՎՀԱՆՆԱ. (ողտորւած)

Ո՛չ, մենք չենք հաշտուի. մենք չենք կամենում  
 Անձնատուր լինել: Փրկիչը մօտ է:  
 Նա պատրաստուած է պատերազմելու,  
 Եւ Սրբէանի դաշտերի վերայ  
 Թշնամու բաղդը պիտի վերջանայ:  
 Արդէն լցուած է նորա չափը և  
 Հնձելու պատրաստ: Կոյն իւր մանգաղով  
 Կը կտրէ նորա հպարտութիւնը  
 Եւ վայր կը ձգէ երկնքից նորա  
 Փառքը, որ նա բարձր կախել է նոյն իսկ  
 Աստղերի վերայ: Գուք մի՛ վհատիք,  
 Մի՛ փախչէք: Մինչև հաճարը հասնի  
 Արտերում, մինչև լուսինը լրանայ,  
 Եւ անդլեական ոչ մի երիվար  
 Պիտի չըլսմէ շքեղ Լուարի  
 Անոյշ ջրերից:

ԲԷՐՏՐԱՆ

Ա՛խ, էլ չեն լինում

Այժմ հրաշքներ:

ՅՈՎՀԱՆՆԱ.

Այո՛, լինում են:

Սպիտակ աղանի արծուի քաջութեամբ  
 Կը յարձակուի այն անդղերի վերայ,  
 Որոնք հայրենիքը պատառում են:

Նա կը կործանէ հպարտ Բուրգունդին,  
 Իւր հայրենիքը դաւաճանողին,  
 Այն հարիւրթեւեան, այն երկնքի դէմ  
 Կռուող Տալբօին, և այն սրբապիղծ  
 Սալբուրի կոմսին, բոլոր յանդուզն  
 Կղղեցններին նա իւր առաջը  
 Կըքչէ ինչպէս ոչխարի մի հօտ:  
 Նորա հովանին կը լինի Աստուած,  
 Որ դործիք կընարէ մի թոյլ արարած,  
 Մի քնքոյշ աղջիկ և նորա ձեռով  
 Կը փառաւորուի, որովհետեւ նա  
 Ամենազօր է:

ՏԻԲՕ

Այս ի՞նչ ողի է,

Որ այս աղջկան յափշտակում է:

ԲԱՅՄՕՆԴ

Այդ սաղաւարտն է, որ նորան այդպէս  
 Ոգեւորում է: Նայեցէք, հայր Արի,  
 Ձեր աղջկան, տեսէք, ինչպէս աչքերը  
 Փայլատակում են, այտերը վառվում:

ՅՈՎՀԱՆՆԱ

Այս տէրութիւնը պիտի կործանուի՞.  
 Եւ այս երկիրը, որ փառքի տունն է,  
 Որի նմանը չէ լուսաւորում  
 Պայծառ արևը իւր ընթացքի մէջ,  
 Այս երկիրը, որ աշխարհի դրախտն է,  
 Որ Տէր Աստուածը սիրում է ինչպէս  
 Իւր աչքի բիրը, պիտի օտարի  
 Շղթաներ կըրէ: — Այստեղ կործանուեց  
 Հեթանոսների կուռ զօրութիւնը,  
 Այստեղ կանգնեցաւ փրկութեան նշան  
 Առաջին Խաչը, այստեղ է հանգչում  
 Աճիւնը մեր սուրբ Լուգովիկոսի,  
 Այն երկրէ որդիքը նուաճեցին  
 Երուսաղէմի:

ԲԵՐՏՐԱՆ

Լսեցէք, թէ ինչ  
Բաներ է խօսում: Որտեղից է այս  
Բարձր յայտնութիւնն: Հայր Արի, Աստուած ձեզ  
Պարգևել է մի հրաշալի դուստր:

ՅՈՎՀԱՆՆԱ

Եւ այսուհետեւ պիտի չունենանք  
Մեր արքաները, մեր բնիկ տէրը:—  
Եւ թագաւորը, որ միշտ անմահ է,  
Պիտի վերանայ աշխարհի միջեց—

Որ պաշտպանում է արօրն ու արօտ  
Եւ մեր դաշտերը պտղաբեր շինում,  
Որ ազատութիւն շնորհեց սարուկներին,  
Որ քաղաքացոց սիրով ժողովեց  
Իւր աթոռի շուրջ, որ տկարներին  
Պաշտպանում է և չարերին պատժում,  
Որին անծանօթ է չար նախանձը,  
Լինելով ինքը ամենամեծը

Որ ինքը մարդ է և նոյն ժամանակ  
Գթութեան հրեշտակ այս երկրի վերայ—  
Թագաւորների ոսկեփայլ գահը  
Մի ապաստան է խեղճերի համար  
Այնտեղ բազմած են զօրութիւնը և  
Ողորմութիւնը — Յանցաւորն այնտեղ  
Ահից գողում է, այն ինչ արդարը  
Վստահ մօտենում և խաղ է անում  
Առիւծների հետ գահի բոլորքը:

Բայց զրսից եկող մի օտար արքայ,  
Որի պապերի գերեզմանները  
Այս հողի մէջ չեն, կարող է սիրել  
Նա այս երկիրը: Նա, որ այս երկրի  
Մանուկների հետ մանուկ չէ եղել,  
Նա որի սրտին խորթ է մեր լեզուն,  
Միթէ կարող է նա մեզ հայր լինել:

ՏԻՐՕ

Աստուած պաշտպանէ մեր հայրենիքը

Եւ թագաւորին: Մենք խաղաղասէր  
Գիւղացիներ ենք, չըզիտենք ոչ սուր  
Բանեցնել և ոչ նժոյգ խաղացնել:

Մենք պիտի սպասենք լուռ հնազանդութեամբ  
Թէ յաղթութիւնը որին կրտայ մեզ  
Իբրև թագաւոր: Պատերազմների  
Բաղդը կախուած է Աստուծոյ վճռից.  
Եւ մեր տէրն է նա, որ սուրբ օծումը  
Կընդունի և թագ կրկապէ թէյսում:—  
Եկէք գործի գնանք և ամեն մէկը  
Թող ներկայի վրայ միայն մտածէ:  
Թող նոքա, որոնք աշխարհի տէրն են,  
Աշխարհի համար միմեանց հետ վիճեն:

Մենք հանդարտ սրտով կարող ենք նայել  
Աւերմունքներին, որովհետեւ մեր  
Մշակած հողը կարող է զիմնալ  
Ամեն փոթորիկ: Թող ոոցը լափէ  
Մեր աւանները, թող մեր արտերը  
Ոտնակոխ անեն նոցա ձիերը:  
Կրգայ նոր գարուն, նոր հունձ կրբերէ  
Եւ շուտ կրկանգնեն մեր խրճիթները:  
(Բոլորը դուրս են գնում բացի Յովհաննայից:)

1002  
5568

ՉՈՐՐՈՐԴ ԵՐԵՆԻՅԹ



ՅՈՎՀԱՆՆԱ (մենակ)

Մնաք բարով, լեռներ, սիրուն արօտներ,  
Դուք էլ մնաք բարով, խաղաղ հովիտներ:  
Ես էլ չեմ դալու այստեղ ման գալու,  
Վերջին բարովս եկայ ձեզ տալու:  
Իմ ջրած դաշտեր, իմ տնկած ծառեր,  
Աճեցէք զուարթ շատ ու շատ օրեր:  
Մնաք բարով, ծմակներ, դուք ցուրտ աղբիւրներ,

Եւ դու, արձագանք, հովտիս անոյշ ձայն,  
Որ միշտ երգերիս պատասխանում էր.  
Գնում է Յովհաննան անդարձ յաւիտեան:

Իմ ուրախութեան անմոռաց տեղեր,  
Ձեզնից յաւիտեան այժմ հեռանում եմ.  
Սար, ձոր, անապատ ցիր եղէք, գառներ,  
Անտէր անհովիւ ես ձեզ թողնում եմ:  
Մյժմ մի ուրիշ հօտ պիտի հովուեմ  
Վըտանգի դաշտում, արիւնով ջրած,  
Այսպէս ինձ ողին հրաման է տուած:  
Ունայն ցանկութեամբ ես զրգուուած չեմ:

Նա, որ բորբոքուող թփիցը խօսեց  
Մարգարէի հետ ֆորէբի ծայրին  
Եւ փարաւօնին դիմել հրամայեց,  
Որ երբեմն համեստ պատանի Գաւթին  
Հովուին, իւր համար զինուոր նա ընտրեց,  
Որ միշտ ողորմած էր հովիւներին,  
Նա ինձ հրամայեց ծառիս ճիւղերից.  
«Գընա՛, երկրի վրայ վկայիր դու ինձ.»

«Մարմինդ պատիր ծանր զըրահով,  
Պողպատով ծածկիր քո փափուկ կուրծքը.  
Երկրաւոր սէրը ունայն ըղձերով  
Չըվառէ երբէք անարատ սիրտդ:  
Երբէք չի փայլի ճակատիդ պսակ,  
Գրկիդ չի խաղայ գեղեցիկ զաւակ.  
Բայց կը պսակեմ փառքով յաղթութեան  
Բոլոր կանանց մէջ ես քեզ յաւիտեան»:

«Երբ կը վհատեն քաջերն էլ կոփում,  
Երբ մօտ է ահա Ֆրանսիայի վերջը,  
Առաջ կը տանես դրօշակը դաշտում  
Եւ ինչպէս արտի քաջ հնձարարը  
Գեանին կը զարկես հպարտ յաղթողին,

Կը քանդես նորա բաղդի անիւրը,  
Կազատես Ֆրանսիան դու այլեւ Ռէյմսը,  
Ուր կը թագադրես արքայ Կարլոսը:

Երկինքը նշան էր խոստացել ինձ,  
Ահա՛ ուղարկեց այս սաղաւարտը.  
Երկնային ուժով նորա երկաթից  
Կարծես թէ յանկարծ վառուեց իմ սիրտը:  
Դէպի պատերազմ քաշում է սա ինձ,  
Կարծես թռցնում է ինձ կռուի դաշտը:  
Կռուի գոռոցը արդէն լսվում է  
Եւ պատերազմի փողը հնչում է:  
(Դուրս է գնում:)

# ԱՌԱՋԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

կարչու քազաւորի քանակը շինեօնում

## ԱՌԱՋԻՆ ԵՐԵՒՈՅԹ

ԳԻՒՆՈՒԱ և ԳԻՒ ՇԱՏԷԼ

ԳԻՒՆՈՒԱ

Ո՛չ, էլ աւելի չեմ կարող տանել:  
 Ես կը հրաժարուիմ այս թագաւորից,  
 Որ վատթարութեամբ յուսահատվում է:  
 Սիրտս կուրծքիս մէջ արնաքամվում է,  
 Եւ ջերմ արտասուք ուզում եմ թափել,  
 Տեսնելով, ինչպէս աւազակները  
 Մրով բաժնում են ֆրանսիան իրար մէջ.  
 Եւ մեր այն ազնիւ հին քաղաքները  
 Մէկ մէկ յանձնում են թշնամիներին  
 Իրանց ժանգոտած բանալիները,  
 Այն ինչ մենք անգործ, ի զուր վատնում ենք  
 Այստեղ թանգազին մեր ժամանակը:  
 — Ինձ լուր է հասնում, թէ Ծրէանը  
 Վտանգի մէջ է, շտապով գալիս եմ  
 Այստեղ հեռաւոր Նորմանդիայից,  
 Յոյս ունիմ գտնել թագաւորին իւր  
 Զօրքովը պատրաստ պատերազմելու,  
 Եւ ի՛նչ եմ գտնում — Չեռնածուներով,  
 Տրուբադուրներով պատած, զբաղուած է

Նուրբ հանելուկներ մեկնաբանելով —  
 Եւ իւր Սօրէլին հանդէսներ տալով,  
 Կարծես տէրութիւնը վայելում է  
 Ամենանդորր խաղաղութիւն:  
 — Կօննէտաբը այս խայտառակութեան  
 Չը կարողացաւ երկար համբերել  
 Եւ թողեց գընաց — Ես էլ կը թողնեմ  
 Նորան յանձնելով իւր ճակատագրին:

ԳԻՒ ՇԱՏԷԼ

Ահա՛ ինքն արքան գալիս է այստեղ:

## ԵՐԿՐՈՐԴ ԵՐԵՒՈՅԹ

ԿԱՐԼՈՍ ԹԱԳԱԻՈՐ և ԱՌԱՋԻՆ ՆԵՐՐԸ

ԿԱՐԼՈՍ

Կօննէտաբը իւր սուրն ուղարկել է  
 Եւ հրաժարվում է ինձ ծառայելուց —  
 Փնփնք Աստուծոյ, որ՝ ազատուեցանք այդ  
 Չանձրալի մարդուց, որ անտանելի  
 Կերպով ուզում էր իշխել մեզ վերայ:

ԳԻՒՆՈՒԱ

Մարդը թանգ արժէ այս ժամանակում,  
 Պէտք չէ կորցնել թեթեւմտութեամբ:

ԿԱՐԼՈՍ

Այդպէս խօսելով դու միայն ուզում ես  
 Ինձ հակառակել: Երբ նա այստեղ էր,  
 Երբէք բարեկամ չէիր դու նորան:

ԳԻՒՆՈՒԱ

Հպարտ, ձանձրալի, յիմար մարդ էր նա,  
 Չը զիտէր լուել իւր ժամանակին —  
 Սակայն այս անգամ շատ լաւ իմացաւ.  
 Իւր ժամանակին թողեց ու գընաց,  
 Տեսնելով, որ էլ պատուի յոյս չըմնաց:

ԿԱՐԼՈՍ

Կատակ ես անում: Արա՛, չեմ ուզում  
 ես քեզ խանգարել: — Դիւ Շատէլ, Բէնէ  
 Ծեր թագաւորի այս դեսպանները  
 Շատ անուանի են իրանց երգերով —  
 Լաւ պատուիր նոցա և ամեն մէկին  
 Ընծայ տուր ինձնից մի ոսկէ շղթայ:  
 (Դիւնուաին)

Ի՞նչ ես ծիծաղում:

ԴԻԻՆՈՒԱ

Որ քո բերանից

Առատ թափում ես ոսկէ շղթաներ,

ԴԻԻ ՇԱՏԵԼ

Գանձարանիդ մէջ էլ փող չը կայ, աէր.

ԿԱՐԼՈՍ

ձարի՛ր — Սոցա պէս ազնիւ երգիչներ  
 Պէտք է իմ դռնից պատուով հեռանան,

Նոքա երգերով կանաչեցնում են  
 Չոր գաւաղանը, դալար ճիւղերով  
 Չարդարում են մեր անպտուղ թաղը.  
 Նոքա իշխում են մեզ հետ հաւասար,  
 Թեթեւ իղձերի վերայ հաստատում  
 Իրանց գահերը, և նոցա խաղաղ  
 Իշխանութիւնը չունի սահմաններ:  
 Եւ այդ պատճառով պէտք է երգիչը  
 Թագաւորի հետ միասին զընայ,  
 Նոքա երկուան էլ բոլոր մարդկանց մէջ  
 Ապրում են բարձր աստիճանի վրայ:

ԴԻԻ ՇԱՏԵԼ

Տէր իմ և արքայ, ես մինչև հիմա  
 Խընայում էի քո լսելիքը,  
 Քանի հընար կար. բայց մեծ կարիքը  
 Վերջապէս լեզուիս կապերն արձա՛կեց:  
 — Գու պարզեւելու էլ ոչինչ չունիս:

Ո՛հ, չունիս նոյն իսկ վաղուան ապրուստդ:  
 Բողոր աղբիւրները հարստութեան  
 Ցամաքել են և զանձարանիդ մէջ  
 Մի հատ դրամ չը կայ: Դեռ չենք վճարել  
 Զօրքին իւր վարձը: Նա արտնջելով  
 Սպառնում է քաշուիլ — նոյն իսկ քո տունը,  
 Տէր արքայ, հազիւ մեծ դժուարութեամբ  
 Կարողանում եմ չըքաւոր կերպով  
 Պահպանել, բայց ոչ իշխանավայել:

ԿԱՐԼՈՍ

Գրաւ դիր արքունի եկամուտներս,  
 փոխառութիւն առ զբաւատներից:

ԴԻԻ ՇԱՏԵԼ

Տէր, քո մաքսերը, եկամուտները  
 Արդէն գրավուած են երեք տարով:

ԴԻԻՆՈՒԱ

Եւ այդ միջոցին ձեռիցը կերթան  
 Գրաւն ու երկիրը:

ԿԱՐԼՈՍ

Բայց մեզ մտում են  
 Դեռ շատ գեղեցիկ հարուստ նահանգներ:

ԴԻԻՆՈՒԱ

Քանի որ Աստուծոն և Տալթօի սրին  
 Հաճել է այդ: Երբոր թշնամին  
 Կառնէ Օրլէան, կարող ես Բէնէ  
 Թագաւորիդ հետ ոչխար արածել,

ԿԱՐԼՈՍ

Գու միշտ ծաղրում ես այդ թագաւորին,  
 Բայց այդ աներկիր իշխանը այսօր  
 Արքայավայել պարզեւ շնորհեց մեզ:

ԴԻԻՆՈՒԱ

Միայն նէպօլի թագը չը շնորհէ,  
 Ոչ, ի սէր Աստուծոյ, որովհետեւ այդ  
 Թագը ծախվում է, ինչպէս լսել եմ,

ինչ նա սխեղ է ոչխար արածել:

ԿԱՐԼՈՍ

Կա մի զուարճալի խաղ է, մի՞հանդէս,  
 Որ նա տալիս է ինքը իւր սրտին,  
 Հիմնելով անմեղ, մաքուր մի աշխարհ  
 Այս կոշտ, վայրենի իրական կեանքում:  
 Բայց զիտե՞ս, ի՞նչ է նորա ուզածը —  
 Ուզում է դարձնել հին ժամանակը,  
 Երբ քնքոյշ սէրը թագաւորում էր,  
 Որ ասպետներին ոգևորում էր,  
 Եւ ազնիւ կանայք դատար որ նստած  
 Իրանց նուրբ խելքով վճիռներ տալիս.  
 Ահա այդ անցած ժամանակներում  
 Ապրում է հիմա զուարթ ծերունին:  
 Նա ուզում է այդ ժամանակները,  
 Որոնք զովվում եմ հին երգերի մէջ,  
 Ինչպէս երկնքից իջած մի դրախտ,  
 Կրկին նորոգել այս երկրի վերայ:  
 Նա սիրոյ համար պալատ է հիմնել,  
 Ուր պիտի դիմեն ազնիւ ասպետներ,  
 Ուր պիտի փառքով բազմեն զգաստ կանայք,  
 Ուր մաքուր սէրը պիտի բընակի.  
 Եւ ինձ կարգել է նա սիրոյ իշխան:

ԴԻԻՆՈՒՍ

Այնպէս չեմ ստեղծուած, որ կարողանամ  
 Անարգել սիրոյ իշխանութիւնը:  
 Ես ինքս սիրոյ անուամբ եմ կոչվում,  
 Նորա որդին եմ. ժառանգութիւնս  
 Բողոքը նորա տէրութեան մէջն է.  
 Իմ հայրը իշխան էր Օրլէանի,  
 Ոչ մի կընոջ սիրտ չէր դիմնում նորան,  
 Բայց և անառիկ չէր և ոչ մի բերդ:  
 Թէ սիրոյ իշխան ուզում ես կոչուիլ,  
 Պէտք է որ լինիս քաջերի քաջը:  
 Ինչպէս յայտնի է ինձ հին դրքից,

Սէրը անբաժան էր քաջութենից,  
 Եւ սեղանի շուրջ տեղ էին բռնում  
 Ոչ թէ հովիւներ, այլ դիւցազուններ:  
 Ո՛վ որ քաջ պաշտպան չէ զեղեցկութեան,  
 Նորա պարգևին է միշտ անարժան:  
 Ահա ասպարէզ: Կուռիւր հայրենի  
 Քո թագի համար, իբրև քաջ ասպետ  
 Սըրով պաշտպանիւր ժառանգութիւնդ  
 Նոյնպէս և ազնիւ կանանց պատիւը —  
 Եւ երբ թշնամու արեան հոսանքից  
 Սեփական թագդ կըլիս կրկին,  
 Ապա իրաւունք կունենաս դընել  
 Սիրոյ անթառամ պսակը քո զլխին:

ԿԱՐԼՈՍ

(Ներս մտնող մանկաւիկին.)

Ի՞նչ կայ:

ՄՍՆԿԼԱԻԿ

Տէր արքայ, դուրսը սպասում են  
 Խորհրդականները Օրլէանից,  
 Եւ աղաչում են, որ լսես նոցա:

ԿԱՐԼՈՍ

Գնա՛, ասա թող գան:

(Մանկաւիկը դուրս է գնում.)

Նորա օգնութիւն

Կը խնդրեն ինձնից, բայց ի՞նչպէս օգնեմ,  
 Երբ որ օգնութեան ինքս կարօտ եմ:

ԵՐՐՈՐԴ ԵՐԵՒՈՅԹ

ԵՐ Ե Ք Ի ՈՐ Հ Ր Դ Ա Կ Ա Ն Ն Ե Ր Ե Ի Ա Ռ Ա Ջ Ի Ն Ն Ե Ր Ը

ԿԱՐԼՈՍ

Բարով էք եկել, ո՛վ հաւատարիմ  
 Քաղաքացիներ իմ Օրլէանից,

Ի՞նչ լուր էք բերում ինձ իմ սիրելի  
Քաղաքից: Արդեօք շարունակում է  
Նա սովորական քաջութեամբ դէմ գնել  
Թշնամիներին:

ԽՈՐՀՐԴԱԿԱՆ

Ո՛հ տէր մեր, սաստիկ  
Նեղութեան մէջ ենք, և խեղճ՝ քաղաքի  
կորուստը մօտ է: Արդէն քանդուած են  
Նորա արտաքին ամրութիւնները,  
Եւ ամեն մի նոր յարձակմունքից յետ  
Թշնամին նոր նոր տեղեր է զբաւում:  
Պարիսպների վրայ պաշտպան չըմնաց:  
Շուտ շուտ թշնամու վրայ յարձակուելով  
Շատ քիչ մարդ կրկին վերադառնում է  
Սոփն էլ քաղաքին արդէն սպառնում է,  
Եւ այդ պատճառով կոմս Բօշպիէրը,  
Բերդի զլխաւոր հրամանատարը,  
Կարիքից ստիպուած թշնամու հետ այս  
Պայմանը կապեց հին սովորութեամբ.  
Տասներկու օրից յետոյ կամաւոր  
Անձնատուր լինել, թէ այդ միջոցին  
Չըզայ բաւական զօրք, որ քաղաքը  
Թափէ թշնամուց:

(Գիւնուան սաստիկ բարկութեան նշաններ է յայտնում)

ԿԱՐԼՈՍ

Միջոցը կարճ է:

ԽՈՐՀՐԴԱԿԱՆ

Հիմա եկել ենք քեզ աղաչելու,  
Որ ողորմելով քո խեղճ՝ քաղաքին,  
Շուտով օգնութիւն ուղարկես նորան,  
Թէ չէ անձնատուր կլինի թշնամուն:

ԳԻԻՆՈՒԱ

Մի՞թէ Սէնտրայլը համաձայնեցաւ  
Այդ ամօթալի պայմանին:

ԽՈՐՀՐԴԱԿԱՆ

Ո՛չ, տէր:

Քանի որ քաջը դեռ կենդանի էր,  
Ի հարկէ ոչ ոք չէր համարձակվում  
Խօսել անձնատուր լինելու վերայ:

ԳԻԻՆՈՒԱ

Ուրեմն մեռաւ:

ԽՈՐՀՐԴԱԿԱՆ

Պարսպի առաջ

Ընկաւ զիւցաղնը, պատերազմելով  
Արքայի համար:

ԿԱՐԼՈՍ

Սէնտրայլը մեռաւ:

Ափսոս, նա մենակ մի գունդ զօրք արժէր:

(մտնում է մի ասպետ և մի քանի խօսք է ասում Գիւնուային, որ սաստիկ  
չփոթվում է:)

ԳԻԻՆՈՒԱ

Պակասը լրացաւ:

ԿԱՐԼՈՍ

Ի՞նչ է պատահել:

ԳԻԻՆՈՒԱ

Գուզլաս կոմսն ահա մարդ է ուղարկել,  
Թէ Շօտլանդացիք ապստամբուել են,  
Սպառնում են իսկոյն թողնել բանակը,  
Թէ չտանք այսօր իրանց թօշակը:

ԿԱՐԼՈՍ

Գիւ Շատէլ:

ԳԻԻ ՇԱՏԷԼ (ուսերը վերքաշելով):

Տէր իմ, ես ի՞նչ կարող եմ:

ԿԱՐԼՈՍ

Խոստացի՛ր, գրաւ դիր կէս տէրութիւնս:

ԳԻԻ ՇԱՏԷԼ

Ոչինչ չի օգնի. էլ չեն հաւատում  
Մեր խոստմունքներին:

ԿԱՐԼՈՍ

Ամենաընտիր

Գունդն է իմ զօրքում: Հիմա չըսէտք է  
Նոբա ինձ թողնեն, հիմա չթողնեն:

ԽՈՐՀՐԴԱԿԱՆ (ծունկ խոնարհելով)

Տէր արքայ, օգնիր, մի թողնիր անտէր:

ԿԱՐԼՈՍ

Միթէ կարող եմ գեանից զօրք հանել:

Միթէ կարող է ձեռի ափի մէջ

Արտ մի կանաչել: Մաս մաս արէք ինձ,

Սիրտս հանեցէք և փող շննեցէք

Ոսկու փոխանակ: Ես միայն արիւն

Ունիմ ձեզ համար, ոչ արծաթ և զօրք:

(Նա տեսնում է ներս մտնող Սօրէլին և բազկատարած վաղում է նորա մօտ)

### ՉՈՐՐՈՐԴ ԵՐԵՒՈՅԹ

Ա Գ Ն Է Ս Ս Օ Ր Է Լ, ձեռին մի արկղ, Ա Ռ Ա Ջ Ի Ն Ն Ե Ր Ը

ԿԱՐԼՈՍ

Ո՛վ իմ քաղցր Ագնէս, իմ սիրելի կեանք,  
Գալիս ես, որ ինձ յուսահատութեան  
Ձեռից ազատեմ: Գու իմն ես, և ես  
Քո զիրկն եմ ընկնում: Ոչինչ կորած չէ,  
Քանի դու իմն ես:

ՍՕՐԷԼ

Թանգագին տէր իմ,

(Երկիւղալի հայեացք ձգելով իւր շուրջ)

Արդեօք ուղի՞ղ է, Գիւնուս, Գիւ Շատէլ:

ԴԻԻ ՇԱՏԷԼ

Ափսոս, ուղիղ է:

ՍՕՐԷԼ

Ուրեմն այդքան

Մե՞ծ է կարիքը: Փող չըկայ: Զօրքը

Ուզում է քաշուիլ:

ԴԻԻ ՇԱՏԷԼ

Ափսոս, այդպէս է:

ՍՕՐԷԼ

(տալով նորան արկղը)

Ահա, ահա փող, ահա աղամանդ—

Տարէք, հալեցէք արծաթեղէնս—

Ծախեցէք, գրաւ դրէք իմ ամրոցները—

Պրօվանս նահանգի բոլոր հողերս

Շուտ փող շննեցէք իմ ունեցածը:

Շուտ, մի ուշանաք:

(Ստիպում է գնալ)

ԿԱՐԼՈՍ

Ապա, Գիւնուս,

Ապա, Գիւ Շատէլ, միթէ հարուստ չեմ,

Երբ բոլոր կանանց պըսակի տէրն եմ—

Նա էլ աղնիւ է ծնուած, ինչպէս ես,

Վալուայի տան թագաւորական

Արիւնն էլ նորա արնից մաքուր չէ:

Երկրիս առաջին գահին կարող էր

Նա մի զարդ լինել— բայց նա այդ բանը

Արհամարհում է. ուզում է միայն

Իմ սէրը լինել, իմ սէրը կոչուիլ:

Ե՞րբ է թոյլ տուել, որ մի թանգագին

Պարզե տամ նորան, բացի նորաբաց

Ծաղկից ձմեռուայ մէջ, կամ թէ որ և է

Հագուազիւտ պտուղ: Նա չէ ընդունում

Ինձնից ոչինչ զոհ, իսկ ինքն ամեն բան

Մեծահոգութեամբ զոհ է բերում ինձ.

Վստահանում է արդէն ընկղմող

Բաղդիս հաւատալ իւր բոլոր կայքը:

ԴԻԻՆՈՒԱ

Այո՛, երկուսդ էլ մէկ խելքի տէր էք:

Նա այրուող տան մէջն է ձգում բոլոր

Իւր ունեցածը: Ունայն աշխատանք:  
Նա քեզ չի փրկի, այլ միայն ինքն էլ  
Քեզ հետ կրկորչի—

ՍՕՐԷԼ

Մի հաւատար նրան:

Արդէն տասն անգամ վտահացել է  
Զոհել քեզ համար սեփական կեանքը,  
Եւ բարկանում է, որ ես ուզում եմ  
Զոհել քեզ համար հարստութիւնս:  
Ի՞նչ: Մի՞թէ սիրով չընուիրեցի  
Քեզ այն ամենը, ինչ որ թէ ոսկուց  
Եւ թէ մարգարտից աւելի արժէ:  
Մի՞թէ կարող եմ ես հիմա մենակ  
Բաղդաւոր լինել: Հրաժարուինք բոլոր  
Ունայն զարդերից: Թող ինձ այդ բանում  
Օրինակ տամ քեզ: Քո արքունիքը  
Շինիր մի բանակ և ոսկիդ երկաթ,  
Ամեն բան զոհիր քո թաղի համար:  
Ե՛կ, եկ, միասին տանենք թէ վտանգ,  
Թէ կարօտութիւն: Պատերազմական  
Նժոյզը հեծնենք, այրուինք արևի  
ձառագայթներում. թող մեր ծածկոցը  
Լինին ամպերը և քարերը՝ բարձ:  
Զինուորը սիրով կըտանէ բոլոր  
Նեղութիւններին, երբ որ կըտեսնէ  
Նոյն վեճակի մէջ իւր թագաւորին:

ԿԱՐԼՈՍ (Ժպտելով)

Այժմ տեսնում եմ, որ կատարվում է  
Գուշակութիւնը մի միանձնուհու,  
Որ ինձ կլէրմօնում մարգարէացաւ,  
Թէ մի կնոջ ձեռով կըյաղթեմ բոլոր  
Թշնամիներին, կրկին կըզբաւեմ  
Հայրական թագս: Ես այդ կընոջը  
Որոնում էի թշնամու զօրքում,  
Աշխատում էի մօրս հետ հաշտուել:

Բայց ահա այստեղ է դիւցազնուհին,  
Որի օգնութեամբ ես Րէյան կը մտնեմ.  
Ես իմ Ագնէսի սիրով կըյաղթեմ:

ՍՕՐԷԼ

Բարեկամներդ սըրով կըյաղթես:

ԿԱՐԼՈՍ

Լսում եմ, որ իմ թշնամիները  
Անմիաբան են: Այդ բանից նոյնպէս  
Մեծ յոյս ունիմ ես: Եւ տեղեկացայ,  
Որ անգլիացի հպարտ լորդերը  
Եւ իմ ազգական Բուրգունդի դուքսը  
Ել առաջուայ պէս բարեկամներ չեն—  
Եւ ահա դքսի մօտ ուղարկեցի  
Լա Հիրին իբրև դեսպան իմ կողմից.  
Գուցէ յաջողի ինձ այդ բարկացած  
Իշխանին կրկին ճանաչեցնել իւր  
Պարտաւորութիւնն—Շուտով Լա Հիրը  
Այստեղ կըլինի:

ԴԻԻ ՇԱՏԷԼ (պատուհանից նայելով.)

Արդէն գալիս է:

ԿԱՐԼՈՍ

Բարով դայ: Հիմա խելոյն կիմանանք,  
Արդեօք մենք յաղթուի՞նք պիտի թէ յաղթենք:

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԵՐԵՒՈՅԹ

Լ Ա Հ Ի Ր Ե Ի Ա Ռ Ա Ջ Ի Ն Ն Է Ր Ը

ԿԱՐԼՈՍ (Լա Հիրին դիմաւորելով.)

Լա Հիր, ի՞նչ յոյս ես բերում մեզ համար:  
Կարձ աւա, ինչ որ ասելու ունիս:

Լ Ա Հ Ի Ր

Ոչ ինչ յոյս չըկայ, յոյսդ քո սուրն է:

ԿԱՐԼՈՍ

Չէ՞ հաշտվում մեզ հետ մեծամիտ դուքսը:  
Ո՛հ, ասա, ի՞նչպէս ընդունեց նա քեզ:

ԼԱ ՀԻՐ

Նա պահանջում է, որ դեռ չըխօսած  
Հաշտութեան վերայ, անպայման յանձնես  
Նրան Կիւ Շատէլին, որին նա իւր հօր  
Սպանող է կանչում:

ԿԱՐԼՈՍ

Բայց եթէ նորա

Այդ ամօթալի պայմանը մերժենք:

ԼԱ ՀԻՐ

Ապա հաշտութիւնն անկարելի է:

ԿԱՐԼՈՍ

Չառաջարկեցիր նորան, ինչպէս որ  
Պատուիրեցի քեզ, մենամարտութիւն  
Ինձ հետ Մօնարօի կամուրջի վերայ,  
Ինչտեղ որ նորա հայրը սպանուեցաւ:

ԼԱ ՀԻՐ

Ես քո ձեռնոցը ձգեցի նորան,  
Ասելով, որ դու քո բարձրութենից  
Իջնելով, իբրև ասպետ ուզումես  
Մենամարտել քո տէրութեան համար:  
Բայց նա ինձ ասաց, թէ ամենևին  
Հարկը չէ ստիպում նորան կռուելու  
Այն բանի համար, որ արդէն ունի.  
Բայց թէ ցանկութիւն ունիս կռուելու,  
Օրլէանի մօտ կրգանես նորան,  
Ուր մտադիր է վաղը զընալու,  
Եւ այս ասելով, ծիծաղեց նա և  
Քամակն ինձ արեց:

ԿԱՐԼՈՍ

Մի՞ թէ ոչ մէկ ձայն

Պարլամենտիս մէջ չուզեց պաշտպանել  
Իմ իրաւունքը:

ԼԱ ՀԻՐ

Արդարութիւնը

Պիտի պապանձուի, երբ կատարում է  
Կուսակցութիւնը: Պարլամենտը քեզ  
Եւ քո սերունդը գահազուրկ յայտնեց:

ԳԻՒՆՈՒԱ

Յանդուզն ու հըպարտ է քաղաքացին,  
Երբ որ իրաւունք տալիս են նորան:

ԿԱՐԼՈՍ

Արդեօք փորձեցիր մօրս համոզել:

ԼԱ ՀԻՐ

Քո մօրը:

ԿԱՐԼՈՍ

Այո: Նա ի՞նչ է ասում:

ԼԱ ՀԻՐ

(Մի քանի վայրկեան մտածելուց յետոյ)

Ես թագադրութեան հանդիսի օրը  
Հասայ Սէն Գընի: Բոլոր փարիզցիք  
Չարդարուած էին, կարծես այդ օրը  
Յաղթութեան տօն էր: Ամեն փողոցում,  
Ուր անդիւացի արքան անցնում էր,  
Շինած էր մէկ մէկ յաղթական կամար.  
Ճանապարհի վրայ ծաղիկ էր ցանած,  
Եւ ուրախութեան աղաղակներով,  
Կարծես Յրանսիան մի մեծ յաղթութեան  
Տօն էր կատարում, ամբօխը կառքը  
Նըջապատում էր:

ՍՕՐԷԼ

Եւ ուրախ էին —

Ուրախ, որ նորա վիրաւորում են  
Իրանց բարեխնամ արքայի սիրտը:

ԼԱ ՀԻՐ

Ես տեսայ մանուկ Հարրի Լանկաստրին,  
Որ բազմաձ էր սուրբ Լուդովիկոսի  
Թագաւորական աթոռի վերայ.  
Նորա երկու կողմը կանգնած էին  
Հրպարտ և գոռոզ հօրեղբայրները,  
Բէդֆօրտն ու Գլօստեր, և զահի առաջ  
Չոքած երգվում էր զուքս Փիլիպպոսը  
Հաւատարմութիւն:

ԿԱՐԼՈՍ

Անպատիւ իշխան,

Ո՛հ. վատ անարժան հօրեղբորդի:

ԼԱ ՀԻՐ

Երկչոտ մանուկը դողում էր, երբ որ  
Վերև էր գընում աթոռի բարձր  
Աստիճաններից: Սա վատ նշան է,  
Ասաց ժողովուրդն ու ծիծաղեցաւ:  
Այդտեղ քո մայրը մօտեցաւ նորան —  
Լեզուս կապվում է, որ ասեմ —

ԿԱՐԼՈՍ

Յետո՛յ:

ԼԱ ՀԻՐ

Գրկեց տըղային և ինքն իւր ձեռով  
Բազմեցրեց քո հօր աթոռի վերայ:

ԿԱՐԼՈՍ

Ո՛հ, մայր, մայր:

ԼԱ ՀԻՐ

Նոյն իսկ կատաղի, անսիրտ  
Բուրգունիացիք իսկոյն ամօթից  
Կարմրեցան, երբոր այդ բանը տեսան:  
Մայրդ նկատեց այդ և բարձրաձայն  
Ասաց ժողովին. «Շնորհակալ եղէք,  
Ո՛վ Ֆրանսիացիք, որ փտած բունը  
Պատուաստում եմ ես այս առողջ ձիւղով:

Եւ ազատում եմ ձեզ մի խելացնոր

Հօր վատ զաւակից:

(Թագաւորը երեսը ծածկում է. Ագնէսը վազում է նորա մօտ և գրկում է նորան. բոլոր ներկայ եղող անձինք նշաններով ցոյց են տալիս իրանց զգուանքը:)

ԴԻԻՆՈՒՍ

Գազանասիրտ կին:

ԿԱՐԼՈՍ

(Կարճ լուրթենից յետոյ խորհրդականներին:)

Ահա՛ իմացաք դործի դրութիւնը:

Ել մի՛ ուշանաք, դնացէք Օրլէան:

Գնացէք, ասացէք իմ հաւատարիմ,

Սիրած քաղաքին, որ արձակում եմ

Նրան իւր երդումից: Թող մնածէ իւր

Փրկութեան վերայ, անձնատուր լինի

Բուրգունդի դքսին, որ ըստացել է

«Բարի» անունը, անշուշտ՝ մարդասէր

Աչքով կրնայէ նա նորա վերայ:

ԴԻԻՆՈՒՍ

Ի՞նչ, տէր, ուզում ես թողնե՞լ Օրլէան:

ԽՈՐՀՐԴԱԿԱՆ (ծունկ խոնարհելով:)

Տէր արքայ, ո՛հ մի՛ հրաժարուի՛ր մեզնից,

Եւ հաւատարիմ քաղաքդ մի՛ տար

Անդլիացոց խիստ իշխանութեանը:

Օրլէանը քո թագի մի ակն է:

Եւ ոչ մի քաղաք երբէք նորա պէս

Հաւատարիմ չէր քո ազգատոհմին:

ԴԻԻՆՈՒՍ

Մի՞թէ յաղթուած ենք, Մի՞թէ թոյլ է տուած

Քաղաքը առանց սուր մերկացնելու

Յանձնել թշնամուն: Մի՞թէ ուզում ես

Արիւն չըթափած, միայն թեթև խօսքով,

Այդ ամենալաւ քաղաքը խրել

Ֆրանսիայի սրտից:

ԿԱՐԼՈՍ

Արդէն բաւական

Արիւն թափուեցաւ. բայց աւանդ, ի զուր:  
 Աստուծոյ ձեռք զինուէլ է իմ դէմ:  
 Զօրքս յաղթվում է ամեն ճակատում,  
 Դատապարտուած եմ իմ պարլամէնտում,  
 Մայրաքաղաքս, իմ ժողովուրդը  
 Սիրով ընդունեց հակառակորդիս,  
 Եւ արմենակից ազգականներս  
 Դաւաճանեցին ինձ ու հեռացան —  
 Սեփական մայրս իւր կուրծքի վերայ  
 Օտարի զաւակը սրննդում է:  
 — Լաւ է Լուարի միւս ափը անցնենք,  
 Տեղի տանք Աստծոյ հզօր բազուկին,  
 Որ օգնում է մեր թշնամիներին:

ՍՕՐԷԼ

Աստուած ոչ անէ, որ յուսահատուինք  
 Եւ մեր սեփական երկրից հրաժարուինք:  
 Այդ խօսքը քո քաջ սրտից չը բղխեց.  
 Մօր անբընական արարքը կոտրեց  
 Արքայիս սիրտը: Բայց արիացիր,  
 Կռուիր քաջութեամբ քո չար բաղդի դէմ,  
 Որ կատաղաբար հալածում է քեզ:

ԿԱՐԼՈՍ

(Մռայլ մտածմունքների մէջ ընկղմած)  
 Միթէ ուղիղ չէ, որ մի սոսկալի  
 Օրհաս է սպասում վալուայի ցեղին:  
 Աստուած մերժել է այդ ցեղը: Մօրս  
 Մոլի ընթացքը դեւերին մատնեց  
 Այս ընտանիքը. հայրս քսան տարի  
 Խիլացնոր ապրեց, երեք եղբայրս  
 Մահը փչացրեց: Աստուած վճռել է  
 Ջնջել վեցերորդ կարլոսի տունը:

ՍՕՐԷԼ

Ո՛չ, նա քեզանով պիտի նորոգուի,  
 Միայն մի՛ կարիր յոյսդ քեզանից —  
 Զուր չէր, որ բարի բաղդը պահպանեց

Քեզ, որ տարիքով փոքր էիր բոլոր  
 Քո եղբայրներից, և անակնկալ  
 Կերպով բարձրացրեց այս գահի վերայ:  
 Աստուած պահպանեց քեզ, որ բժշկես  
 Քո հայրենիքի ստացած վերքերը:  
 Դու պիտի հանգցնես այս քաղաքական  
 Կռուի բոցերը: Սիրտս ասում է,  
 Որ խաղաղութիւն կրտաս այս երկրին  
 Եւ Ֆրանսիայի համար կրդառնաս  
 Դու նոր հիմնադիր:

ԿԱՐԼՈՍ

Ո՛չ, ես չեմ կարող:

Այս փոթորկալեց, խիստ ժամանակը  
 Պահանջում է մի ճարտար ղեկավար:  
 Խաղաղ ժողովուրդ կարողեմ այն  
 Ես բաղդաւորել. բայց մի ապստամբ  
 Եւ չար ժողովուրդ չեմ կարող զսպել,  
 Եւ ատելութեամբ փակուած սրտերը  
 Չեմ կարող երբէք սրտով բաց անել

ՍՕՐԷԼ

Տէր, ժողովուրդը կուրացած է և  
 Սուտ յոյսով խաբուած, բայց շուտով կանցնի  
 Այդ թմրութիւնը: Հեռու չէ օրը,  
 Երբ պիտի զարթի Ֆրանսիի սրտի մէջ  
 Խոր արմատացած սէրը, որով նա  
 Սիրել է բընիկ թագաւորներին.  
 Նորից կրգարթի նախանձը և հին  
 Ատելութիւնը, որ թշնամութեամբ  
 Միշտ բաժանում էր իրարից երկու  
 Ազգութիւնները: Հպարտ յաղթողին  
 Կրկործանէ իւր ճակատագիրը:  
 Ուրեմն պէտք չէ շուտ պատերազմի  
 Դաշտից հեռանալ. պէտք է քաջութեամբ  
 Կռուիս ամեն մի քայլ հողի համար  
 Եւ Օրլէանը պաշտպանես ինչպէս

Սեփական կուրծքդ: Լաւ է ընկղմես  
Բոլոր նաւերը, այրես, կործանես  
Ողջ կամուրջները, որ աէրութիւնդ  
Բաժնող Լուարի միւս ափը չանցնես:

ԿԱՐԼՈՍ

Ես արի, ինչ որ միայն կարող էի:  
Մենամարտութիւն առաջարկեցի  
Իմ թագի համար — բայց չընդունեցին:  
Ի զուր վասնումեմ իմ ժողովուրդի  
Կեանքը, և ի զուր մոխիր են դառնում  
Իմ քաղաքները: Մի՞թէ ես պէտք է  
Այն անսիրտ մօր պէս թոյլ տամ, որ սըրով  
ձեղքեն զաւակս. լաւ է նորանից  
Կըհրաժարուիմ ես. միայն թէ ապրի:

ԴԻԻՆՈՒԱ

Տէր, մի՞թէ այդպէս խօսել վայել է  
Մի թագաւորի: Ո՞վ կըհրաժարուի  
Այդպէս մի թագից: Յետին հպատակդ  
Անգամ զոհում է ստացուածք և արիւն  
Իւր զաղափարին, իւր ատելութեան  
Իւր սիրոյ համար: Կուսակցութիւններ  
Սկսում են կազմուիլ, երբ քաղաքական  
Կռուի արիւնտա դրօշը պարզվում է:  
Երկրազորք իւր արօրն է թողնում,  
Կինն իւր իլիկը. պատանի և ծեր  
Ձէնք են վեր առնում, քաղաքացին իւր  
Քաղաքը վառում և երկրազորք  
Մշակած արտերը, որ քեզ այդպէսով  
Վնասէ կամ օգնէ և առաջ տանէ  
Իւր համոզմունքը. ոչ ինչ չէ խնայում  
Ոչ էլ սպասում է, որ իրան խնայեն,  
Երբ որ պատիւը պահանջում է այդ,  
Երբ նա իւր Աստծու կամ կուռքի համար  
Պատերազմում է: Գուէլ հրաժարուիս  
Քո այդ կանացի ցաւահցութենից:

Որ անվայել է արքայի սրտին:  
Թող շարունակուի պատերազմն, ինչպէս  
Որ նա սկսուել է. Գուէլ չես պատճառը  
Նորա բորբոքման: Այս է աշխարհի  
Բաղդն ու օրէնքը, որ ժողովուրդը  
Պէտք է զոհ լինի արքայի համար:  
Ֆրանկն այդ օրէնքը լաւ գիտէ և միշտ  
Հնազանդ է նորան: Մի ազգ, որ սիրով  
Ամեն ինչ զոհում չէ պատուի համար,  
Նախատելի է, անպիտան, վատթար:

ԿԱՐԼՈՍ (խորհրդականներին)

Ուրիշ պատասխան մի՛ սպասէք ինձնից.  
Աստուած օգնէ ձեզ, ես անկարող եմ:

ԴԻԻՆՈՒԱ

Թող միշտ յաղթութեան Աստուածը դարձնէ  
Երեսը քեզնից, ինչպէս դարձնում ես  
Այժմ երեսդ քո հայրենիքից:  
Ինչպէս որ ինքդ քեզ ուրանում ես,  
Ես էլ չեմ ուզում էլ ծառայել քեզ:  
Ոչ թէ Անգլիայի և Բուրգունդիայի  
Միացած ոյժը, այլ քո սեփական  
Փոքրոգութիւնն է, որ քեզ աթուղի  
Գահավիժում է: Հերոսներ էին  
Միշտ Ֆրանսիայի թագաւորները,  
Բայց դու ծնուել ես թոյլ և անարի:

(խորհրդականներին)

Արքան ձեզանից ձեռն է վեր առնում.  
Բայց ես կըթռչիմ դէպի Օրլէան,  
Որ թաղուիմ նորա աւերակներում.  
(Ուզում է գնալ Ագնես Սօրէլը բռնում է նորան.)

ՍՕՐԷԼ (թագաւորին)

Ո՛հ, մի՛ թողնիր, որ այդպէս բարկացած  
Գընայ քեզանից: Նա կոշտ է խօսում,  
Բայց սիրտը մաքուր է ինչպէս ոսկի:

Եւ դա այն սիրտն է, որ քեզ սիրում է,  
 Որ միշտ քեզ համար արիւն է թափել:  
 Եկէք, Դիւնուա, խոստովանեցէք,  
 Որ տաքանալով ազնիւ բարկութեամբ,  
 Ձեր չափը անցաք — խակ դու, տէր, ներքի  
 Քո բարեկամի սաստիկ խօսքերին:  
 Ո՛հ, եկէք, եկէք շուտով միացնեմ  
 Ես ձեր սրտերը, քանի որ դեռ ևս  
 Անշեջանելի կրօնի չէ դարձել  
 Ձեր բարկութիւնը:

ԿԱՐԼՈՍ (Դիւ Շատէլին)

Պէտք է Լուարի

Միւս ամիը անցնենք: Թող նաւը տարուի  
 Իմ կարասիքը:

ԴԻԻՆՈՒԱ (չուտ Սօրէլին)

Հիմա մնա՞ք բարով:

(Նա շուտ հեռանում է. խորհրդակցանքը հետևում են նորան:)

ՍՕՐԷԼ

(Յուսահատութեամբ ձեռները կցելով:)

Մենք բոլորովին մենակ կըմնանք,  
 Եթէ նա զընայ: Լա Հիր, շտապեցէք,  
 Աշխատեցէք, որ մեղմացնէք նորան:  
 (Լա Հիրը դուրս է գնում:)

### ՎԵՑԵՐՈՐԴԻ ԵՐԵԻՈՅԹ

ԿԱՐԼՈՍ, ՍՕՐԷԼ, ԴԻԻ ՇԱՏԷԼ

ԿԱՐԼՈՍ

Բայց մի՞թէ թազը միակ բարիքն է,  
 Եւ այդքան ծանր է նորանից զրկուիլ:  
 Ո՛չ, ո՛չ, մի այլ բան կայ, որ ինձ համար  
 Աւելի ծանր է և անտանելի:  
 Այս յանդուգն անձանց կամքին հնազանդուիլ,

Կախումն ունենալ հպարտ, ինքնակամ  
 Հպատակներից, ահա այս է, որ  
 Աւելի ծանր է և դառն է ազնիւ  
 Մի սրտի համար:

(Դիւ Շատէլին՝ որ տարակուսած կանգնած է)

Արա՛, ինչպէս որ

Պատուիրեցի քեզ:

ԴԻԻ ՇԱՏԷԼ (ծռակ խոնարհելով)

Ողորմած արքայ:

ԿԱՐԼՈՍ

Արդէն վճռել եմ: Մի հակառակիր:

ԴԻԻ ՇԱՏԷԼ

Հաշտուիր Բուրգունդի դքսի հետ, տէր իմ,  
 Թէ չէ այլ հընար չունիս փրկութեան:

ԿԱՐԼՈՍ

Ուզում ես, որ ես հաշտուիմ նորա հետ.  
 Չէ որ արիւնովդ պիտի կնքեմ  
 Խաղաղութիւնը:

ԴԻԻ ՇԱՏԷԼ

Ահա իմ գլուխը,

Որ ես քեզ համար երբէք ինայել չեմ  
 Պատերազմներում և որ այժմ սիրով  
 Պատրաստ եմ դնել դահճի կացնի տակ:  
 Արքայ, կատարիր դքսի պահանջը,  
 Մատնիր ինձ նորա վրէժխնդրութեանը,  
 Թող իմ արիւնը ջնջէ ձեր միջի  
 Ատելութիւնը:

ԿԱՐԼՈՍ

(Սիրտը շարժուած և անխօս նայում է նորան մի քանի վայրկեան:)

Մի՞թէ իրաւ է:

Մի՞թէ այնքան վատ է իմ գրութիւնը,  
 Որ մինչև անգամ բարեկամներս,  
 Որոնք իմ սիրտը լաւ են ճանաչուում,  
 Ուզում են, որ ես խայտառակութեան

Միջոցով հասնեմ իմ փրկութեանը:  
Հիմա տեսնում եմ իմ խոր անկումը,  
Որովհետև իմ ազնուութեանը  
Էլ չեն հաւատում:

ԴԻԻ ՇԱՏԷԼ

Մտածիր, արքայ:

ԿԱՐԼՈՍ

Էլ բան մի՛ ասիր: Մի՛ զայրացիր ինձ:  
Տապը աէրութիւն պատրաստ եմ կորցնել,  
Բայց բարեկամիս կեանքը կրկնայեմ:  
Արա՛, ինչպէս որ հրամայեցի քեզ:  
Գընա՛, նաւը տար իմ կարասիքը:

ԴԻԻ ՇԱՏԷԼ

Իսկոյն ամեն բան պատրաստ կրկնի:  
(Վեր է կենում և դնում է: Ազնէս Սօրէլը սաստիկ լալիս է:)

### ԵՕԹՆԵՐՈՐԴ ԵՐԵԻՈՅԹ

ԿԱՐԼՈՍ ԵՒ ՍՕՐԷԼ:

ԿԱՐԼՈՍ (Նորա ձերը բռնելով):

Մի՛ լար, իմ Ազնէս: Լօտրի միւս կողմն էլ  
կաց մի ֆրանսիա: Այնտեղ աւելի  
երջանիկ կապրինք: Անամպ մի երկինք  
Ժպտում է այնտեղ, հոյ՛ը թեթեւ է,  
Եւ ժողովուրդը համեստարարոյ:  
Այնտեղ հնչում են միշտ անոյշ երգեր  
Այնտեղ ծաղկում են կեանքն ու քնքոյշ սէր:

ՍՕՐԷԼ

Ա՛խ, ինչե՛ ես այս դառն օրը տեսայ,  
Նրբ թագաւորը աքսոր պիտի զնայ.  
Որչին հայրական ամնից պիտ գաղթէ,  
Իւր օրրոցին քամակը դարձնէ:

Ո՛վ անոյշ երկիր, որ այժմ թողնում ենք,  
Էլ քեզ յաւիտեան մենք տեսնելու չենք:

### ՈՒԹԵՐՈՐԴ ԵՐԵԻՈՅԹ

ԼԱ ՀԻՐԸ ԵՄ Է ՂԱԼԻՍ, ԿԱՐԼՈՍ Ե ՍՕՐԷԼ

ՍՕՐԷԼ

Մենակ ես զալիս: Չես բերում նորան:  
(մօտ գնալով)

Լա Հիր, այդ ի՛նչ է. ի՞նչպէս էք նայում:  
Զըլինի՞ թէ նոր տարաբաղդութիւն:—

ԼԱ ՀԻՐ

Տարաբաղդութեան ժամանակն անցաւ,  
Բաղդաւորութեան օրը լուսացաւ:

ՍՕՐԷԼ

Ի՞նչ կայ: Ասացէք, աղաչում եմ ձեզ:

ԼԱ ՀԻՐ (Թագաւորին)

Արքայ, յե՛ս կանչեր շուտ Օրէանի  
Նուիրակներին:

ԿԱՐԼՈՍ

Բայց ինչի՞: Ի՞նչ կայ:

ԼԱ ՀԻՐ

Բախտդ փոխուեցաւ: Շուտով յե՛ս կանչիր:  
Կռիւ պատահեցաւ և դու յաղթեցիր:

ՍՕՐԷԼ

Յաղթեց: Ի՛նչ քայքոր է այդ բառն ականջին:

ԿԱՐԼՈՍ

Լա Հիր, խաբուած ես դու սուտ համբաւով:  
Յաղթեցի: Ո՛չ, ես այդ յոյսը չունիմ:

ԼԱ ՀԻՐ

Շուտով աւելի մեծ հրաշք կրտեսնես:

— Ահա՛ գալիս է սրբազան հայրը  
եւ Գիւնուային բերում է իւր հետ:

ՍՕՐԷԼ

Գեղեցիկ ծաղիկ է յաղթութիւնը.  
Նա մեզ տալիս է երկնային պտուղ  
Խաղաղութիւնը և հաշտութիւնը:

ԻՆՆԵՐՈՐԴ ԵՐԵՒՈՅԹ

ՐԷՅՄՍԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԸ, ԴԻԻՆՈՒԱ, ԴԻԻ ՇԱՏԷԼ,  
ՐԱՌԻԼ, զրահաւորուած ասպետ, ԱՌԱՋ ԻՆՆԵՐԸ:

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

(Բերում է Գիւնուային թագաւորի մօտ և միաւորում է նոցա ձեռները:)

Գրկեցէք միմեանց, իշխաններ: Թողէք  
Հեռանայ ձեզնից ոխ և բարկութիւն  
Այժմ՝ երկինքը ողորմած է մեզ:  
(Գիւնուան գրկում է թագաւորին)

ԿԱՐԼՈՍ

Ազատեցէք ինձ իմ կասկածներից  
եւ ապշութենից: Ի՞նչ է պատահել:  
Ինչպէս եղաւ այս անսպասելի  
Փոփոխութիւնը:

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

(Տանելով ասպետին թագաւորի առաջ)

Այժմ՝ խօսեցէք:

ՐԱՌԻԼ

Մենք ժողովեցինք Լօտարինգիայում  
Տան և վեց գունդ զօրք և գալիս էինք  
Տէր, քո բանակը: Մեր առաջնորդն էր  
Բօդրիկուր ասպետը վօկուլօրից:  
Երբ վերմանտօնի բարձրավանդակից  
Սկսեցինք իջնել իօն գետի ձորը,  
Ընդարձակ դաշտում տեսանք թշնամուն

Մեր առաջ կանգնած և յետ նայելով,  
Այնտեղ էլ նոյնպէս փայլեցին զէնքեր,  
Եւ այսպէս ահա երկու կողմից էլ  
Պաշարուած էինք թշնամու զօրքով:  
Ոչ յաղթելու յոյս կար, ոչ փախչելու:  
Քաջերի սիրտը անգամ թուլացաւ:  
Ամենքս սաստիկ յուսահատուեցանք  
Եւ ուզում էինք ձգել զէնքերը:  
Եւ երբ որ զօրքի մեծաւորները  
Ժողովեցան և խորհուրդ կազմեցին,  
Բայց ոչ ինչ հնար չըմտածեցին —  
Յանկարծ ի՞նչ տեսնենք: Զարմանալի հրաշք  
Երևեցաւ մեր ապշած աչքերին:  
Անտառի միջեց դուրս եկաւ մի կոյս,  
Որ պատերազմի ղիցուհու նման  
Փայլուն սաղաւարտ կրում էր գլխին,  
Տեսքով գեղեցիկ, բայց և ահաւոր,  
Գանգուր սև մազը փռած ուսերին,  
Ինքը շուրջ պատած լուսով երկնային,  
Եւ բարձր ձայնով ասաց մեզ այսպէս.  
«Ի՞նչ էք սարսափել, քանի ճրանսիացիք,  
Յարձակուեցէք ձեր թշնամու վերայ,  
Թէև աւելի բազմաթիւ լինի  
Նա, քան թէ ծովի աւազը: Աստուած  
Եւ սուրբ կոյսն են ձեր առաջնորդները:  
Եւ շուտ դրօշակրի ձեռիցը խլեց  
Դրօշն և աներկիւղ զօրքի գլուխն անցաւ:  
Ապշած, ահամայ հետեւում էինք  
Բարձր ծածանող դրօշին և նորա  
Վստահ կրողին և յարձակուեցանք  
Թշնամու վերայ, որ նոյնպէս ապշած  
Անշարժ կանգնած էր և հիանում էր  
Տեսած հրաշքով: — Բայց յանկարծ, կարծես,  
Երկնային սարսափ եկաւ նորա վրայ,  
Երեսը դարձրեց և սկսեց փախչել,  
Զգեց իրանից բոլոր զէնքերը

Եւ բոլոր դաշտում ցիր ու ցան եղաւ:  
 Ոչինչ չէր օգնում զօրապետների  
 Խրախուսող ձայնը: Կարծես սարսափը  
 Կուրացրեց նոցա: Առանց մի անգամ  
 Ետե նայելու, թէ մարդ և թէ ձի  
 Գետն էին թափվում: Սա կոտորած էր,  
 Ոչ թէ պատերազմ: Թշնամիներից  
 Երկու հազարը ընկան դաշտի մէջ,  
 Այլև շատերը գետի մէջ կորան,  
 Այն ինչ մեր կողմից կորուստ չունեցանք:

ԿԱՐԼՈՍ

Զարմանալի է, Աստուած վիպ, շատ  
 Զարմանալի է:

ՍՕՐԷԼ

Այդ հրաշքը դործեց  
 Մի կոյս, ասում էք: Ի՞նչ տեղից եկաւ,  
 Եւ կամ ո՞վ է նա:

ՐԱՌԻԼ

Իւր ու՛լ լինելը

Նա միայն արքային ուզում է յայտնել:  
 Հաւատացնում է, թէ մարգարէ է  
 Ասածուց ուղարկուած և խոստանում է  
 Մինչև նոր լուսին փրկել Սրէան:  
 Եւ ժողովուրդը նորա խօսքերից  
 Խրախուսուած ուզում է պատերազմել:  
 Նա հետևում է զօրքին և շուտով  
 Այստեղ կը լինի:  
 (Ասվում է զանգակի ձայն և զէնքերի շառաչիւն:)

Ահա՛ լսում էք

Զանգակի ձայնը և աղաղակը:  
 Նա է: Յնձութեամբ դիմաւորում է  
 Ժողովուրդն Ասածոյ պատգամաւորին:

ԿԱՐԼՈՍ (Գիւ Շատելին)

Գնա՛ ներս բեր նորան:  
 (Արքեպիսկոպոսին)

Արդեօք ի՞նչ կարծեմ.

Ես մի աղջկայ ձեռով յաղթում եմ,  
 Եւ այն էլ հիմա, երբ ինձ Աստուծոյ  
 Բազուկը միայն կարող է փրկել:  
 Սա անբնական մի երևոյթ է —  
 Սրբազան, արդեօք հաւատամ հրաշքին:

ՇԱՏ ՉԱՅՆԵՐ (բեմի ետեից)

Կեցցէ՛ կոյսը: Կեցցէ՛ ազատողը:

ԿԱՐԼՈՍ

Եկաւ:

(Գիւնուային)

Գիւնուա, նստի՛ր իմ տեղը.

Ուզում եմ փորձել հրաշագործ աղջկան:  
 Եթէ որ Աստուծոց ուղարկուած է նա,  
 Որն է թագաւորն իսկոյն կիմանայ:

(Գիւնուան նստում է, թագաւորը կանգնում է նորա աջ կողմը և նորա  
 կողքին Այնէս Սօրէլը. Արքեպիսկոպոսը և միւսները կանգնում են միւս  
 կողմը, այնպէս որ բեմի մէջ տեղը բաց է մնում:)

ՏԱՍՆԵՐՈՐԴ ԵՐԵՒՈՅԹ

ԱՌԱՋԻՆՆԵՐԸ: ՅՈՎՀԱՆՆԱ, որին հետևում են ԽՈՐՀՐԴԱ-  
 ԿԱՆՆԵՐԸ և շատ ԱՍՊԵՏՆԵՐ, որոնք կանգնում են բեմի ետեի  
 կողմում: Յովհաննան առաջ է դալիս աղնուաբար և մէկ մէկ նայում է  
 բոլոր շուրջ կանգնածներին:

ԴԻԻՆՈՒԱ

(Խոր և հանդիսաւոր լութենից յետոյ:)

Դ՞՞՞ ևս հրաշագործ այն աղջկիկը, որ —

ՅՈՎՀԱՆՆԱ

(Կտրում է նորա խօսքը պարզութեամբ և վստմութեամբ:)

Օրէանի կոմս, Աստուած ես փորձում:  
 Վէր կաց այդ տեղից, որ քեզ վայել չէ:  
 Քեզանից մեծի մօտ եմ ուղարկուած:

(Նա հաստատ քայլերով մօտենում է թագաւորին, խոնարհում է նորա ա-  
 ռաջ ծնկան վրայ, յետոյ իսկոյն կանգնում է և յետ է քաշվում: Ամենքը  
 զարմացած են: Գիւնուան թողնում է իւր տեղը և թագաւորը նստում է:)

ԿԱՐԼՈՍ

Դու ինձ առաջին անգամն ես տեսնում,  
Ի՞նչպէս խմացար, որ արքան ես եմ:

ՅՈՎՀԱՆՆԱ

Ես այն ժամանակ տեսայ քեզ, երբ որ  
Միայն Աստուծոյ աչքն էր քեզ տեսնում:

(Մտեանում է թագաւորին և ասում է խորհրդաւոր կերպով:)

Անցեալ գիշերը, թէ որ յիշում ես,  
Երբ քո չորս կողմը տիրել էր խոր քուն,  
Տեղեց վեր կացար և աղօթք արիր  
Ջերմեռանդ սրտով Աստուծոյ առաջ:  
Աս՛, դուրս գնան և ես կը պատմեմ  
Քեզ քո աղօթքի բովանդակութիւնն:

ԿԱՐԼՈՍ

Ինչ որ երկնքին խոստովանել եմ,  
Ի՞նչ հարկաւոր է մարդկանցից ծածկել:  
Աս՛ աղօթքիս բովանդակութիւնն,  
Եւ կը հաւատամ, որ մարգարէ ես:

ՅՈՎՀԱՆՆԱ

Երեք խնդրուածք կար աղօթքիդ մէջ:  
Լաւ լիբ, Գօֆէն, արդեօք այնպէս է  
Առաջինն այս էր: Եթէ որ և է  
Անիրաւութիւն ծանրանում է այս  
Տէրութեան վերայ, եթէ մի յանցանք,  
Որ կատարուել է քո նախորդների  
Ժամանակներում և դեռ քափուած չէ,  
Առաջացրել է այս պատերազմը,  
Ժողովուրդիդ տեղ թող քեզ զոհ ընտրէ  
Եւ իւր բարկութեան բաժակը միայն  
Քո գլխին թափէ:

ԿԱՐԼՈՍ

(Սարսափած յետ քաշելով:)

Արդեօք ո՞վ ես դու,  
Ո՞վ հզօր էակ: Ի՞նչտեղից եկար:

ՅՈՎՀԱՆՆԱ

Այս էր քո երկրորդ խնդիրքն առ Աստուած.  
Եթէ նորա սուրբ վճիռն ու կամքն է  
Զրկել քո ցեղը իշխանութենից,  
Խլել քո ձեռից բոլորը, ինչ որ  
Ժառանգել ես դու քո նախորդներից,  
Ապա խնդրում ես այս երեք բանը  
Միայն թողնել քեզ. խաղաղ խղճմտանք,  
Բարեկամներիդ անկեղծ սիրտը և  
Աղնէսիդ սէրը:

(Թագաւորը ծածկում է երեսը և սաստիկ լալիս է, բոլոր ներկայ եղող ան-  
ձինք դարմացած են: Կարճ լռութենից յետոյ:)

Ուզում ես երրորդ

Աղօթքդ էլ ասեմ:

ԿԱՐԼՈՍ

Բաւական է: Ես

Հաւատում եմ քեզ: Մարդը կարող չէ  
Այդ բանը անել: Ինքը Տէր Աստուած  
Ուղարկել է քեզ:

ԱՐԲԵՊԵՍԿՈՊՈՍ

Ո՞վ ես դու, ո՞վ սուրբ

Աքանջելի աղջիկ: Դու որ երջանիկ  
Երկրի ճնունդն ես: Աս՛, ո՞վ ես քո  
Օրհնեալ ճնողքը:

ՅՈՎՀԱՆՆԱ

Հայր սուրբ, Յովհաննա

է իմ անունը: Հովուի աղջիկ եմ  
Իմ թագաւորի Գօմ ընթի գիւղից,  
Տուլի վիճակում, և մանկութենից  
Հօրս ոչխարներն էի արածում:  
Ես լսում էի շատ անգամ, ինչպէս  
Գիւղացիք միմեանց պատմում էին, թէ  
Օտար կղզեցիք ծովի միւս կողմից  
Եկել են, որ մեզ իրանց ստրուկ շինեն

Եւ բռնի մեզ վրայ թագաւոր դնեն  
 Մի օտար իշխան, որ մեզ սիրում չէ,  
 Թէ նոքա արդէն առել են մեր մեծ  
 Փարիզ քաղաքը և կամենում են  
 Տիրել մեր երկրին: Այն ժամանակ ես  
 Սկսեցի խնդրել Աստուածամօրը,  
 Որ մեզ ազատէ օտարի լծից  
 Եւ չըզրկէ մեր բնիկ արքայից:  
 Գիւղեց ոչ հեռու, ուր ես ծնւել եմ  
 Կայ մի հրաշագործ տիրամօր պատկեր  
 Հին ժամանակից, որին դալիս են  
 Երկրպագելու շատ ուխտաւորներ:  
 Այդ պատկերի մօտ կայ մի սրբազան  
 Կաղնի, որ նոյնպէս շատ հռչակուած է  
 Հրաշագործութեամբ: Ես սիրում էի  
 Նստել նորա տակ, երբ որ նորա մօտ  
 Արածում էին իմ ոչխարները:  
 Այդ ծառը ինձ միշտ իրան էր քաշում:  
 Երբ որ լեռներում կորչում էր մէկը  
 Իմ գառնուկներից, իսկոյն մի երազ  
 Յոյց էր տալիս ինձ գառնուկիս տեղը,  
 Երբ քրնում էի նորա ստուերի մէջ:  
 — Ահա՛ մի անգամ, երբ ամբողջ գիշեր  
 Անքուն մընացի ես այն ծառի տակ  
 Ջերմեռանդ սրտով աղօթք կարդալով,  
 Երևեցաւ ինձ ինքը Սուրբ Կոյսը  
 Ձեռին սուր և դրօշ, միայն թէ ինձ պէս  
 Հովվուհու զգեստով և ասաց այսպէս.  
 «Ես եմ, Յովհաննա՛, վեր կաց, թող հօտդ.  
 Տէրը մի այլ գործ պիտի յանձնէ քեզ.  
 Ա՛ռ դրօշը, կապիր մէջքիդ այս սուրը,  
 Որով գնա՛ ջնջէ իմ ժողովուրդի  
 Թշնամիներին. բէյմն տար իշխանին  
 Եւ արքայական թագ կապիր զլիւին:»  
 — Ես թոյլ աղջիկ եմ, պատասխանեցի,  
 Ի՞նչպէս կարող եմ անել այդ բանը,

ես, որ անձանօթ եմ պատերազմի  
 Կործանիչ գործին: Իսկ նա ինձ ասաց.  
 «Մի անարատ կոյս կարող է մեծ մեծ  
 Գործեր կատարել, եթէ հրաժարուի  
 Երկրաւոր սիրուց: Տես, ես էլ քեզ պէս  
 Անարատ մի կոյս, ծընայ Տիրոջը,  
 Աստուծոյ Որդուն և աստուածացայ:» —  
 Եւ այս ասելով ձեռով շօշափեց  
 Աչքերս, և երբ վերեւ նայեցայ,  
 Տեսայ երկինքը լին հրեշտակներով,  
 Որոնք ձեռներին բռնած ունէին  
 Սպիտակ շուշաններ և երգում էին  
 Քաղցրաձայն երգեր: — Եւ այսպէս երեք  
 Գիշեր միմեանց վրայ երևում էր ինձ  
 Սուրբ Կոյսն և ասում. «Վեր կաց, Յովհաննա՛.  
 Տէրը մի այլ գործ պիտի յանձնէ քեզ:»  
 Երբ երրորդ գիշեր երևեցաւ նա,  
 Զայրացած ասաց ինձ այս խօսքերը:  
 «Հնազանդութիւնը կրնո՞ջ սուրբ պարտքն է,  
 Համբերութիւնը նորա վիճակը:  
 Նա պիտի զտուի ծանր աշխատանքով.  
 Ով այստեղ ծառայ, այնտեղ մեծ է նա:»  
 Այս խօսքի վերայ ձգեց իրանից  
 Հովուական զգեստը և երևեցաւ  
 Կրկ երկնային թագուհի, պատած  
 Լուսոյ կամարով և ոսկիափայլ  
 Ամպերի վերայ բազմած բարձրացաւ,  
 Եւ կամաց կամաց աչքից ծածկուելով,  
 Երանութեան լոյս աշխարհը մտաւ:  
 (Ամենքը շարժուած են. Ադնէս Սօրէլը սաստիկ լալով ծածկում է երեսը  
 թագաւորի կուրծքի մէջ:)  
 ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ  
 (Երկար լռութեանից յետոյ.)  
 Այս աստուածային վկայութեան դէմ  
 Պէտք է պապանձուի մարդկային տկար  
 Իմաստութիւնը: Նորա խօսքերի

ձշմարտութիւնը ապացուցուած է  
Կենդանի գործով: Միայն ինքն Աստուած  
Կարող է գործել այդպիսի մի հրաշք:

ԴԻԻՆՈՒԱ

Ոչ թէ հրաշքներին, նորա աչքերին  
Եւ անմեղութեան հաւատում եմ ես:

ԿԱՐԼՈՍ

Ինչ արժանի եմ ես մեղաւորս  
Այդ աստուածային ողորմութեանը:  
Դու, ամենագէտ Աստուած, տեսնում ես  
Սիրտս և զիտես խոնարհութիւնս:

ՅՈՎՀԱՆՆԱ

Մեծամեծների խոնարհութիւնը  
Պայծառ փայլում է վերև երկնքում:  
Դու խոնարհեցար, Աստուածութիւնը  
Քարձրացնում է քեզ արդէն այս կեանքում:

ԿԱՐԼՈՍ

Ուրեմն յաղթեմ պիտի թշնամուն:

ՅՈՎՀԱՆՆԱ

Բոլոր Ֆրանսիան կը խոնարհեցնեմ  
Ես քո ոտի տակ:

ԿԱՐԼՈՍ

Եւ Օրլէանը,  
Ինչպէս ասացիր, պիտի չը կորցնեմ:

ՅՈՎՀԱՆՆԱ

Ո՛չ: Աւելի հեշտ է, որ Լուարը  
Սկսէ յետ վազել զէպի իւր ակը:

ԿԱՐԼՈՍ

Եւ Րէյմս պիտ' մտնեմ ես յաղթանակով:

ՅՈՎՀԱՆՆԱ

Այնտեղ կը պսակեմ քո զլուխը թագով:  
(Բոլոր ներկայ եղող ասպետները պատերազմական եռանդով վառուած,  
չարժում են իրանց նիզակները և վահանները:)

ԴԻԻՆՈՒԱ

Թող կոյսը լինի զօրքին առաջնորդ,  
Մենք կը հետևինք նորան կուրօրէն  
Իւր նուրբ տեսութեամբ առաջնորդէ մեզ,  
Նորան իմ սրով կը պաշտպանեմ ես:

ԼԱ ՀԻՐ

Բոլոր աշխարհից մենք չենք վախենայ,  
Երբ նա մեր զօրքի առաջը գընայ.  
Յաղթութեան Աստուածը նորա հետ է,  
Թող մեզ կուռի մէջ կոյսն առաջնորդէ:  
(Ասպետները շարժում են զէնքերը և սուաջ են գալիս:)

ԿԱՐԼՈՍ

Այո՛, սուրբ աղջիկ, հրամայիր զօրքիս.  
Քեզ կը հնազանդին նորա մեծերը:  
Եւ իբրև նշան քզ զինուորական  
Բարձր իշխանութեան ահա յանձնում եմ  
Ես քեզ այս սուրը, որ զժգոհութեամբ  
Յետ է ուղարկել մեր սպարապետը:  
Քո ձեռն աւելի արժանաւոր է  
Կրել այս սուրը: Ուրեմն ընդունիր,  
Մարգարէ աղջիկ, և այսուհետև —

ՅՈՎՀԱՆՆԱ

Ո՛չ, ազնիւ տէր իմ, դա այն սուրը չէ,  
Որ քեզ յաղթութիւն պիտի պարգևէ:  
Մի այլ սուր զիտեմ, որով կը յաղթեմ:  
Ահա ասեմ քեզ նորա նշանը,  
Ինչպէս որ ոգին ինձ սովորեցրեց.  
Հրամայիր բերեն:

ԿԱՐԼՈՍ

Ասա՛, Յովհաննա՛:

ՅՈՎՀԱՆՆԱ

Տէր, մարդ ուղարկիր հին Ֆիէրբուա  
Քաղաքը, ինչպէս սուրբ Կատարինեան  
Գերեզմանատան մի մատուռի մէջ

Կարած է հին զէնք, որ իբրև աւար  
Պատերազմական պահում է այնտեղ :  
Այնտեղ է ահա իմ ուզած սուրը .  
Նորա շեղքի վրայ դրօշմած է երեք  
Ոսկեղէն շուշան : Հրամայիր զընան  
Բերեն այն սուրը . նորանով պէտք է  
Յաղթես թշնամուդ :

ԿԱՐԼՈՍ

Շուտ կատարեցէք,

ինչպէս ասում է :

ՅՈՎՀԱՆՆԱ

Հրամայիր բերեն

ինձ մի սպիտակ դրօշ ծիրանի գոյնով  
Շրջանակի մէջ : Նորա մէջ տեղը  
Նկարած լինի Սուրբ Կոյսը կանգնած  
Երկրագնդի վրայ Յիսուս մանուկը  
Գրկի մէջ բռնած : Այդպէս էր դրօշը,  
Որ ինձ ցոյց տուեց Աստուածածինը :

ԿԱՐԼՈՍ

Թող լինի ինչպէս որ կամենում ես :

ՅՈՎՀԱՆՆԱ (Արքեպիսկոպոսին :

Սրբազան հայր իմ, քահանայական  
Ձեռք զիբր ինձ վրայ, օրհնիր քո աղջկան :  
(Չորում է նորա առաջ :)

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Գու եկար, որ մեզ օրհնու թիւն բերես,  
Ոչ թէ ընդունես :— Ասածով զօրանաս,  
Բայց մենք անարժան և մեղաւոր ենք :  
(Յովհաննան կանգնում է :)

ՄԱՆԿԱԻԿ

Տէր Անգլիացոց զօրապետներից  
Դայիս է քեզ մօտ մի պատգամաւոր :

ՅՈՎՀԱՆՆԱ

Թող դայ, Աստուած է նորան ուղարկում :  
(Թագաւորը նշան է տալիս մանկաւիկին, որ հեռանում է :)

ՏԱՄՆԵՒՄԻԵՐՈՐԴ ԵՐԵՒՈՅԹ

Մ Ո Ւ Ն Ե Տ Ի Կ Է Ա Ռ Ա Ջ Ի Ն Ն Ե Ր Ը

ԿԱՐԼՈՍ

Ի՞նչ կայ, մունետիկ : Ի՞նչ է պատգամդ :

Մ Ո Ւ Ն Ե Տ Ի Կ

Ո՞վ է ձեզանից Կարլոս վարուայի,  
Պօնտիէօի կոմսի փոխանակ խօսում :

Գ Ի Ի Ն Ո Ւ Ա

Անպիտան : Ի՞նչպէս համարձակվում ես  
Գու Ֆրանսիայի թագաւորին իւր  
Սեփական հողի վերայ ուրանալ :  
Քեզ պաշտպանում է այդ զգեստը, թէ չէ —

Մ Ա Ն Կ Լ Ա Ի Կ

Միայն մէկ թագաւոր ունի Ֆրանսիան,  
Որ անգլիական բանակի մէջ է :

ԿԱՐԼՈՍ

Հանդարտ, Գիւնուա : Խօսիր, մունետիկ :

Մ Ո Ւ Ն Ե Տ Ի Կ

Ազնիւ սպարապետս խիստ ցաւելով  
Արիւնի համար, որ մինչև հիմա  
Թափուեցաւ և որ դեռ պիտի թափուի,  
Գեռ պատեանի մէջ է պահում սուրը  
Իւր զինուորների, և առաջ քան թէ  
Կընկնի Օրլէան, առաջարկում է  
Քեզ խախաղութիւն :

ԿԱՐԼՈՍ

Ի՞նչ պայմաններով :

ՅՈՎՀԱՆՆԱ (առաջ դալով :)

Տէր, թոյլ տուր խօսիմ ես քո փոխանակ :

ԿԱՐԼՈՍ

Խօսիր, Յովհաննա: Որոշիր, արդեօք  
Պատերազմ լինի, թէ խաղաղութիւն:  
ՅՈՎՀԱՆՆԱ. (մունետիկին:)

Քեզ ո՞վ ուղարկեց: Ո՞վ է քո բերնով  
Բանակցում մեզ հետ:

ՄՈՒՆԵՏԻԿ

Մեր սպարապետը,

Սալբուրի կոմսը:

ՅՈՎՀԱՆՆԱ

Սուտ է, մունետիկ.

Դու լորտի կողմից չես խօսում այստեղ:  
Կենդանի մարդիկ կարող են խօսել,  
Ոչ մեռելները:

ՄՈՒՆԵՏԻԿ

Իմ սպարապետը

Ողջ և առողջ է և ապրում է ձեզ  
Ջնջելու համար:

ՅՈՎՀԱՆՆԱ

Նա կենդանի էր

Երբ դու մեկնեցար: Այսօր առաւօտ  
Մի Օրլէանից արձակած գնդակ  
Կործանեց նորան, երբ Լա Տուրնէյլե  
Աշաարակիցը ցած էր նայում նա  
— Դու ծիծաղում ես, որ ես հեռաւոր  
Բաներն եմ յայտնում: Ինձ չես հաւատում,  
Աչքիդ հաւատա՛: Երբ վերադառնաս,  
Կրտսնես նորա թաղման հանդէսը:  
Հիմն խօսիր և յայտնիր պատգամդ:

ՄՈՒՆԵՏԻԿ

Երբ դու ծածուկը գիտես իմանալ,  
Ուրեմն չասած գիտես պատգամն:

ՅՈՎՀԱՆՆԱ

Ինձ հարկաւոր չէ պատգամդ իմանալ:

Դու լսիր իմը և այս խօսքերը  
Յայտնիր քեզ այստեղ ուղարկողներին:  
— Դու Անգլիայի թագաւոր և դուք  
Բէդֆօրտ և Գլօստէր դքսեր, տէրութեան  
Կառավարիչներ, թափած արիւնի  
Հաշիւը տուէք երկնքի Տիրոջ  
Յետ տուէք կրկին բանալիները  
Այն քաղաքների, որոնց տիրեցիք  
Անիրաւարար: Երկնառաք կոյսը  
Ահա գալիս է, որ առաջարկէ  
Ձեզ խաղաղութիւն, կամ թէ պատերազմ:  
Ընտրեցէք: Ահա ասում եմ ես ձեզ:  
Գեղեցիկ Ֆրանսիան երբէք ձեզ չի տայ  
Փրկիչ Յիսուսը — այլ արքայազուն  
Տէրս, Կարլոսը, որին շնորհել է  
Աստուած Ֆրանսիան, կրմանի փարիզ  
Իբրև թագաւոր, շրջապատած իւր  
Տէրութեան բոլոր մեծամեծներով:  
— Մունետիկ, շտապիր մի՛ կորցնիր վայրկեան:  
Առաջ քան թէ դու կը հասնիս բանակ  
Արդէն կը մանի կոյսը Օրլէան,  
Ուր և կը կանգնէ նա իւր յաղթանակ:  
(Նա դուրս է գնում, ամենքը հետևում են նորան, վարագոյրը իջնում է:)

# ԵՐԿՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

մի ժայռերով շրջապատած տեղ

## ԱՌԱՋԻՆ ԵՐԵՒՈՅԹ

ՏԱԼԲՕ և ԼԻՕՆԵԼ, անդլիական զորապետներ, ՓԻԼԻՊՊՈՍ, Բուրգունդիայի դուքսը, ԱՍՊԵՏ ՖԱՍՏՕԼՖ և ՇԱՏԻԼԻՕՆ, զինուորներով և զրօշակներով:

### ՏԱԼԲՕ

Այս ժայռի տակը կանգնենք և մի պինդ  
բանակ հաստատենք: Գուցէ յաջողի  
կրկին ժողովել ջիր ու ցան զօրքը,  
Որին երկիւղը քշեց դէս ու դէն:  
Պահապաններ զրէք ժայռերի վերայ:  
Թէպէտ և զիշերը պաշտպանում է  
Մեզ հալածանքից, և թէ թշնամին  
Թեւաորուած չէ, ևս չեմ վախենում  
Նրա յարձակմանից — սակայն զգուշութիւն  
Պէտք է գործ դնել: Մենք մի յանդուգն  
Թշնամի ունինք, այլ և ջարդուած ենք:  
(Ապետ Ֆաստուլֆը գուրս է գնում զինուորների հետ:)

### ԼԻՕՆԵԼ

Ջարդուած ենք: Ո՛հ, մի՛ կրկնէք այդ բառը:  
Ըմբռնել անգամ չեմ կարողացել,  
Որ Ֆրանսիացու առաջը այսօր  
Անդլիացին իւր թիկունքը դարձրեց:  
— Օրէանն, դու մեր փառքի գերեզման,  
Մեր պատիւն ընկաւ քո դաշտերի վրայ:  
Ո՛հ, ինչ խայտառակ, ո՛հ, ինչ ծաղրելի  
Կոտորած էր սա: Ո՞վ կըհաւատայ  
Ապագայում, թէ Պուատիէի, Կրէկի  
Եւ Ազէնկուրի մօտ յաղթողները

Փախան կնոջ առաջ:

### ԲՈՒՐԳՈՒՆԴ

Այդ բանով պէտքէ

Մենք միթարուինք: Սատանան յաղթեց

Մեզ, ոչ թէ մարդիկ:

### ՏԱԼԲՕ

Մեր յիմարութեան

Սատանան, այո՛: — Ի՞նչ, Բուրգունդ, մի՞թէ

Ամբոխի ցնորքը սարսափեցնում է

Եւ իշխաններին: Մնապաշտութիւնը

Կարող չէ ծածկել վատթարութիւնը—

Ամենից առաջ ձեր գունդը փախաւ:

### ԲՈՒՐԳՈՒՆԴ

Ամենքը փախան:

### ՏԱԼԲՕ

Ո՛չ, դուքս, ձեր թևը

Սկսեց փախուստը: Ձեր զինուորները

Լեղապատառ մեր բանակը ընկան

Ազդակելով. դժոխքը մեր դէմն է,

Ինքը սատանան պատերազմում է

Ֆրանսիայի համար, և այսպէս մերոնց

Նոյնպէս շփոթեցին:

### ԼԻՕՆԵԼ

Մի ուրանաք, դուքս,

Առաջ ձեր թևը սկսեց յետ քաշուիլ:

### ԲՈՒՐԳՈՒՆԴ

Թշնամին առաջ այնտեղ յարձակուեց:

### ՏԱԼԲՕ

Զօրքի թոյլ մասը յայանի էր աղջկան,

Գիտէր, թէ ինչտեղ են երկչոաները:

### ԲՈՒՐԳՈՒՆԴ

Ի՞նչ: Ուրեմն այս տարաբաղդութեան

Պատճառը մե՞նք ենք, Բուրգունդիացիք:

### ԼԻՕՆԵԼ

Թէ Անդլիացիք մենակ լինէինք,

Օրէանն երբէք կորցնելու չէինք:

ԲՈՒՐԳՈՒՆԴ

Ո՛չ — որովհետև երբէք Օրէան  
 Տեսնելու չէիք: Արդեօք ո՞վ հարթեց  
 Ձեր ճանապարհը այս տէրութեան մէջ,  
 Ո՞վ մեկնեց ձեզ իւր բարեկամական  
 Ձեռը, երբ որ դուք ցամաք դուրս եկաք  
 Այս թշնամական երկրի ավի վրայ:  
 Ո՞վ պտակեց թագով ձեր Հենրիկոսին  
 Փարիզում և ո՞վ հպատակեցրեց  
 Նորան Ֆրանսիան: Թէ չառաջնորդէր  
 Ձեզ այս բազուկը, վկայ է Աստուած,  
 Տեսնելու չէիք մի Ֆրանսիական  
 Տան վառարանից բարձրացող ծուխը:

ԼԻՕՆԵԼ

Դուքս, թէ խօսքերով կարելի լինի,  
 Ֆրանսիան մենակ կրնուածէիք:

ԲՈՒՐԳՈՒՆԴ

Դուք դժգոհ էք, որ չըկարողացաք  
 Առնել Օրէան և հիմա ինձ վրայ,  
 Ձեր դաշնակցի վրայ, ուղումէք թափել  
 Ձեր բարկութիւնը: Բայց ինչի՞ կորցրինք  
 Մենք Օրէանը: Պատճառը միայն ձեր  
 Ազահութիւնն էր: Արդէն քաղաքը  
 Որոշել էր ինձ անձնատուր լինել.  
 Ձեր չար նախանձը միայն արգելեց:

ՏԱԼԲՕ

Մի՞թէ ձեզ համար էինք պաշարում:

ԲՈՒՐԳՈՒՆԴ

Բայց ի՞նչ կանէիք, եթէ իմ զօրքը  
 Ես յետ քաշէի:

ԼԻՕՆԵԼ

Նոյն բանը, ինչ որ  
 Ազնկուրի մօտ, երբ մեր դէմն էիք  
 Դուք և Ֆրանսիան:

ԲՈՒՐԳՈՒՆԴ

Բայց կարօտ էիք  
 Դուք իմ օգնութեան որ ձեր տէրութեան

կառավարիչը գնեց թանգ գնով:

ՏԱԼԲՕ

Այո՛ թանգ գընով — շատ թանգ գընեցինք  
 Այսօր մեր պատուով Օրէանի մօտ:

ԲՈՒՐԳՈՒՆԴ

Բաւական է, լօրդ թէ չէ կըզղջաք:  
 Մի՞թէ նրա համար թողի արքայիս  
 Արդար դրօշակը և դաւաճանի  
 Անունը ըստացայ, որ օտարներից  
 Այսքան նեղանամ: Ինչի՞ այստեղ եմ  
 Եւ Ֆրանսիայի դէմ պատերազմում:  
 Լաւ է հնազանդիմ իմ թագաւորին  
 Քան թէ ծառայիմ ապերախտներին:

ՏԱԼԲՕ

Մենք արդէն զիտենք, որ բանակցում էք  
 Դուք Դօֆէնի հետ, բայց մենք կաշխատենք,  
 Որ ձեր մատնութեան դէմ մեզ պաշտպանենք:

ԲՈՒՐԳՈՒՆԴ

Այդպէս էք խօսում ինձ հետ — Շատիլիօն,  
 Ասա՛, որ իսկոյն զօրքս պատրաստուի.  
 Մենք մեր երկիրը պիտի յետ դառնանք:  
 (Շատիլիօնը դուրս է գնում:)

ԼԻՕՆԵԼ

Բարով գնաք: Երբէք այնպէս փայլուն չէր  
 Ազլիացու փառքը, քան թէ երբ որ նա  
 Պատերազմում էր առանց դաշնակցի,  
 Ապաւինելով միայն իւր սըրին:  
 Թող ամեն մէկը իւր համար կռուի,  
 Եւ ճշմարիտ է, որ Ֆրանսիական  
 Եւ անգլիական արիւնը երբէք  
 Կարող չէ անկեղծ իրար հետ խառնուիլ:

ԵՐԿՐՈՐԴ ԵՐԵՒՈՅԹ

Թ. Ա. Գ. ՈՒՂԻ Ի ԶԱԲՕ, հետք մի մանկաւրիկ, Ա. Ռ. Ա. ՋԻՆՆԵՐԸ:

Ի ԶԱԲՕ

Այս ի՞նչ եմ լսում, ասպետներ: Կացէք:

Ինչ չար ասող արդեօք շփոթեց ձեր միտքը:  
 Հիմա, երբ որ ձեզ կարող է փրկել  
 Սերտ միութիւնը, ինչք էք ուզում  
 Բաժնուիլ միմեանց հետ թշնամանալով:  
 Չէ՞ որ այդպէսով պատրաստում էք դուք  
 Ձեր կործանումը:— Խնդրում եմ ձեզ, դուքս,  
 Շուտ յետ կանչեցէք տուած հրամանը—  
 Եւ դուք, մեծանուն Տալթօ, մեղմացրէք  
 Մեր բարեկամի վրդոված սիրար:  
 Եկէք, Լիօնէլ, եկէք օգնեցէք,  
 Շուտ հաշտեցնենք այս մեծամիաներին:

ԼԻՕՆԷԼ

Ո՛չ, ազնիւ տիկին: Ինձ համար մէկ է:  
 Ես կարծում եմ, որ լաւ է բաժանուիլ,  
 երբ որ հնար չէ միասին մնալ:

ԻԶԱԲՕ

Այս ի՞նչ դժոխային մի զօրութիւն է,  
 Որ պատերազմում ջարդելուց յետոյ  
 Մեզ դեռ այստեղ էլ յիմարացնում է:  
 Ո՞վ սկսեց վէճը: Խօսեցէք:— Դուք, Լօրդ,

(Տալթօին)

Ի՞նչպէս ձեր օգուտը մոռանալով  
 Վիրաւորում էք ազնիւ դաշնակցին:  
 Ի՞նչ կարող էք դուք առանց այս բազկի:  
 Սա ձեր արքայի գահը հաստատեց  
 Եւ կրկործանէ, եթէ կամենայ.  
 Սա ձեզ օգնում է ոչ միայն իւր զօրքով,  
 Այլ և իւր անուամբ: Ամբողջ Անգլիան,  
 Մեր ծովափի վրայ հանելով բոլոր  
 Իւր քաղաքացոց, կարող չէ նուաճել  
 Այս տէրութիւնը, երբ միաբան է:  
 Ֆրանսիան Ֆրանսիայով միայն հնար է յաղթել:

ՏԱԼԹՕ

Մենք գիտենք յարգել, երբ բարեկամը  
 Հաւատարիմ է. բայց և զգուշանալ  
 Նենգաւորի դէմ խոհեմութիւն է:

ԲՈՒՐԳՈՒՆԴ

Երախտամուր լերբ ճակատ ունի:

ԻԶԱԲՕ

Եւ դուք, ազնիւ դուքս. մի՞թէ կարող էք  
 Այդպէս մոռանալ ամօթ ու պատիւ,  
 Որ ձեռը մեկնէք ձեր հօր սպանողին.  
 Այնքան անմիտ էք, որ հաւատում էք  
 Անկեղծ հաշտութեան Դօֆէնի կողմից,  
 Որին հասցրել էք կործանման դուռը:  
 Եւ հիմա, երբ նա մօտ է իւր անկման,  
 Ուզում էք պահել և անմտութեամբ  
 Ջնջել ձեր գործը: Ահա՛ ձեր միակ  
 Բարեկամները. Անգլիայի հետ  
 Սերտ դաշնակցութեան մէջ է միմիայն  
 Ձեր փրկութիւնը:

ԲՈՒՐԳՈՒՆԴ

Ես Դօֆէնի հետ

Միտք չունիմ հաշտուիլ. բայց Անգլիայի  
 Արհամարահանքին և գոռոզութեան  
 Չեմ կարող տանել:

ԻԶԱԲՕ

Եկէք, մոռացէք

Իերնից թուած խօսքը: Ծանր է այն վեշտը,  
 Որ զօրապետի սիրտը ճնշում է:  
 Կժբարդութիւնը միշտ արդարութեան  
 Չայնին չէ լուծ:— Գրկեցէք միմեանց:  
 Թողէք բժշկեմ շուտով այս վէրքը,  
 Քանի չէ դառել անբժշկելի:

ՏԱԼԹՕ

Ի՞նչ էք կարծում, դուքս: Ազնիւ սիրտը միշտ  
 Բանականութեան պիտի հնազանդի:  
 Իրաւ, Թագուհին խելօք խօսք ասաց  
 Ահա՛ իմ ձեռը. թողէք բժշկեմ  
 Լեզուիս խոցածը:

ԲՈՒՐԳՈՒՆԴ

Այո՛, տիկինը

Խելօք խօսեցաւ: Թող բարկութիւնս  
Տեղե տայ հարկին:

ԻԶԱԲՕ

Թող եղբայրական  
Համբոյր մի կնքէ ձեր հաշտութիւնը.  
Թող քամին տանէ, ինչ որ խօսուեցաւ:

(Բուրգունդը և Տարթոն գրկում են միմեանց:)

ԼԻՕՆԷԼ

(Նայելով այդ խմբին, ինքն իրան:)

Բաղդաւոր լինի խաղաղութիւնը,

Որ հաստատում է դժոխային դէր:

ԻԶԱԲՕ

Զօրապետներ, մենք մի ճակատ կորցրինք.  
Բաղդը մեզ դէմ էր. բայց մի վհատիք:

ԴօՖէնն երկնքի պաշտպանութենից

Կարեց իւր յոյսը և սատանայի

Օգնութեան դիմեց: Բայց ի զուր մատնեց

Իւր հողին դժոխքին, որ նրան չի փրկի:—

Թշնամու զօրքին առաջնորդում է

Մի յաղթող աղջիկ, թող ևս էլ ձերին

Առաջնորդ լինիմ:

ԼԻՕՆԷԼ

Տիկին, լաւ կանէք

Փարիզ յետ դառնաք: Մեր զէնքով, ոչ թէ

Կանանց օգնութեամբ ուզում ենք յաղթել:

ՏԱԼԲՕ

Գնացէք այստեղեց: Ձեր եկած օրից

Կորաւ մեր զէնքի յաջողութիւնը:

ԲՈՒՐԳՈՒՆԴ

Գնացէք, լաւ չէ ձեր ներկայութիւնը,

Զօրքին ախորժ չէ ձեր տեսութիւնը:

ԻԶԱԲՕ (զարմացած նայում է նոցա:)

Բուրգունդ, դ՞ուք նոյնպէս միաբանում էք

Իմ դէմ ապերախտ այս լորդերի հետ:

ԲՈՒՐԳՈՒՆԴ

Գնացէք, զինուորը անսիրտ է կռվում,

Կարծելով, թէ ձեր գործն է պաշտպանում:

ԻԶԱԲՕ

Հազիւ միմեանց հետ հաշտեցրի ես ձեզ,  
Հիմա իմ դէմ էք դուք միաբանվում:

ՏԱԼԲՕ

Գնացէք, Տէր ընդ ձեզ: Հեռացէք, տիկին,  
Եւ էլ դէերից վախենալու չենք:

ԻԶԱԲՕ

Չէ որ ձեր անկեղծ դաշնակիցն եմ ես,

Չէ որ ձեր գործը և իմն է նոյնպէս:

ՏԱԼԲՕ

Ձերը մերը չէ: Մենք օրինաւոր

Գործի համար ենք պատերազմ վարում:

ԲՈՒՐԳՈՒՆԴ

Հօրս սպանութեան վրէժն եմ առնում ես,

Որդու սուրբ պարտքը սրբում է զէնքս:

ՏԱԼԲՕ

Բայց ահա, տիկին, ուղիղ ասեմ,

Ձեր թշնամութիւնը ԴօՖէնի դէմ

Չեն արդարացնի ոչ մարդ, ոչ Աստուած:

ԻԶԱԲՕ

Անիծած լինի մինչև տասը ցեղ,

Նա մեղանչել է իւր մօր կեանքի դէմ:

ԲՈՒՐԳՈՒՆԴ

Հօր և ամուսնու վրէժը առաւ նա:

ԻԶԱԲՕ

Նա յանդգնեցաւ իմ վարքը քննել:

ԼԻՕՆԷԼ

Ի հարկէ որդուն անվայել է այդ:

ԻԶԱԲՕ

Նա ինձ աքտրեց:

ՏԱԼԲՕ

Հասարակութեան

Կամքը կատարեց:

ԻԶԱԲՕ

Անիծած լինիմ,

Թէ ներեմ նորան: Եւ դեռ չըտիրած

Իւր հօր աթոռին—

ՏԱԼԲՕ

Լաւ է կրգոհէք

Դուք մօր պատիւը:

ԻԶԱԲՕ

Դուք դեռ չըզիտէք,

Թոյլ արարածներ, թէ վերաւորուած

Մօր սիրտը ինչեր կարող է անել:

Ես սիրում եմ ինձ բարիք անողին

Եւ ատում եմ ինձ վերաւորողին,

Երբ որ մանաւանդ յատուկ որդիս է:

Ես կեանք տուի նրան և յետ կըխլեմ,

Երբ որ ամբարիշտ մեծամտութեամբ

Վերաւորում է հարազատ ծոցը,

Որ պահէ նորան: Դուք, որ որդուս դէմ

Պատերազմում էք, դուք ոչ իրաւունք

Ունիք, ոչ պատճառ կողոպտել նորան:

Ի՞նչ յանցանք ունի ձեր դէմ Կօֆէնը,

Կամ իւր որ պարտքը նա չըկատարեց:

Ձեզ զրգռում է փառասիրութիւնն

Եւ ստոր նախանձը: Ես կարող եմ նրան

Համարձակ ատել, նա իմ ծնունդն է:

ՏԱԼԲՕ

Վրէժխնդրութենից ճանաչում է նա

Հարազատ մօրը:

ԻԶԱԲՕ

Թշուառներ, ինչպէս

Ատում եմ ես ձեզ: Դուք խարում էք ձեզ

Եւ ամբողջ աշխարհ: Դուք, Անգլիացիք

Աւազակի պէս յափշտակում էք

Ֆրանսիան, թէև իրաւունք չունիք

Ձիու սմբակի չափ հողի վերայ—

Եւ այս դուքսը, որ բարի է կոչվում,

Սա վաճառել է իւր հայրենիքը

Բնիկ տէրութեան թշնամիներին:—

Արդարութիւնը ձեզ անձանօթ է—

Ես թշնամի եմ կեղծաւորութեան,

Թող ինձ աշխարհը տեսնէ, ինչպէս կամ:

ԲՈՒՐԴՈՒՆԳ

Շատ ճշմարիտ է: Հաստատուն կամբով

Փառաւորուած էք:

ԻԶԱԲՕ

Ես էլ կիրք ունիմ,

Տաք արիւն, ինչպէս և ուրիշները:

Ես եկայ այստեղ, որ ապրիմ իբրև

Թագուհի, ոչ թէ միայն երևիմ:

Միթէ անզգայ պիտի մնայի

Ես ուրախութեան, որ չար բաղբս ինձ

Ծաղիկ հասակում կապեց խելացնոր

Մի ամուսնու հետ: Կեանքիցս աւելի

Սիրելի է ինձ ազատութիւնս.

Եւ ով որ նորան արգելք կրդնէ—

Բայց ինչի՞ ձեզ հետ վիճում եմ ես իմ

Իրաւունքի վրայ: Ձեր երակների

Արիւնը թանձր է: Դուք ուրախանալ

Չըզիտէք, զիտէք միայն կատաղել:

Եւ այս դուքսը, որ իւր ամբողջ կեանքում

Երբեմն չար էր, երբեմն բարի,

Սա ընդունակ չէ ոչ սրտանց ատել,

Ոչ սրտանց սիրել:— Ես գնում եմ Մէլիւն

(ցոյց տալով Վիճնէլի վերայ)

Սորան ինձ տուէք, որ չըձանձրանամ,

Իսկ դուք կարող էք ձեր ուղածն անել:

Էլ չեմ հարցնելու ոչ Անգլիացոյց

Ոչ Բուրգունդեցոյց:

(Նա նշան է տալիս իւր մանկաւակին և ուզում է դնալ:)

ԼԻՕՆԷԼ

Միամիտ եղէք,

Բոլոր Ֆրանսիացի գեղեցիկ տղերանց

Որոնց կըբռնենք, Մէլիւն կուղարկենք:

ԻԶԱԲՕ (յետ գալով)

Դուք իմանում էք միայն սուր շարժել,

Իսկ Ֆրանսիացին զիտէ նուրբ խօսել:

(դուրս է գնում:)

### ԵՐՐՈՐԴ ԵՐԵՒՈՅԹ

ՏԱԼԲՕ, ԲՈՒՐԴՈՒՆԳ, ԼԻՕՆԷԼ

ՏԱԼԲՕ

Չարմանալի կին:

ԼԻՕՆԷԼ

Այժմ, ասպետներ,

Ի՞նչ էք մտածում: Պէտք է փախուստը  
Շարունակե՞նք, թէ խնայն յետ դառնանք,  
եւ յարձակուելով թշնամու վերայ,  
Ջնջենք այսօրուայ մեր նախատինքը:

ԲՈՒՐԳՈՒՆԴ

Մենք շատ սկար ենք, զօրքը ցրուած է,  
եւ դեռ երկիւղը շարունակվում է:

ՏԱԼԲՕ

Մեզ ընդհանր կոյր երկիւղն յաղթեց:  
Այդ զարհուրելի ցնորքի պատկերը  
Շուտ կը չքանայ, թէ մօտից նայենք:  
Եւ այդ պատճառով այս է խորհուրդս.  
Առաւօտը վաղ կրկին գետն անցնենք  
Եւ խնայն վաղենք թշնամու վերայ:

ԲՈՒՐԳՈՒՆԴ

Լաւ մտածեցէք:

ԼԻՕՆԵԼ

Ներեցէք, իշխան,

Եւ աւերորդ է երկար մտածել.  
Պէտք է կորցրածը շուտով յետ դարձնենք,  
Թէ չէ յաւիտեան խայտառակուած ենք:

ՏԱԼԲՕ

Արդէն վճռած է, վաղը կը կռուենք,  
Եւ այս ցնորքը ջնջելու համար,  
Որ կուրացնում է և վըհատեցնում  
Մեր զինուորներին, եկէք այդ աղջիկ  
Սատանայի հետ անձամբ կռիւ մտնենք:  
Եթէ կը կանգնի մեր սրբի առաջ,  
Եւ ուրիշ անգամ չի փնասի նա մեզ,  
Իսկ թէ հրաժարուի մեզ հետ կռուելուց,  
Զօրքը կազատուի կախարդութենից:

ԼԻՕՆԵԼ

Այդ թեթեւ խաղը ես կը կատարեմ  
Առանց մի կաթիլ արիւն թափելու:  
Ես մտադիր եմ կենդանի բռնել  
Այդ երեւոյթը և իւր սիրական  
Դիւնուա կոմսի աչքի առաջը  
Բազուկներին վըայ բերել բանակը  
Մեր զինուորների զուարճութեան համար:

ԲՈՒՐԳՈՒՆԴ

Շատ մի՛ խոստանաք:

ՏԱԼԲՕ

Թէ ձեռս կընկնի,

Քնքոյշ չեմ գրկի: — շիմա մի թեթեւ  
Քրնով նորոգենք մեր զօրութիւնը  
Եւ վաղը զընանք պատերազմելու:  
(Նոքա դուրս են գնում:)

ՉՈՐՐՈՐԴ ԵՐԵՒՈՅԹ

Յ Ո Վ Հ Ա Ն Ն Ա, զրօշը ձեռքն, դիմին սաղաւարտ և կուրծքը զրահապատ,  
Իսկ ընդհանրապէս կանացի հաղուստով: Դ Ի Ի Ն Ո Ւ Ա, Լ Ա Հ Ի Ր, Ա Ս-  
Պ Ե Տ Ն Ե Ր և Ջ Ի Ն Ո Ւ Ո Ր Ն Ե Ր երևում են ժայռի վերայ, լուռ անց են  
կենում և շուտով դուրս են գալիս բեմի վերայ:

ՅՈՎՀԱՆՆԱ

(Իւր շուրջ եզրը ասպետներին, այն ինչ զօրքը շարունակում է իւր ըն-  
թացքը ժայռի վերայ:)

Պատնէջը անցանք, բանակի մէջ ենք:  
Շիմա ձգեցէք ձեզնից զիշերի  
Լուկ ծածկոցը, որ ձեր ընթացքը  
Վարագուրում է, և ձեր ահաւոր  
Ներկայութիւնը շուտ իմաց արէք  
Թշնամուն բարձր աղաղակելով.  
— Աստուած և կոյսը:

ԱՄԵՆՔԸ

(Աղաղակում են զէնքերը՝ սասակութեամբ շարժելով:)

Աստուած և կոյսը:

(Փող և թմրուկ:)

ՊԱՀԱՊԱՆ (բեմի ետեր:)

Թշնամին եկաւ, թշնամին եկաւ:

ՅՈՎՀԱՆՆԱ

Շուտ ջահեր բերէք, վրաններն այրեցէք,  
Կատաղի բոցը թող կրկնապատկէ  
Նոցա սարսափը, կործանիչ մահը  
Թող ամեն կողմից պաշարէ նոցա:

(Զինուորները շտապով դուրս են գնում: Յովհաննան ուղում է հետ եւ  
նոցա:)

ԴԻԻՆՈՒԱ (բռնում է նորան:)

Դու կատարեցիր պարտքդ: Յովհաննա,

Բանակը բերիր մեզ և թշնամուն  
Մեր ձեռք տուիր. բայց հիմա ինքդ  
Հեռացիր կռուից, թող մենք որոշենք  
Արիւնոտ գործը:

ԼԱ ՀԻՐ

Դրօշը կրելով

Մարուր ձեռիդ մէջ, առաջ տար զօրքը  
Դէպի յաղթութիւն, բայց մի՛ գործածիր  
Մահաբեր սուրը: Մի՛ փորձիր կռուի  
Խաբեբայ աստծուն, որովհետեւ նա  
Կոյր է և անխնայ:

ՅՈՎՀԱՆՆԱ

Ո՞վ կարող է ինձ

Դադար հրամայել, ինձ առաջնորդող  
Ոգուն պատուէր տալ: Նետը պիտ' թռչի,  
Ուր նետեց նորան արձակող ձեռը:  
Պէտք է Յովհաննան միշտ այնտեղ լինի,  
Ուր որ վտանգ կայ: Ոչ այսօր, ոչ էլ  
Այստեղ որոշուած է ինձ մահ գտնել:  
Պէտք է թագ տեսնեմ արքայիս զլսին:  
Կեանքս չի խլի թշնամու ձեռը,  
Մինչև կատարեմ Աստուծոյ պատուէրը:

(Դուրս է գնում:)

ԼԱ ՀԻՐ

Եկէք Դիւնուա, հետեանք նորան,  
Մեր կուրծքը լինի նորան մի վահան:  
(Դուրս են գնում:)

### ՀԻՆԳԵՐՈՐԴ ԵՐԵՒՈՅԹ

ԱՆԳԼԻՒԱԿԱՆ ԶԻՆՈՒՈՐՆԵՐ փախչում են բեմի վերայ: Փոքր ինչ  
յետոյ ՏԱԼԲՕ:

ԱՌԱՋԻՆ

Կախարդ աղջիկը բանակի մէջ է:

ԵՐԿՐՈՐԴ

Անկարելի է: Ի՞նչ տեղից եկաւ:

ԵՐՐՈՐԴ

Օղի միջ անցաւ: Սատանան օգնեց:

ՉՈՐՐՈՐԴ և ՀԻՆԳԵՐՈՐԴ

Փախչենք, շուտ փախչենք: Մահը գայիս է:  
(Դուրս են գնում:)

ՏԱԼԲՕ (զայիս է)

Ել չեն լուսւմ ինձ — ջեն ուղում կանգնել.  
Հնազանդութիւնը ոչնչացել է:  
Կարծես դժոխքը արձակել է իւր  
Լէզէոնները: Քաջն ու երկչոտը,  
Ցնորքից հալածուած, խելացնորի պէս  
Փախչում են առանց ետեւ նայելու:  
Փոքր խումբ անգամ չեմ կարողացել  
Կազմել թշնամու առաջն առնելու,  
Որ հեղեղի պէս բանակն է վազում:  
— Միայն ես եմ լուրջ, այն ինչ ամենքը  
Իմ շուրջ տենդային ջերմով ցնորուած են:—  
Մենք պիտի փախչենք այս թոյլ, փափկասէր  
Ֆրանսիացոց առաջ, որոնց քսան անգամ  
Արդէն յաղթել ենք:— Արդեօք ո՞վ է այն  
Անյաղթ աղջիկը, ահեղ դիցուհին,  
Որ պատերազմի բաղբն յանկարծ փոխեց.  
Ո՞վ է, որ երկչոտ եղջերուներից  
Բաղկացած մի զօրք, առիւծներ փոխեց:  
Մի միմտուհի, որ դիցապիտուհու  
Առաջուց սերտած դերը խաղում է,  
Մի՞թէ կարող է զարհուրեցնել բուն  
Դիւցազուններին: Մի կի՞ն պիտի խէ  
Պատերազմական բոլոր պարծանքս:

ԶԻՆՈՒՈՐ (ներս վազելով.)

Աղջիկը, փախիր, փախիր, զօրապետ:

ՏԱԼԲՕ (սուրբ նորա կուրծքը կոխելով.)

Փախիր դժոխքը: Այս սուրբ մահով

Կը պատուհասէ, ով որ երկիւղի

Եւ փախչելու վրայ մի բառ ինձ կասէ:

(Դուրս է գնում:)

### ՎԵՑԵՐՈՐԴ ԵՐԵՒՈՅԹ

Տեսարանը բացվում է: Երևում է անդիպական բանակը բոլորը բոցի մէջ,  
լսվում է թմբկի ձայն: Երևում են փաղչողներ և հալածողներ: Փոքր ինչ  
յետոյ զայիս է ՄՕՆԳՕՄԷՐԻ

ՄՕՆԳՕՄԷՐԻ

Ո՞ր փախչեմ: Շուրջս թշնամիք և մահ:

Այստեղ զայտացած զօրապետը իւր

Սպառնական սրով, արգելելով մեր  
 Փախուստը, մահուան առաջն է քշում,  
 Այնտեղ ահռելի աղջեկը ինչպէս  
 Կատաղէ հրդէհ ամենքին ջնջում—  
 Եւ շուրջ չը կայ թուփ, որ ինձ թաքցնէր,  
 Չը կայ այր, որ տար ապաստանարան:  
 Երանի երբէք, ծովը անցնելով,  
 Չը դայի այստեղ, թշուառականս:  
 Սընտի յոյսը ինձ յիմարացրեց,  
 Աժան փառք գտնել այս պատերազմում,  
 Եւ հիմա ձգեց ճակատագիրս  
 Ինձ այս սոսկալի կոտորածի մէջ:—  
 Ա՛խ, երանի թէ հիմա լինէի  
 Ես իմ հօր տանը, Սավէրնի կանաչ  
 Ափերի վերայ, ուր տրամութեան մէջ  
 Թողի իմ մօրը և անոյշ հարսիս

(Յովհաննան երևում է հեռուից:)

Վայ ինձ, այս ի՞նչ է: Ահա այնտեղ է  
 Այն զարհուրելին: Նա բարձրանում է  
 Հրդէհի միջեց, ինչպէս չար ոգին  
 Դժոխքի անդունդից:—Ո՛ւր փախչեմ նրանից:  
 Ահա տեսաւ ինձ, հրացայտ աչքերով  
 Արդէն կախարդեց: Պինդ փաթաթվում է  
 Ոտներիս վերայ դիւթական կծիկը,  
 Եւ ես շղթայած չեմ կարող փախչել:  
 Աչքս ակամայ ստիպուած է նայել  
 Այն սարսափելի սպանիչ պատկերին:

(Յովհաննան մի քանի քայլ առաջ գալով, կրկին կանգնում է:)

Եկաւ: Չեմ սպասի, մինչև կատաղին  
 Յարձակուի ինձ վրայ: Ես կրփաթաթվեմ  
 Նորա ծնկներին, կաղաչեմ խնայել  
 Իմ մատաղ կեանքը: Նա կին է, զուցէ  
 Արտասուքներով շարժեմ նրա սիրտը:

(Այն ինչ ուզում է մօտենալ Յովհաննային, սա շուտ առաջ է գալիս:)

**ԵՕԹՆԵՐՈՐԴ ԵՐԵՒՈՅԹ**

ՅՈՎ ՀԱՆՆԱ, ՄՕՆԳՕՄԵՐԻ:

ՅՈՎ ՀԱՆՆԱ

Դու պիտի մեռնիս: Մի անգլիացի

Մայր է ծնել քեզ:

ՄՕՆԳՕՄԵՐԻ (ընկնում է նորա առաջ:)

Կայ, ո՛վ ահռելի,

Մի սպանիր, անգէն եմ և անպաշտպան:  
 Ահա ձգել եմ սուր ու վահանս,  
 Քո ոտն եմ ընկել և աղաչում եմ  
 Խնայիր արևս, ա՛ռ քեզ մի փրկանք:  
 Հայրս հարուստ է, Վալիս նահանգում,  
 Ուր օցապոյտ Սավէրնը կանաչ  
 Մարգերի միջով հանդարտ գլորում է  
 Արծաթաջուրը, յիսուն գիւղ ունի:  
 Մեծ գումար ոսկով կրթափէ նա իւր  
 Սիրական որդուն, եթէ իմանայ,  
 Որ ես Յրանսիացոց բանակի մէջ եմ:

ՅՈՎ ՀԱՆՆԱ

Անմիտ և թշուառ: Կոյսի ձեռն ընկար,  
 Որից փրկութիւն երբէք մի՛ յուսար:  
 Եթէ չար բաղդ կօկորդիլոսին  
 Մատնէր քեզ, կամ թէ կատաղի վագրին,  
 Եթէ խէիր առիւծի ձագը,  
 Կրգտնէիր գութ և կարեկցութիւն.  
 Բայց մահաբեր է ինձ հանդիպելը:  
 Որովհետև ես հզօր հոգու հետ  
 Կապուած եմ անխախտ մի դաշնադրութեամբ,  
 Չոհեւ իմ սրին բոլոր կենդանի  
 Արարածներին, որոնց դէմ բերէ  
 Ինձ պատերազմի անգութ աստուածը:

ՄՕՆԳՕՄԵՐԻ

Խօսքդ սոսկալի է, հայեացքդ հեղ,  
 Մօտից նայելիս զարհուրելի չես,  
 Քաղցր պատկերդ զրուեց իմ սիրտը:  
 Աղաչում եմ քեզ քո քնքոյշ սեռի  
 Գթութեամբ, խնայիր մատաղ արևս:

ՅՈՎ ՀԱՆՆԱ

Սեռս մի՛ յիշիր. ինձ կին մի՛ կանչեր:  
 Ինչպէս անմարմին արարածները,  
 Որոնց ծանօթ չէ երկրաւոր սէրը,  
 Ես չեմ պատկանում մարդկային ցեղին,  
 Դու այս զրահի տակ սիրտ մի՛ որոնիր:

ՄՕՆԳՕՄԵՐԻ

Ուրեմն սիրոյ սուրբ օրէնքներով,  
 Որոնք պաշտելի են ամեն սրտին  
 Երդուեցնումեմ քեզ: Տանը թողել եմ  
 Սիրելի հարսիս, քեզ պէս գեղեցիկ  
 Եւ ծաղկափթիթ, որ իւր սիրելու  
 Դարձին է սպասում: Ո՛հ, թէ յոյս ունիս  
 Սիրել և սիրով երջանիկ լինել,  
 Մի անգթութեամբ բաժնիր երկու սիրտ,  
 Որոնք կապուած են սիրոյ սուրբ կապով:

ՅՈՎՀԱՆՆԱ

Դու միայն կանչումես երկրաւոր, օտար  
 Աստուածներ, որոնք սուրբ չեն ինձ համար:  
 Ես չեմ ճանաչում սիրոյ շողկապը,  
 Որի անուամբ դու երդուեցնումես ինձ.  
 Եւ երբէք նորան ծառայելու չեմ:  
 Կեանքդ պաշտպանիր, մահը կանչում է:

ՄՕՆԳՕՄԵՐԻ

Ապա ողորմիր խեղճ ծնողներին,  
 Որոնց թողել եմ: Դու էլ անկասկած  
 Ունիս ծնողներ, որոնց տանջում է  
 Հոգսը քո մասին:

ՅՈՎՀԱՆՆԱ

Թշուառ դու, ի՞նչ ես  
 Յիշեցնում, քանի՞ Ֆրանսիացի մայրեր  
 Մնացին անզաւակ, մանուկներ անհայր  
 Հարսեր անփեսայ ձեր ձեռով: Այժմ  
 Թող անգլիացի մայրերը նոյնպէս  
 Զգան նոյն կսկիծը և նոյնպէս ողբան,  
 Ինչպէս ողբացին Ֆրանսիացի կանայք:

ՄՕՆԳՕՄԵՐԻ

Ո՛հ, ծանր է մեռնել օտարութեան մեջ:

ՅՈՎՀԱՆՆԱ

Ո՞վ կանչեց ձեզ այս օտար երկիրը,  
 Որ ոչնչացնէք ծաղկած արտերը,  
 Արտաքսէք մեզ մեր հայրենի տներէց  
 Եւ պատերազմի հրդէհը ձգէք  
 Մեր խաղաղասէր քաղաքների մէջ:

Մեծամիտ սրտով երազում էիք,  
 Ազատ Ֆրանսիացուն անարգ ստրուկ շինել,  
 Այս մեծ երկիրը նաւակի նման  
 Ձեր մեծ ծովային նաւի հետ կապել:  
 Յիւմարներ, զիտէք, Ֆրանսիայի դրօշը  
 Աստուծոյ աթուռի մօտ է ծածանում.  
 Հեշտ է ձեզ խելը երկնային Սայլեց  
 Մի աստղ, քան մի գիւղ այս տէրութենից,  
 Որ միշտ պիտի մնայ հաստատ, անբաժան:  
 Վրէժի օրն եկաւ: Դուք էլ կենդանի  
 Յետ չէք անցնելու սրբազան ծովը,  
 Որով բաժնել է Աստուած ձեզ և մեզ,  
 Եւ որը անցնել յանդգնեցաք դուք:

ՄՕՆԳՕՄԵՐԻ (Թողնում է նորա ձեռքը)

Ո՛հ, պիտի մեռնիմ, մահս ըզգում եմ:

ՅՈՎՀԱՆՆԱ

Մեռիր, բարեկամ: Մի դողար մահից,  
 Մեր ճակատագրից:—Տես, ես մի կոյս եմ,  
 Մի հովիւ աղջկի: Հովուական անմեղ  
 Յուպը կրող ձեռս սովոր չէ սրին.  
 Սակայն խուսելով հայրենի դաշտից,  
 Հօրս, սիրելի քոյրերիս գրկից,  
 Ստիպուած եմ այստեղ — Աստուծոյ հրամանով,  
 Ոչ իմ ցանկութեամբ, ձեզ համար պատիժ  
 Ինձ ոչ խնդութիւն, իբրև ահաւոր  
 Տեսիլ մահ սիւռել և վերջը ինքս էլ  
 Մահու դոհ լինել: Ել չեմ տեսնելու  
 Հայրենի տունս: Դեռ ձեզնից շատին  
 Մահ կրպատւած եմ. էլ շատ կանանց  
 Այրի կըթողնեմ, բայց վերջը ինքս էլ  
 Նոյնպէս կըմեռնեմ և կըլացնեմ  
 ճակատագիրս:—Լրացրու դու քոնք.  
 Շուտ վեր առ սուրդ և կռուիք կեանքի  
 Քաղցր աւարի համար միասին:

ՄՕՆԳՕՄԵՐԻ (կանգնելով)

Եթէ դու ինձ պէս մահկանացու ես,  
 Եւ կարելի է քեզ վերաւորել,  
 Գուցէ վեճակուած լինի իմ բազկին,  
 Ուղարկելով քեզ դժոխքի անդունդը,

Ազատել Անգլիան անբաղդութենից:  
Ողորմած Աստուծոն յանձնում եմ բաղդս.  
Դու էլ, անիծած, կանչիր զժողովը  
Գալ քեզ օգնութիւն: Պաշտպանիր կեանքդ:

(Նա վեր է առնում վահան և սուր և յարձակվում է Յովհաննայի վերայ:  
Հեռուից լսվում է պատերազմական երաժշտութիւն: Կարճ մենամարտու-  
թենից յետոյ ընկնում է Մօնթօմէրին:)

**ՈՒԹԵՐՈՐԴ ԵՐԵՒՈՅԹ**

ՅՈՎՀԱՆՆԱ (մենակ)

Ինքդ դիմեցիր մահուան:— Գնաս բարով:

(Նա հեռանում է նորանից և կանգնում է մտածմունքների մէջ ընկղմած:)

Ո՛վ սուրբ կոյս, ինձնով հրաշքներ ես դործում:  
Դու ոյժ ես տալիս իմ սկար բազկին,  
Սիրտս խտութեամբ զինաւորում ես:  
Կարեկցութիւնը հալում է հոգիս,  
Ձեռս դողում է հակառակորդիս  
Ծաղիկ հասակը ոչնչացնելու,  
Կարծես տաճարի սուրբ շէնքն եմ քանդում.  
Ես սարսափում եմ փայլուն սրի առաջ.  
Բայց երբ հարկը գայ, զօրութիւնն էլ կայ,  
Եւ թոյլ ձեռիս մէջ սուրբ ինքն իրան  
Շարժվում է իբրև էակ բանական:

**ԻՆՆԵՐՈՐԴ ԵՐԵՒՈՅԹ**

Մ Ի Ա Ս Պ Ե Տ զիմակով, Յ Ո Վ Հ Ա Ն Ն Ա

ԱՍՊԵՏ

Անիծած, հասաւ քո վերջին ժամը,  
Բոլոր բանակում որոնում եմ քեզ:  
Կործանիչ հրէշ, դարձիր զժողովը,  
Որտեղից եկար:

ՅՈՎՀԱՆՆԱ

Ո՛վ ես դու, որին

Իւր չար հրեշտակը առաջս է բերում:  
Քո կերպարանքը իշխանական է  
Անգլիացի չես, այլ Բուրգունդեցու  
Նշանն ես կրում, որի առաջը  
Պիտի խոնարհի իմ սրի ծայրը:

ԱՍՊԵՏ

Դու արժանի չես, անարգ, մեռնելու

Իշխանի ձեռով: Դահլիճի կացինը  
Պէտք է որ կտրէր անիծած գլուխդ,  
Ոչ արքայազուն Բուրգունդի Դքսի  
Ահաւոր սուրբ:

ՅՈՎՀԱՆՆԱ

Ուրեմն դ՞ու ես

Այն ազնիւ դուքսը:

ԱՍՊԵՏ (դիմակը բարձրացնելով):

Ես եմ, ո՛վ թշուառ,

Դողած յուսահատ: Դժոխքն էլ չի օգնի:  
Թոյլերին միայն յաղթել ես մինչ այժմ,  
Հիմա առաջդ տղամարդ է կանգնած:

**ՏԱՍՆԵՐՈՐԴ ԵՐԵՒՈՅԹ**

Դ Ի Ի Ն Ո Ի Ա, Լ Ա Հ Ի Ը, Ա Ռ Ա Ջ Ի Ն Ն Ե Ր Ը

Դ Ի Ի Ն Ո Ի Ա

Ո՛վ Բուրգունդ, դարձիր, այր մարդկանց, ոչ թէ  
Կանանց հետ կռուիր:

Լ Ա Հ Ի Ը

Մենք կրպաշտպանեք

Մարգարէ աղջկայ նուիրական գլուխը:

Սուրդ նախ պէտք է այս սիրտը խոցէ—

ԲՈՒՐԳՈՒՆԴ

Ես չեմ վախենում այս լիրբ աղջկանից,

Ոչ էլ ձեղանից, որոնց սա այնպէս

Խայտառակ կերպով յիմարացրել է:

Կարմիր, Դիւնուա, ամօթ քեզ, Լա Հիւր,

Որ քաջութիւնդ սատանայական

Հնարքով ստորացրիր և կախարդ աղջկայ

Ձինակիր դառար: Եկէք ամենքդ:

Ով սատանային է ապաւինում,

Աստուծոյ օգնութեան յոյսը չունի նա:

(Նորա պատրաստվում են մենամարտելու, Յովհաննան մտնում է նոցա մէջ:)

ՅՈՎՀԱՆՆԱ

Կացէք:

ԲՈՒՐԳՈՒՆԴ

Սիրողիդ համար ես դողում:

Քո աչքի առաջ—

(Յարձակվում է Դիւնուայի վերայ:)

ՅՈՎՀԱՆՆԱ

Կացէք: Մի թոյլ տաք

Լա Հիր: Մի կաթիլ Ֆրանսիական արիւն  
 Պէտք է չըթափուի: Այս վէճը սրբով  
 Որոշուելու չէ. երկինքը ուրիշ.  
 Վճիռ է տուել: — Հեռու միմեանցից,  
 Ասում եմ ես ձեզ—լսեցէք ոգուն,  
 Որ իմ բերանով խօսում է ձեզ հետ:

ԴԻԻՆՈՒԱ

Ի՞նչ ես բարձրացրած բազուկս բռնում  
 Եւ սրի արիւնոտ վճիռն արգելում:  
 Սուրը հանած է: Մի հարուած — Ֆրանսիան  
 Կառնէ իւր վրէժը և կը խաղաղուի:

ՅՈՎ ՀԱՆՆԱ

(Մտնում է նոցա մէջ և բաւական հեռացնում է միմեանցից Գիւնուային:)

Յետ կայ: (Լա Հիրին)

Ձը շարժուիս: Ես պիտի խօսիմ  
 Դքսի հետ:

(Ամենքին հանդարտեցնելուց յետոյ:)

Բուրդոննդ, ի՞նչ ես կամենում,  
 Ո՞վ է թշնամիդ, ո՞ւմն ես որոնում.  
 Ֆրանսիայի զաւակ է այս իշխանը,  
 Ինչպէս և ինքդ, այս քաջ զինուորը  
 Հայրենակիցդ է, ես էլ մի դուստր եմ  
 Քո հայրենիքի: Ամենքս, որոնց  
 Ձգտում ես ջնջել, ամենքս, քոնն ենք—  
 Մեր զիրկը բացէ քեզ ընդունելու,  
 Ծնկները պատրաստ քեզ մեծարելու—  
 Մեր սուրը քո դէմ բուժ է և անդօր:  
 Թէև թշնամու սաղաւարտի տակ,  
 Պատկառելի է մեզ քո երեսը,  
 Որ մեր արքայի դէմքին նման է: —

ԲՈՒՐԳՈՒՆԴ

Քաղցր խօսքերով, հրապուրիչ ձայնով  
 Ուզում ես, կախարդ, զո՞հ քեզ քաշել:  
 Նենգաւոր, դու ինձ չես յիմարացնի:  
 Ականջս ապահով է քո խօսքերի  
 Որոգայթներից, աչքիդ հըրեղէն  
 Նետերը կուրծքիս զրահը չեն ծակի:  
 Առաջ եկ, Գիւնուա: Սըրերով կռուինք,

Ոչ թէ խօսքերով:

ԴԻԻՆՈՒԱ

Նախ խօսք, ապա սուր:

Ի՞նչ ես վախենում այդպէս խօսքերից:  
 Դա էլ վատութեան ապացոյց է և  
 Անիրաւութեան:

ՅՈՎ ՀԱՆՆԱ

Մենք կարիք չունինք

Քեզ խոնարհելու, մենք քո առաջը  
 Աղաչաւոր չենք: — Նայիր չորս կողմդ.  
 Տես, անգլիական բանակն այրուած է,  
 Ձեր սպանուածներով դաշտը ծածկուած է:  
 Լսում ես, ինչպէս մեր փողն հնչում է:  
 Աստուած որոշեց, մերն է յաղթութիւն:  
 Դափնէ գեղեցիկ ճիւղը պատրաստ ենք  
 Բարեկամի հետ սիրով բաժանել:  
 — Ո՛հ, եկ, ո՞վ ազնիւ փախստական, եկ,  
 Ուր իրաւունքն է և յաղթութիւնը:  
 Ահա ես ինքս, աստուածառաքս,  
 Մեկնում եմ քեզ իմ ձեռը իբրև քոյր,  
 Եւ քեզ փրկելով, ուզում եմ մաքուր  
 Կողմը անցկացնել: — Ինքը երկինքը  
 Ֆրանսիայի հետ է: Նրա հրեշտակները—  
 Դու այդ չես տեսնում — պատերազմում են  
 Արքայի համար. նոքա բոլորն էլ  
 Շուշանազարդ են: Մեր գործը ինչպէս  
 Դրօշս սպիտակ է. նորա նշանն է  
 Անարատ կոյսը.

ԲՈՒՐԳՈՒՆԴ

Ստախօսութեան

Խօսքը պատիր է, բայց սա խօսում է  
 Երեսայի պէս: Թէ սատանայի  
 Թեղադրութեամբ է, անմեղութեանը  
 Լաւ է նմանեցրած: — Բայց եկէք կռուենք:  
 Ձգում եմ, ականջս բազկիցս թոյլ է:

ՅՈՎ ՀԱՆՆԱ

Կախարդ ես կանչում ինձ և մեղադրում,  
 Թէ դժոխային հնարք եմ բանեցնում:  
 Մտածիր, մի՞թէ խաղաղացնելը  
 Եւ հաշտեցնելը դժոխքի գործ է,

Մի՞թէ միութեան հողին դալիս է  
 Սանդարամետից: Ի՞նչն է աւելի  
 Անմեղ, սրբազան, մարդկօրէն բարի,  
 Քան հայրենիքի համար կռուիլը—  
 Այդ երբ խանգարուեց բնութեան կարգն այդպէս,  
 Որ երկինքն արդար գործը թողնում է  
 Եւ պաշտպանում են սատանաները:  
 Բայց թէ ասածս բարի է, ապա  
 Ո՞րտեղեց է այդ, թէ ոչ երկնքից:  
 Ո՞վ եկաւ ինձ մօտ արօտատեղին  
 Ինձ պէս միամիտ հովիւ աղջկան  
 Տէրութեան գործերը սովորեցնելու.  
 Իշխանների մօտ երբէք չեմ եղել,  
 Խօսելու արհեստն ինձ անծանօթ է.  
 Բայց այժմ, երբ պէտք է, որ քեզ համոզեմ,  
 Բարձր գործերի հմտութիւն ունիմ.  
 Տէրութիւնների և արքաների  
 Բազըր տեսնում եմ պարզ մտքիս առաջ,  
 Եւ լեզուիս վերայ կայծակներ ունիմ:

ԲՈՒՐԳՈՒՆԻ

(Սաստիկ շարժած դարձնում է աչքերը նորա վերայ և նայում է նորան  
 դարմանքով:)

Այս ի՞նչ եղաւ ինձ, այս ի՞նչ եմ ըզգում:  
 Արդեօք Աստուած է իմ սիրտը փոխում:  
 — Ո՛չ, նա չէ խաբում, անմեղ էակը:  
 Ո՛չ, ո՛չ: Թէ մի հրաշք կուրացնում է ինձ,  
 Ապա երկնային զօրութեամբ է դա:  
 Այո՛, Աստուած է ուղարկել սորան:

ՅՈՎՀԱՆՆԱ

Ո՛հ, նա շարժած է, զուր չաղերսեցի:  
 Բարկութեան ամպը նորա ճակատին  
 Հալուեց, ցօղելով մեղմ արտասուքներ,  
 Եւ խաղաղութեամբ փայլող աչքերից  
 Ծագում է զգացման ոսկէ արևը:  
 — Ձգեցէք զէնքերը: — Կայցրէք սիրտ սրտի—  
 Ահա լալիս է. այժմ նա մերն է:

(Սուրբ և դիօշ ընկնում են նորա ձեռից. նա բազկատարած փազում է  
 դքսի մօտ և սաստիկ ջերմեանդութեամբ գրկում է նորան: Լա Հիբը և  
 Գիւնուան թողնում են զէնքերը և շտապում են գրկել դքսին:)

ԵՐՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

քաղաքական քանակը շարունում  
 մարև գետի վերայ

ԱՌԱՋԻՆ ԵՐԵՒՈՅԹ

ԴԻԻՆՈՒԱ Կ Լ Ա ՀԻՐ

ԴԻԻՆՈՒԱ

Մենք միշտ սրտակից բարեկամ էինք,  
 Մէկ գործի համար պատերազմեցանք,  
 Ամեն նեղութիւն միասին տարանք.  
 Թող կանանց սէրը չըլուծէ կապը,  
 Որ մինչև այսօր միացնում էր մեզ:

Լ Ա Հ Ի Ր

Իշխան, լսեցէք:

ԴԻԻՆՈՒԱ

Դուք սիրում էք այն

Հրաշալի աղջկան. զիտեմ ձեր միտքը:  
 Ուզում էք իսկոյն զնալ արքայի մօտ  
 Եւ այն աղջկան ձեզ պարգև խնդրել: —  
 Արքան կարող չէ ձեր քաջութեանը  
 Այդ արժանաւոր վարձը չը շնորհել,

Բայց լաւ իմացէք — առաջ քան թէ ես  
կը տեսնեմ նորան ուրիշի գրկում —

ԼԱ ՀԻՐ

Լսեցէք, իշխան:

ԳԻՒՆՈՒԱ

Թեթև, անցաւոր

Չէ իմ զգացմունքը, որ կապում է ինձ  
Այն աղջկայ հետ: Մինչև չը տեսայ  
Հրաշալի աղջկան, երբէք շարժել չէր  
Մի կին իմ սիրտը: Երկինքը նորան  
Նշանակել է տէրութեան փրկիչ  
Եւ ինձ ամուսին: Տեսած վայրկեանին  
Ես մի սուրբ երգում արի իմ սրտում  
Նորան իբրև հարս տանել իմ տունը:  
Հզօր կինը միայն կարող է իւր պէս  
Հզօր այր մարդուն բարեկամ լինել.  
Եւ այս բորբոքուող սիրտը ձգտում է  
Իւր նման կուրծքի վրայ հանդստանալ,  
Որ իւր զօրութեան կարող է դիմնալ:

ԼԱ ՀԻՐ

Ինչպէս կարող եմ յանդգնել, իշխան,  
Իմ թող վաստակը ձեր դիւցազնական  
Փառքի հետ չափել: Երբ կոմս Գիւնոււան  
Աստղարէզ մանի, պէտք է հեռանայ  
Ամեն մի մրցող: Բայց արժանի չէ  
Նուաստ հովվուհին ձեզ կին լինելու.  
Եւ արքայական ազնիւ արիւնք,  
Որ վազում է ձեր երակներին մէջ,  
Հակառակ է այդ միաւորութեան:

ԳԻՒՆՈՒԱ

Նա էլ սուրբ բնութեան զաւակ է ինձ պէս  
Եւ ինձ համածին: Ի՞նչպէս կարող է  
Անպատուել նա մի իշխանի ձեռք.  
Որ արդէն հարս է սուրբ հրեշտակների.  
Որի գլխի շուրջ երկնային լոյսը

Բողոր թագերից պայծառ է փայլում.  
Որ աշխարհային ամեն մեծութիւն  
Տեսնում է խոնարհ իւր ոտների տակ.  
Որովհետև, թէ դիշուին իրար վրայ  
Մինչև աստղերը թագաւորների  
Բողոր գահերը, երբէք չեն հասնի  
Այն բարձրութեանը, ուր նա կանգնած է  
Իւր հրեշտակային փառաւորութեամբ:

ԼԱ ՀԻՐ

Թող արքան վճռէ:

ԳԻՒՆՈՒԱ

Ոչ, ինքը վճռէ:

Նա, որ ազատեց Ֆրանսիան, պէտք է  
Ինքը իւր սիրտը ազատ ընծայէ:

ԼԱ ՀԻՐ

Ահա ինքն արքան արդէն զալիս է:

### ԵՐԿՐՈՐԴ ԵՐԵՒՈՅԹ

ԿԱՐԼՈՍ, ԱԳՆԷՍ ՍՕՐԷԼ, ԳԻՒ ՇԱՏԷԼ, ՇԱՏԻԼԻՕՆ և  
ԱՌԱՋԻՆՆԵՐԸ

ԿԱՐԼՈՍ (Շատիլիօսին)

Գալի՞ս է ուրեմն: Ուզում է ինձ իւր  
Արքայ ճանաչել և ինձ հնազանդիլ:

ՇԱՏԻԼԻՕՆ

Այո՛, տէր. այստեղ քո արքայական  
Շալօն քաղաքում, դուքսը, իմ տէրը,  
Կընկնի քո ոտը: — Նա ինձ հրամայեց  
Գալ, ողջունել քեզ իբրև արքայիս,  
Շուտով և ինքը այստեղ կը լինի:

ԿԱՐԼՈՍ

Գալիս է: Ո՛հ, ինչ զեղեցիկ օր է,  
Որ ուրախութիւն և խաղաղութիւն

Եւ հաշտութիւն է բերում մեզ համար:

ՇԱՏԻԼԻՑՆ

Իմ տէրը կը դայ այստեղ երկհարիւր  
Ձիաւորներով. նա քո առաջը  
Կընկնի ծնկան վրայ, սակայն յոյս ունի  
Որ դու չես թող տայ և սիրով նորան  
Կը գրկես իբրև քո ազգականին:

ԿԱՐԼՈՍ

Կարօտեմ սխմել նորան իմ սրտին:

ՇԱՏԻԼԻՑՆ

Գուքը խնդրում է առաջին անգամ  
Հին վէճի մասին խօսք չը պատահի:

ԿԱՐԼՈՍ

Անցեալն յաւիտեան թող տանէ լէտան,  
Միայն թէ զուարթ օրեր տայ մեզ ապագան:

ՇԱՏԻԼԻՑՆ

Ամենքը, որոնք Բուրգունդի համար  
Պատերազմել են, պէտք է հաշտութեան  
Մասնակից լինին:

ԿԱՐԼՈՍ

Այո՛: Այդպէսով

Կը կրկնապատկեմ իմ տէրութիւնը:

ՇԱՏԻԼԻՑՆ

Այս խաղաղութեան պէտք է մասնակցի  
Թագուհի մայրդ, թէ համաձայնի:

ԿԱՐԼՈՍ

Նա է, որ իմ դէմ պատերազմում է,  
Եւ երբ կամենայ, կ'իւր էլ չը կայ:

ՇԱՏԻԼԻՑՆ

Տաներկու ասպետ թող երաշխաւոր  
Լինին քո խօսքին:

ԿԱՐԼՈՍ

Իմ խօսքը սուրբ է:

ՇԱՏԻԼԻՑՆ

Եպիսկոպոսը պէտք է երկուսիդ  
Նշխար բաժանէ իբրև գրաւական  
Անկեղծ հաշտութեան:

ԿԱՐԼՈՍ

Թող չարժանանայ

Հոգիս փրկութեան, եթէ անկեղծ չէ  
Սրտիս զգացմունքը: Ասա, էլ ուրիշ  
Ի՞նչ է պահանջում ինձանից դուքսը:

ՇԱՏԻԼԻՑՆ

(Մի հայեացք ձգելով իւր շուրջ:)

Տէր արքայ, այստեղ տեսնում եմ մէկ մարդ,  
Որ կարող է իւր ներկայութեամբը  
Առաջին ողջոյնը թունաւորել:

(Գիւ Շատէլը լուռ նեռանում է:)

ԿԱՐԼՈՍ

Գընա, Գիւ Շատէլ, պահուիր մինչև որ  
Կը կարողանայ դուքսը քեզ տեսնել:

(Նա նայում է նորա ետևից, յետոյ շուտ մօտ է գնում և գրկում է նորան:)

Ազնիւ բարեկամ, զիտեմ պատրաստ ես  
Իմ հանգստութեան համար աւելի  
Մեծ զոհ բերելու:

(Գիւ Շատէլը դուրս է գնում:)

ՇԱՏԻԼԻՑՆ

Մնացած կէտերը

Այս թղթի մէջն են:

ԿԱՐԼՈՍ (Արքեպիսկոպոսին)

Կարգաւորեցէք,

Մենք համաձայն ենք ամեն պայմանին,  
Ոչինչ չենք խնայի մի բարեկամի  
Սիրաբ չահելու: Գնացէք, Գիւնուա,  
Հարիւր ասպետով զիմաւորեցէք  
Դքսին: Թող զօրքը կանաչ ճիւղերով  
Պահուած լնդունէ իւր եղբայրներին,  
Տօնախմբութեան համար զարդարուի

Ամբողջ քաղաքը, և զանգակները  
 Յայտնեն բարձրաձայն, թէ ահա նորից  
 Սիրով միացան Բուրգունդն ու Ֆրանսիան:  
 (Մտնում է մէկ մանկլաւիկ: Լսվում է փողի ձայնը:)  
 Լսեցէք, այս ի՞նչ է նշանակում:

ՄԱՆԿԼԱՒԻԿ

Բուրգունդի դուքսը քաղաքն է մտնում:

ԳԻՒՆՈՒԱ

(Դուրս գնալով Լա Հիրի և Շատիլիօնի հետ:)  
 Գնանք, դիմաւորենք:

ԿԱՐԼՈՍ (Սօրէլին.)

Ագնէս, լալի՛ս ես,  
 Համարեա ես էլ այժ չունիմ տանել  
 Այս տեսարանը: Քանի՛ մարդ պէտք է  
 Ձոհ լինէր մահուան, մինչև որ այսօր  
 Կրկին տեսնում ենք իրար հաշտ աչքով:  
 Ամեն փոթորիկ ունի իւր վերջը,  
 Մռայլ գիշերը փոխվում է լոյս օր,  
 Պտուղն էլ հասնում է իւր ժամանակին:

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

(Նայում է պատուհանից.)

Մեծ դժուարութեամբ անցնում է դուքսը  
 Բազմութեան միջով: Ձիուց վեր բերին,  
 Եւ համբուրում են նորա հանդերձը:

ԿԱՐԼՈՍ

Այո՛, բարի է իմ ժողովուրդը,  
 Նորա թէ սերը, թէ բարկութիւնը  
 Շուտ է բորբոքվում—ինչ շուտ մոռացան,  
 Որ հենց այդ դուքսն էր, որ կոտորում էր  
 Նոցա հայրերին և որդիներանցը:  
 — Պահիր քեզ, Սօրէլ: Նաև քո սասաիկ  
 Ուրախութիւնը կարող է մի խայթ  
 Լինել նրա սրտին: Այստեղ նրան ոչինչ  
 Թող չամաչեցնէ, ոչ էլ տխրեցնէ:

ԵՐՐՈՐԴ ԵՐԵՒՈՅԹ

ԲՈՒՐԳՈՒՆԴԻ ԳՈՒՔՍԸ, ԳԻՒՆՈՒԱ, ԼԱ ՀԻՐ, ՇԱՏԻԼԻՕՆ  
 և էլի երկու ուրիշ ասպետ դքսի հետևորդներից: Դուքսը կանգնում է  
 զբան մէջ, ԹԱԳԱՒՈՐԸ գնում է նորա կողմը, իսկոյն մօտենում է  
 Բուրգունդը և նոյն վայրկենին, երբ ուզում է ծունր դնել, թագաւորը  
 գրկում է նորան:

ԿԱՐԼՈՍ

Դուք շատ շուտ եկաք—մտադիր էինք  
 Դիմաւորել ձեզ—բայց դուք շատ արագ  
 Զխաներ ունիք:

ԲՈՒՐԳՈՒՆԴ

Նոքա ինձ բերին

Դէպի իմ պարտքը:

(Նա գրկում է Սօրէլին և համբուրում է նորա ճակատը:)

Ներեցէք, իմ քոյր,

Մեր իշխանական իրաւունքն է այս  
 Արբատում. այնտեղ ոչ մի սիրուն կին  
 Չէ ընդդիմանում սովորութեանը:

ԿԱՐԼՈՍ

Դուքս, ձեր պալատը սիրոյ աթոռն է.  
 Ասում են այնտեղ է գեղեցկութեան  
 Ժողովարանը:

ԲՈՒՐԳՈՒՆԴ

Տէ՛ր, վաճառաշահ

Ժողովուրդ ենք մենք. ինչ որ պատուական  
 Բան կայ աշխարհում գտնվում է մեր  
 Բրիւզի շուկայում, բայց ամենազնիւ  
 Բարիքը կանանց գեղեցկութիւնն է:

ՍՕՐԷԼ

Աւելի ևս թանկ արժէ կանանց  
 Հաւատարմութիւնն. բայց շուկայի մէջ

Դա չէ վաճառվում:

ԿԱՐԼՈՍ

Դուքս, ձեր մասին

վատ համբաւ է լսվում, իբր թէ կանանց

Ամենաընտիր առաքինութիւնն

Արհամարհում էք:

ԲՈՒՐԳՈՒՆԻ

Հերձուածն ինքն իրան

Պատուհասում է: Երանի ձեզ, տէր

Ձեր սիրտը վաղուց ճանաչել է այն

ինչ որ ես, ափսոս, ուշ իմացայ միայն:

(Տեսնելով արքեպիսկոպոսին բռնում է նորա ձեռքը)

Հայր սուրբ, շնորհեցէք ձեր օրհնութիւնը,

Դուք միշտ ձեր տեղն էք: Ձեզ որոնողը

Առաքինութեան շաւղով պիտի գնայ:

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Թող վարդապետս կանչէ ինձ իւր մօտ,

Թէ կամենում է. այժմ իմ սիրտը

լի է խնդութեամբ, ուրախ կը մեռնիմ

Քանի որ աչքս տեսաւ այս օրը:

ԲՈՒՐԳՈՒՆԻ (Սօրէլի)

Ասում են, թէ դուք ձեր գոհարները

Տուել էք, որ զէնք պատրաստեն իմ դէմ.

Մի՞թէ դուք այդքան վառուած էք հողով

Պատերազմական, և ուզում էիք

Ինձ ոչնչացնել: Բայց կռիւն էլ չըկայ,

Եւ ինչ որ կորաւ կրկին գտնուեցաւ.

Նոյնպէս ձեր զարդը: Դա սահմանուած էր

Իմ դէմ պատերազմ վարելու համար.

Այժմ իմ ձեռից ընդունեցէք այն

Իբրև մի նշան անկեղծ հաշտութեան:

(Նա առնում է իւր ուղեկիցներէից մէկի ձեռից զարդերի արկղը և բաց անելով տալիս է Ագնէս Սօրէլին: Սա երկմտութեամբ նայում է թագաւորին:)

ԿԱՐԼՈՍ

Ընդունիր ընծան: Դա մի կրկնակի

Թանգազին գրաւ է գեղեցիկ սիրոյ

Եւ մեր հաշտութեան:

ԲՈՒՐԳՈՒՆԻ

(Մի աղամանդէ շուշան դնելով Սօրէլի մազերի մէջ:)

Եթէ սա լինէր

Ֆրանսիայի թագը, նոյն յօժարութեամբ

Կը պսակէի նոբանով ես այս

Գեղեցիկ զլուսը:

(Պինդ սղմելով Սօրէլի ձեռքը)

Եւ վստահ եղէք

Ինձ վրայ, թէ մէկ օր հարկաւոր լինի

Ձեզ մի բարեկամ:

(Ագնէս Սօրէլը արտասուելով գնում է մի կողմը. թագաւորը նոյնպէս սաստիկ շարժած է: Բոլոր ներկայ եղող անձինք շարժած նայում են թագաւորին և դքսին:)

ԲՈՒՐԳՈՒՆԻ

(Ամենքին մէկ մէկ նայելուց յետոյ ընկնում է թագաւորի գիրկը:)

Ո՛հ, իմ թագաւոր

(Մի և նոյն վայրկենին երեք բուրդունդիացի ասպետներ մօտենում են Գիւնուային, և Հիրին և Արքեպիսկոպոսին և զրկում են նոցա: Թագաւորը և դուքսը մի քանի ժամանակ անխօս մնում են զրկախառնուած:)

Տէր Աստուած, ինչպէս կարողացայ ձեզ

Ատել ու մերժել:

ԿԱՐԼՈՍ

Հերիք է, լռեցէք.

Մի՛ ասէք:

ԲՈՒՐԳՈՒՆԻ

Ի՛նչպէս կարողացայ ես

Այն Անգլիացու զլին թագ գնել,

Հաւատարմութիւն երդուել օտարին,

Ձեզ, իմ արքային մօտանել կորստին:

ԿԱՐԼՈՍ

Մոռացէք, արդէն ներելիմ ես ձեզ,

Բոլորն այս րոպէն ոչնչացնում է:  
Ճակատագիր էր, անյաջող աստղ էր:

ԲՈՒՐԳՈՒՆԴ

(Բռնում է նորա ձեռք.)

Սխալմունքս կուղղեմ, հաւատացէք ինձ  
Բոլոր ձեր կրած նեղութիւնները  
Կրփոխարինեմ. կրկին կըստանաք  
Ձեր տէրութիւնը առանց մէկ հատ զիւր  
Անգամ կորցնելու:

ԿԱՐԼՈՍ

Միացանք, հիմա

Էլ չեմ վախենում ոչ մի թշնամուց:

ԲՈՒՐԳՈՒՆԴ

Հաւատացէք, տէր, ահամայ էի  
Ձեր դէմ զէնք վարում:—Ո՛հ, թէ զիտենաք—  
Է՞ր չուղարկեցիք դուք սորան ինձ մօտ

(Յոյց տալով Սօրէլի վերայ.)

Սրա արտասուքին չէի զիմանայ:  
—Էլ չի բաժանի մեզ դժոխային  
Ոչ մի զօրութիւն, երբ մեր սրտերը  
Կապուեցան սիրով: Այժմ ես դաս  
Խսկական տեղս: Ձեր սրտի վերայ  
Արքայ, վերջացաւ մոլորութիւնս:

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

(Մտնելով նոցա մէջ.)

Իշխաններ, ահա դուք միացած էք:  
Ֆրանսիան բարձրանում է մոխրի միջեց  
Ինչպէս մի փիւնիկ նորից մանկացած,  
Եւ մեզ ժպտում է սիրուն ապագայ:  
Կըբժշկուին մեր հայրենի երկրի  
Խորը վերքերը, փլատակները  
Աւելի շքեղ կըվերականգնին  
Քանդուած գիւղերը ու քաղաքները,  
Դաշտերը նորից կրկանաչանան—  
Բայց չեն վեր կենայ նոքա, որոնք ձեր

Կռուին զոհ եղան. արտասուքները,  
Որոնք թափուեցան, թափուած կըմնան:  
Յաջորդ սերունդը կըծաղկի, սակայն  
Նախորդը թշուառ վախճան ունեցաւ.  
Թոռների բաղբը յարութիւն չի տայ  
Մեռած պապերին: Ահա այս է ձեր  
Կռուի պտուղը: Բայց թող այս բանը  
Ձեզ խրատ լինի: Սուրբ չը հանած  
Վախեցէք սրի ահաւոր Աստուծոց:  
Այո, կարող է հզօրն արձակել  
Պատերազմը, բայց, ինչպէս որ բազէն  
Որսորդի ձայնին հնազանդ թռչում է  
Կրկին նորա մօտ, հնազանդ չէ մարդուն  
Վայրենի Աստուածը պատերազմի,  
Միւս անգամ չի դայ, ինչպէս որ այսօր  
Երկնքից փրկող բազուկը հրզօր:

ԲՈՒՐԳՈՒՆԴ

Տէր արքայ, ձեզ մօտ մի հրեշտակ ունիք,  
Ո՛ր է նա, ինչի՞ չեմ տեսնում այստեղ:

ԿԱՐԼՈՍ

Ո՛ր է Յովհաննան, ինչի՞ ներկայ չէ  
Նա այս գեղեցիկ և հանդիսաւոր  
Վայրկեանին, որ մեզ ինքը պարգևեց:

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Այն սուրբ աղջիկը, տէր իմ, չէ սիրում  
Պալատի անգործ հանգստութիւնը,  
Եւ թէ չէ կանչում նորան ասպարէզ  
Աստուծոյ հրամանը, ապա փախչում է  
Նա համեստութեամբ աշխարհի աչքից:  
Անշուշտ խօսում է այժմ Աստուծոյ հետ,  
Եթէ զբաղուծ չէ իւր հայրենիքի  
Բաղբաւորութեամբ, որովհետեւ միշտ  
Նորան ուղեկից է օրհնութիւնը:

### ՉՈՐՐՈՐԴ ԵՐԵՒՈՅԹ

ՅՈՎ ՀԱՆՆԱ և ԱՌԱՋ ԻՆՆԵՐԸ:

(Յովհաննան զրահապատ բայց առանց սաղաւարտի, գլխին ծաղկէ պսակ):

ԿԱՐԼՈՍ

Ահա՛, Յովհաննա, դու զարդարուելես  
Իբրև քրմուհի և գալիս ես քո  
Ձեռով հաստատած կապը օծելու:

ԲՈՒՐԳՈՒՆԴ

Ի՛նչ ահաւոր էր կոյսը կռուի մէջ,  
Եւ ի՛նչ գեղեցիկ փայլում է հիմա  
Նորա դէմքի վրայ խաղաղութիւնը:  
— Հաստատ եմ խօսքիս, Յովհաննա, հիմա  
Գո՞հ ես ինձանից, և արժանի՞ եմ  
Ես քո հաճութեան:

ՅՈՎ ՀԱՆՆԱ

Դու մեծ շնորհ արիր

Ինքդ քո անձին: Այժմ փայլում ես  
Օրհնառատ լուսով, այն ինչ փոքր առաջ  
Դէմքդ նման էր արիւնտտ, մռայլ  
Ահաւոր լուսնին երկնքի վերայ:

(Նայելով իւր չորս կողմը):

Այստեղ ժողովուած են ահա այսքան  
Ազնիւ ասպետներ, ուրախ փայլում է  
Ամենքի աչքը. միայն մէկ տխուր  
Մարդ պատահեցաւ, որ պիտի ծածկուի,  
Այն ինչ ամենքը ցնծութեան մէջ են:

ԲՈՒՐԳՈՒՆԴ

Ո՞վ է իրան զգում այնքան յանցաւոր,  
Որ յոյս չունի մեր շնորհը վայելել—

ՅՈՎ ՀԱՆՆԱ

Արդեօք կարող է նա քեզ մօտենալ:

Ասա՛ կարող է. լրացրու զործդ:  
Այն հաշտութիւնը չէ մի հաշտութիւն,  
Երբ բոլորովին չէ մաքրում սիրտը.  
Եւ մի հատ կաթիլ ատելութիւնը  
Մնայով բաժակի մէջ ուրախութեան  
Բոլոր ըմպելին թունաւորում է:  
— Չըկայ այնպիսի արիւնաշաղախ  
Անիրաւութիւն, որ այս ցնծութեան  
Օրին չըներէ Բուրգունդի դուքսը:

ԲՈՒՐԳՈՒՆԴ

Ա՛հ, հասկանում եմ:

ՅՈՎ ՀԱՆՆԱ

Եւ դու ուզում ես

Ներել, այո՞, դուքս:— Մտիր, Դիւ Շատէլ:  
(Նա բաց է անում դուռը և ներս է բերում Դիւ Շատէլին, որ մնում է  
հեռու կանգնած):

Դուքսը հաշտուեցաւ արդէն իւր բոլոր  
Թշնամիների հետ, նոյնպէս քեզ հետ:

(Դու Շատէլը մի քանի քայլ առաջ գալով նայում է Դքսի աչքերում):

ԲՈՒՐԳՈՒՆԴ

Այս ի՛նչ ես անում, Յովհաննա, զիտե՛ս,  
Ինչ ես պահանջում:

ՅՈՎ ՀԱՆՆԱ

Բարեսիրտ տիրոջ

Դռները բաց են ամենքի համար,  
Նա ոչ մէկ հիւրին չէ մերժում երբէք:  
Ինչպէս երկինքը ազատ պատում է  
Ամբողջ աշխարհը, նոյնպէս և շնորհը  
Պէտք է տարածուի թէ բարեկամի,  
Թէ թշնամու վրայ: Արեգակը իւր  
Ճառագայթները հաւասարապէս  
Ուղարկում է ողջ տիեզերքի մէջ,  
Երկինքն իւր ցօղը հաւասար չափով  
Յանում է բոլոր բոյսերի վերայ,  
Վերևից եկած ամեն բարութիւն

Ընդհանուրինն է, միայն խաւարն է,  
Որ բնակում է ծածուկ տեղերում:

ԲՈՒՐԳՈՒՆԳ

Սա բոլորովին իշխում է ինձ վրայ,  
Սիրտս կակուղ մոմ է սորա ձեռին:  
— Եկէք, իրարու գրկենք, Գիւ Շատէլ.  
Ես ներում եմ ձեզ: Հօրս ուրուական,  
Ո՛հ, մի՛ բարկանար, որ ես սխմում եմ  
Բարեկամաբար քեզ սպանող ձեռք.  
Մահուան հրեշտակներ, չըդատապարտէք,  
Որ ես դժբուժ եմ վերէ՛վնդրութեան  
Սոսկալի ուխտս: Ձեզ մօտ ցածումը,  
Ուր միշտ զիշեր է, չըկայ զգացող սիրտ.  
Այնտեղ ամեն ինչ յաւերժական է,  
Ամեն ինչ անշարժ—բայց այստեղ, վերև,  
Լոյս արևի տակ, այստեղ այդպէս չէ.  
Այստեղ կենդանի և զգացող մարդը  
Միշտ ենթարկվում է հզօր վայրկեանի  
Ազդեցութեանը:

ԿԱՐԼՈՍ (Յովհաննային)

Ազնիւ կոյս, որքան  
Պարտական եմ քեզ: Ինչպէս զեղեցիկ  
Կատարեցիր դու, ինչ որ խոստացար,  
Ի՛նչ շուտ փոխեցիր իմ բոլոր բաղդը.  
Դու հաշտեցրիր իմ բարեկամներին,  
Կործանեցիր իմ թշնամիներին,  
Դու ազատեցիր իմ քաղաքները  
Օտարի լծից—այս բոլորն արիր.  
Աստ՛ ինձ, ի՞նչպէս վարձատրեմ ես քեզ:

ՅՈՎՀԱՆՆԱ

Տէր, միշտ մարդասէր եղեր բազդի մէջ,  
Ինչպէս որ էիր անբաղդութեան մէջ,  
Եւ մի մոռանար երբէք մեծութեան  
Գազաթի վերայ, որքան թանգ արժէ  
Մի լաւ բարեկամ կարիք ժամանակ,

Դու այդ փորձեցիր, երբ անբաղդ էիր:  
Եղէր միշտ արդար, եղէր ողորմած  
Ամենայետին քո հպատակին,  
Որովհետև քեզ փրկիչ ուղարկեց  
Աստուած: Հասարակ մի հովիւ աղջեկ:  
Դու կըժողովես զայիսոնիւ տակ  
Բոլոր Ֆրանսիան, դու պիտի լինես  
Հայր և ցեղապետ մեծ իշխանների.  
Քո յաջորդները աւելի պայծառ  
Կըլիային քան թէ քո նախորդները.  
Յեղդ կը ծաղկի, քանի որ պահէ  
Իւր ժողովուրդի սրտի մէջ սէրը.  
Հպարտութիւնը միայն կարող է  
Կործանել նորան, և խրճիթներից,  
Որտեղից հիմա եկաւ փրկիչդ,  
Կորուստ է սպառնում, տէր, քո յանցաւոր  
Պայազատներին:

ԲՈՒՐԳՈՒՆԳ

Մարգարէ աղջեկ,  
Հոգւով ներշնչած, թէ քո աչքերը  
Կարող են տեսնել հեռու ապագան,  
Ասա, կը ծաղկի՞ արդեօք իմ ցեղը  
Փառաւորապէս. ինչպէս սկսուել է:

ՅՈՎՀԱՆՆԱ

Բուրգունդ, աթոռդ բարձրացրել ես դու  
Թագաւորական դահին հաւասար,  
Աւելի ևս բարձր է ձգտում  
Մեծամիտ սիրող և իւր յանդուգն  
Շինուածքը մինչև երկինքը հասցնում—  
Բայց շուտ կարգելէ վերելից մի ձեռ  
Նորա աճումը: Սակայն քո տունը  
Կործանուելու չէ, նա կը նորոգուի  
Մի օրիորդով, որից կը ծնին  
Գաւազանակիր վեհ միապետներ,  
Ժողովուրդների արթուն հովիւներ.

Նորա կը բազմին երկրիս երկու մեծ  
Գահերի վերայ, օրէնքներ կը տան  
Ծանօթ աշխարհին, այլև մի նորին,  
Որ մեր Արարչի ձեռք ծածկում է  
Կեռ չընաւարկած անյայտ ծովերում:

ԿԱՐԼՈՍ

Ասա, եթէ քեզ յայտնում է հոգին,  
Բարեկամական կապը, որ հիմա  
Նորոգեցինք մենք, արդեօք կը կապէ՞  
Եւ մեր թռռներին:

ՅԱՎՀԱՆՆԱ

(Կարճ լուսնային յետոյ:)

Դուք, թագաւորներ,  
Եւ դուք, իշխաններ, վախեցէք կռուից  
Եւ մի զարթեցնէք նորան իւր որջում,  
Ուր նա քնած է, թէ չէ, զարթելով,  
Շուտ չէ հանդարտվում. նա բազմանում է,  
Առաջ բերելով երկաթէ սերունդ  
Եւ տարածելով հուր ու կոտորած:  
— Էլ բան մի հարցնէք: Ներկան է ձերը,  
Եւ վայելեցէք. թողէք լուսնամբ  
Ծածկեմ ապագան:

ՍՕՐԷԼ

Սուրբ աղջիկ, սիրտս  
Դու թափանցում ես, զիտես, ձգտում է  
Արդեօք մեծութեան. ինձ էլ ասա մի  
Միմիթարիչ բան:

ՅՈՎՀԱՆՆԱ

Հոգին աշխարհի  
Մեծ մեծ գէպքերն է ինձ իմաց անում.  
Բաղդդ ամփոփուած է քո սրտի մէջ:

ԴԻԻՆՈՒՍ

Բայց քո վեճակը ի՞նչ պիտի լինի,  
Ով դու երկնքին սիրելի աղջիկ,

Անշուշտ սպասում է քեզ ամենամեծ  
Երջանկութիւնը, որովհետեւ սուրբ  
Եւ երկիւղած ես:

ՅՈՎՀԱՆՆԱ

Երջանկութիւնը  
Յաւիտենական հօր գրկի մէջն է:

ԿԱՐԼՈՍ

Քո երջանկութեան համար կը հոգայ  
Քո թագաւորը: Ես քո անունը  
Կը փառաւորեմ Ֆրանսիայի մէջ  
Գալոց սերունդը պիտի երանի  
Տայ քեզ, Յովհաննա — Եւ ահա՛ իսկոյն —  
Ծունր դիր:

(Հանում է սուրբ և կամաց դիպցնում է Յովհաննային:)

Վեր կաց իբրև աղնուական:

Ես, թագաւորդ բարձրացնում եմ քեզ  
Քո ստոր, աննշան ծննդեան փոշուց —  
Գերեզմաններում աղնուացնում եմ  
Ես քո պապերին, — Պատուանշանդ  
Լինի մի շուշան: Ֆրանսիայի մէջ  
Համաձին ես դու ամենաաղնուին,  
Միայն Վալուայի թագաւորական  
Արիւնք քոնից աղնիւ կը լինի:  
Իմ իշխաններից ամենամեծը  
Պատուած համարէ իւր անձը քեզ հետ  
Ամուսնանալով. իմ հոգսը լինի  
Մի լաւ ամուսին գտնել քեզ համար:

ԴԻԻՆՈՒՍ (առաջ գալով:)

Իմ սիրտը արդէն ընտրել է նորան,  
Քանի որ նա դեռ ստոր վիճակումն էր.  
Նորան զարդարող այս նոր պատիւը  
Չէ աւելացնում նորա վաստակը,  
Ոչ էլ իմ սէրը: Ահա արքայիս  
Եւ սրբազան հօր ներկայութեամբը  
Մեկնում եմ նորան իմ ձեռք իբրև

Ազնիւ ամուսնուս, եթէ արժանի  
Կը՛համարէ ինձ:

ԿԱՐԼՈՍ

Անդիմադրելի

Աղջիկ, դու նոր նոր հրաշքներ ես գործում:  
Այո՛, ես հիմա հաւատում եմ, որ  
Անկարելի բան չըկայ քեզ համար:  
Դու նուաճեցիր այս հպարտ սիրտը,  
Որ մինչև այսօր ծաղրում էր սիրոյ  
Ամենակարող իշխանութիւնը:

ԼԱ. ՀԻՐ (առաջ գալով):

Ինձ լաւ յայտնի է, որ Յովհաննայի  
Պատուական զարդն է իւր համեստ սիրտը.  
Նա արժանի է, որ իշխանները  
Մեծարեն նորան. բայց նա այդքան բարձր  
երբէք չէ ձգտում: Մի ազնիւ սրտի  
Հաւատարիմ սէր և խաղաղ վիճակ  
Բաւական են նրան, և այդ կունենայ,  
Թէ կինս լինել բարեհաճի նա:

ԿԱՐԼՈՍ

Դո՛ւ նոյնպէս, Լա Հիր: Երկու պատուական  
Ազնիւ մրցողներ, թէ զիւցազնութեամբ  
Եւ թէ քաջութեամբ իրար հաւասար:  
— Դու, որ հաշտեցրիր թշնամիներին,  
Դու, որ միացրիր իմ աէրութիւնը,  
Միթէ ուզում ես այժմ պառակտել  
Իմ այս սիրելի բարեկամներին:  
Մէկը կարող է միայն քեզ ստանալ:  
Թէև երկուսն էլ արժանի են այս  
Մեծ մրցանակին: Ուրեմն խօսիր,  
Սիրող թող վճռէ:

ՍՕՐԷԼ

Ազնիւ աղջիկը

Ապշած է, շփոթուած, նորա այտերը  
Ներկուեցան պարկեշտ ամօթխածութեամբ:

Ժամանակ տուէք, որ խորհրդակցի  
Նա իւր սրտի հետ և փակուած կուրծքը  
Բարեկամուհու առաջը բանայ:  
Հասաւ այն րուէն, երբ այս խիստ աղջկան  
Պէտք է մօտենամ ես էլ իբրև քոյր  
Եւ առաջարկեմ մտերիմ սիրտս —  
Թողէք կանացի այս հարցը քննենք  
Մենք իբրև կանայք, և ըսպատեցէք  
Մեր որոշմանը:

ԿԱՐԼՈՍ (կամենալով գնալ):

Թող այդպէս լինի:

ՅՈՎՀԱՆՆԱ

Ոչ այդպէս, տէր իմ: Այտերս երկչոտ  
Ամօթխածութեամբ չըկարմրեցան,  
Այս ազնիւ տիկնոջ ես ոչինչ չունիմ  
Խոստովանելու, որ ամաչէի  
Համարձակ ասել այր մարդկանց առաջ:  
Այս քաջ և ազնիւ ասպետները ինձ  
Մեծ պատիւ արին իրանց ընտրութեամբ.  
Բայց ես չը թողի արօտատեղին,  
Որ աշխարհային ունայն մեծութեան  
Ետեկցն ընկնեմ, և այս պողպատէ  
Զրահը չը հազայ, որ զլսիս դնեմ  
Հարսնական պսակ: Ոչ, ես կանչուած եմ  
Այլ գործի համար: Ամենաբարձրեալ  
Աստծոյ զինուորն եմ և ոչ մի մարդու  
Վին չեմ լինելու:

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Կինը ծնուած է

Սիրելի ընկեր լինել այր մարդուն —  
Եւ արժանաւոր ծառայում է նա  
Երկնքին, երբ որ հնազանդէ բնութեան  
Երբ կը կատարես Աստծոյ պատուէրը,  
Որ պատերազմի դաշտը քեզ կանչեց,

Ապա կը թողնես դու քո զէնքերը,  
Կրկին կը դառնաս քո փափուկ սեռին,  
Որ ուրացել էս և որ կոչուած չէ  
Կռուի արիւնոտ դործը վարելու:

ՅՈՎՀԱՆՆԱ

Գերապատիւ տէր, ես դեռ չը դիտեմ,  
Թէ ինձ սուրբ հոգին ինչ կը հրամայէ:  
Անշուշտ կը խօսի իւր ժամանակին,  
Եւ կը հնազանդիմ ես նորա ձայնին.  
Իսկ հիմա պէտք է գործս աւարտեմ.  
Տէրս դեռ ևս պսակուած չէ թագով,  
Սուրբ իւզով օծած չէ նորա զուլսը,  
Նա դեռ չէ կրում արքայ անունը:

ԿԱՐԼՈՍ

Ահա դիմում ենք մենք Բէյմս քաղաքը:

ՅՈՎՀԱՆՆԱ

Անգործ չը մնանք, որովհետև մեր  
Թշնամիները, չորս կողմը պատած,  
Ուզում են կապել քո ճանապարհը.  
Բայց ես կանցկացնեմ քեզ նոցա միջով:

ԴԻԻՆՈՒԱ

Բայց երբ կատարես դու այդ բոլորը,  
Երբ որ Բէյմս մտնենք մենք յաղթանակով,  
Ապա, սուրբ աղջիկ, կը բարեհաճիս —

ՅՈՎՀԱՆՆԱ

Եթէ երկնքի կամքն է, որ դառնամ  
Այս պատերազմից յաղթութեամբ պսակուած,  
Ապա կատարուած է իմ կոչումը —  
Եւ այնուհետև հովեւ աղջիկը  
Ոչինչ գործ չունի արքայի դռանը:

ԿԱՐԼՈՍ

(Բռնում է նորա ձեռքը):

Այժմ դու հոգու ձայնին ես լսում,

*Handwritten signature or note at the top of page 101.*

Սէրը լռում է քո սուրբ կուրծքի մէջ:  
Բայց միշտ չի լռի, հաւատած դու ինձ:  
Երբ որ զէնքերը կը հանգստանան  
Եւ յաղթութեան հետ կը գայ ցանկալի  
Խաղաղութիւնը, ամենքի սրտում  
Կը վերագառնայ ուրախութիւնը,  
Նորից կը զարթին փափուկ զգացմունքներ.  
Քո կուրծքի մէջ էլ կը զարթին նոքա,  
Եւ դու կը թափես քաղցր արտասուքներ,  
Որոնց նմանը դեռ ևս երբէք  
Չէ թափել աչքդ — Այդ սիրտը, որ այժմ  
Երկնքին նուիրուած է բոլորովին,  
Սիրով կը դառնայ մի բարեկամին.  
Բիւրաւորներին բաղդաւորեցիր  
Դու ազատելով, և կը վերջացնես  
Վերջապէս մէկին բաղդաւորելով:

ՅՈՎՀԱՆՆԱ

Դօժէն, ձանձրացար արդէն երկնային  
Յայտնութենից, որ ուզում ես փշրել  
Նորա անօթը և մաքուր կուսին,  
Որին ուղարկեց քեզ Տէր Աստուածը  
Փոշու մէջ ձգել: Ով դուք կոյր սրտեր,  
Թերահաւատներ, դուք շուրջ պատած էք  
Երկնային լուսով, նորա հրաշքները  
Կատարվում են ձեր աչքերի առաջ,  
Եւ դուք տեսնում էք իմ մէջ միայն մի կին:  
Ի՞նչպէս կարող է կինը զրահապատ  
Մտնել այր մարդկանց ճակատամարտը.  
Վայ ինձ, եթէ որ կրթելով ձեռիս  
Աստուծոյ սուրբ, հետն էլ սրտիս մէջ  
Կրթեմ ունայն սէր զէպի մի այր մարդ.  
Լաւ էր, եթէ որ երբէք չէի ծնել —  
Եւ այդպիսի բան չասէք միւս անգամ,  
Եթէ չէք ուզում հոգուն զայրացնել:  
Այր մարդու տէքը, որ ինձ նայում է

Եւ ցանկանում է, արդէն ինձ համար  
Զարհուրանք է և սրբապղծութիւն:

ԿԱՐԼՈՍ

Վերջացրէք, զուր է նորան համոզել:

ՅՈՎՀԱՆՆԱ

Արքայ, հրամայիր պատերազմական  
Փողը հնչեցնեն: Զինադադարը  
ձնշում է սիրտս: Չեմ կարող հանդիստ  
Եւ անգործ մնալ. անյայտ զօրութիւն  
Ստիպում է շուտով գործս աւարտել  
Եւ հնազանդ դիմել իմ ճակատագրին:

### ՀԻՆԳԵՐՈՐԴ ԵՐԵՒՈՅԹ

Մ Ի Ա Ս Պ Ե Տ (շտապով ներս է մտնում.)

ԿԱՐԼՈՍ

Ի՞նչ կայ:

ԱՍՊԵՏ

Թշնամին Մարն գետը անցաւ

Եւ պատրաստվում է պատերազմելու:

ՅՈՎՀԱՆՆԱ (ողետրուած.)

Պատերազմ ու կռիւ: Այժմ ազատուեցաւ  
Հողիս կապերից: Զէնք առէք, զընամ  
Զօրքը կարգադրեմ:

(նա դուրս է գնում.)

ԿԱՐԼՈՍ

Հետը գնա՛, Լա Հիւր—

Նոքա ուզում են Բէյմնի դռան առաջ  
Ստիպել մեզ կռուել մեր թագի համար:

ԴԻԻՆՈՒԱ

Դա քաջութիւն չէ. անգոր, կատաղի  
Յուսահատութեան վերջին փորձն է դա:

ԿԱՐԼՈՍ

Դո՛ւքս, ձեզ չեմ ստիպում, այսօր պէտք է դուք  
Շատ վատ օրերի կորուստը դարձնէք:

ԲՈՒՐԳՈՒՆԴ

Կաշխատեմ, որ դուք դո՛հ լինիք ինձնից:

ԿԱՐԼՈՍ

Ես ձեզ առաջնորդ կըլնիմ փառքի  
ձանապարհի վրայ, և Բէյմնի առաջ

Պիտի զըրաւեմ հայրենի թագս. —

Ագնէս, ասպետդ գնում է, մնաս բարով:

ԱԳՆԷՍ (գրկում է նորան.)

Չեմ լալիս, էլ չեմ դողում քեզ համար

Իմ յոյսը մեծ է: Նրկինքը անչափ

Ողորմած է մեզ և չի կամենայ

Որ վերջը տխրենք: Յաղթութեամբ պսակուած

Յոյս ունիմ գրկել ես իմ տիրոջը

Բէյմնի նուաճած պարիսպների մէջ:

(Լսվում է փողերի ձայն, որ հետզհետէ փոխվում է կատաղի պատերազմական դղրդիւն. բեմը կարծ ժամանակ մնում է բաց և երաժշտական խումբը նուազում է պատերազմական եղանակ.)

Տեսարանը փոխվում է մի ընդարձակ ծառերով շրջապատած դաշտ: Երա-  
ժշտութիւնը շարունակվում է և այդ միջոցին բեմի ետեի կողմում շտապով  
անց են կենում զինուորներ:

### ՎԵՅԵՐՈՐԴ ԵՐԵՒՈՅԹ

ՏԱԼԲՕ, ՖԱՍՏՕԼՖ փերայ կրթնած և ԶԻՆՈՒՈՐՆԵՐՈՎ ուղեկ-  
ցած, փոքրից յետոյ ԼԻՕՆԷԼ:

ՏԱԼԲՕ

Ինձ այս ծառերի տակը վայր դրէք,

Եւ դուք յետ դարձէք ճակատամարտը.

Մեռնելու համար պէտք չէ օգնութիւն:

ՖԱՍՏՕԼՖ

Ո՛հ, ինչ արբաբաղդ, աղետալի օր:  
(Լիճնէլը մտնում է.)

Լիօնէլ, տեսէք, մեր զօրապետը  
Մահու վէրք ստացաւ:

ԼԻՕՆԵԼ

Աստուած ոչ անէ,  
Ո՛չ, ո՛չ, վեր կացէք, ազնիւ լօրդ, հիմա  
Ժամանակը չէ ուժաթափ ընկնել.  
Ո՛չ, մի՛ տեղի տաք մահուան, իշխեցէք  
Բընութեան վերայ ձեր զօրեղ կամքով.  
Ապրեցէք:

SULFO

Զուր է: Արդէն հասել է  
Այն անբաղդ օրը, երբ Ֆրանսիայում  
Պիտի կործանուի մեր կանգնած գահը:  
Ի զուր թափեցի յուսահատ կռիւմ  
Իմ վերջին ճիգը, որ այդ արգելեմ,  
Կայծակից զարկուած ընկած եմ ահա,  
Որ էլ յաւիտեան երբէք չըկանգնեմ:  
Բէյմը կորած է, շտապեցէք գոնէ  
Փարիզն ազատել:

ԼԻՕՆԵԼ

Փարիզը նոյնպէս  
Արդէն անձնատուր եղաւ Գօֆէնին.  
Նոր մի սուրհանդակ բերեց այդ լուրը:

SULFO

(Վիրակապը քանդելով):  
Վազիր, իմ արիւն. ես ձանձրացել եմ  
Արևի լոյսից:

ԼԻՕՆԵԼ

Ես պիտի զընամ:  
Ֆաստօլի, շուտ տարէք մեր զօրապետին  
Մի ապահով տեղ. այստեղ մեզ մնալ  
Անկարելի է: Արդէն չորս կողմը  
Փախչում են մերօնք: Աղջիկն անտրգել  
Առաջ է գալիս:—

SULFO

Ո՛վ անմտութիւն  
Դու յաղթեցիր և ես վիշտում եմ:  
Յիմարութեան դէմ աստուածներն անգամ  
Ի զուր են կռւում: Ո՛վ իմաստութիւն,  
Աստուծոյ գլխի լուսաւոր ծնունդ,  
Դու տիեզերքի իմաստուն հիմնող,  
Վարիչ աստղերի, ո՞վ ես ուրեմն  
Երբ յիմարութեան կատաղի ձիուն  
Կապուած, ահամայ խելագարի հետ  
Բաց աչքով զորվում ես անդունդի մէջ:  
Անիծած լինի, ով որ իւր կեանքը  
Բարձր և վսեմ զործին է նուիրում,  
Եւ իմաստութեամբ հեղինակում է  
Մեծ մեծ խորհուրդներ: Աշխարհը յիմար  
Թագաւորինն է—

ԼԻՕՆԵԼ

Միլլրդ մի քանի  
Վայրկեան կեանք ունիք—մտածեցէք ձեր  
Ստեղծողը վերայ:

SULFO

Եթէ յաղթուէինք  
Իբրև քաջ մարդիկ քաջերի ձեռով,  
Մենք կարող էինք մտիթարել մեզ  
Ընդհանուր բաղդով, որ իւր գնդակը  
Անդադար դարձնում է փոփոխելով—  
Բայց ցաւ է յաղթուել այսպիսի կռակաւ  
Աչքակապութեամբ: Մի՛թէ աւելի  
Մի լաւ վախճանի արժանի չէր մեր  
Գործունեայ կեանքը:

ԼԻՕՆԵԼ

(Նորա ձեռք բռնելով):  
Միլլրդ, դնաք բարով:  
Արտասուքներս կը նուիրեմ ձեզ,  
Եթէ կենդանի յետ կըդառնամ ես

Այս պատերազմից: Այժմ ինձ կանչում է  
 ձախտազիրը, որ կռուի դաշտում  
 Նստած դատում է և վիճակ ձգում:  
 Մնաք բարով մինչև կրկին կրտսնուկնք  
 Ուրիշ աշխարհում: Մեր երկարատև  
 Բարեկամութեան համար ոչինչ է  
 Այս կարճ հրաժեշտը:

ՏԱԼԲՕ

Ահա մեռնում եմ

Եւ յետ եմ տալիս իմ փոշին երկրին  
 Եւ արեգակին յաւիտենական—  
 Բոլոր աշխարհում պատերազմական  
 Փառքով հռչակուած հզօր Տայլօից  
 Մնում է միայն մի բուռը փոշի:  
 Այս է մեր վերջը—մեր ամբողջ կեանքում  
 Մի բան ենք շահվում, մեր ոչնչութեան  
 Տխուր համոզմունքը և արհամարհանք  
 Դէպի սմեն բան, ինչ որ թվում է  
 Մեզ այնքան վսեմ, այնքան ցանկանալի —

ԵՕԹՆԵՐՈՐԴ ԵՐԵԻՈՅԹ

ԿԱՐԼՈՍ, ԲՈՒՐԳՈՒՆԴ, ԴԻԻՆՈՒԱ, ԴԻԻ ՇԱՏԷԼ և ՋԻ-  
 ՆՈՒՈՐՆԵՐ

ԲՈՒՐԳՈՒՆԴ

Պատնէշը առանք:

ԴԻԻՆՈՒԱ

Այս օրը մերն է:

ԿԱՐԼՈՍ

(Տայլօին նկատելով):

Տեսէք, այն ո՞վ է, որ լոյս արեւին  
 Այնտեղ սկամայ հրաժեշտ է տալիս:  
 Երևում է որ հասարակ մարդ չէ:

Շուտ հասէք, թէ դեռ օգնել հնար է:  
 (Թագաւորի ուղեկից ղինուորները մօտենում են Տայլօին):

ՖԱՍՏՈԼՖ

Մի մօտ գաք, հեռու: Յարգեցէք հիմա  
 Այս ննջեցեալը, որից փախել էք  
 Միշտ քանի որ սա դեռ կենդանի էր:

ԲՈՒՐԳՈՒՆԴ

Այս ի՞նչ է, Տայլօն արիւնաթաթախ:

(Նա մօտենում է Տայլօին, որ անթարթ նայում է նորան և մեռնում է):

ՖԱՍՏՈԼՖ

Հեռացէք, Բուրգունդ. թող դաւաճանի  
 Տեսքը դիւցազնի վերջին հայեացքը  
 Չը թունաւորէ:

ԴԻԻՆՈՒԱ

Սոսկալի Տայլօ,

Ո՛վ անպարտելի, այժմ դու զոհ ես  
 Փոքր միջոցով, այն ինչ ընդարձակ  
 Ֆրանսիան բաւական չէր քո տխրանեան  
 Ոգու ձգտմանը: Այժմ միայն, տէր իմ,  
 Ես ողջունում եմ ձեզ իբրև արքայ.  
 Թագը դողում էր ձեր զլխի վերայ,  
 Քանի դեռ հոգի կար այս մարմնի մէջ:

ԿԱՐԼՈՍ

(Ննջեցեալին լուռ նայելուց յետոյ):

Նորան ոչ թէ մենք յաղթեցինք, այլ մի  
 Բարձրագոյն էակ: Նա Ֆրանսիայի  
 Հողի վրայ հիմա ահա ընկած է  
 Ինչպէս մի դիւցազն իւր վահանի վրայ,  
 Որ երբէք չուզեց ձեռիցը թողնել:  
 Տարէք այստեղից:  
 (Չինուորները վեր են առնում դիակը և տանում են):

Թող խաղաղ հանգչի

Նորա աճիւնը: Գերեզմանի վրայ  
 Փառաւոր արձան պէտք է կանգնեցնել:  
 Նրա ոսկորները թող հանգստանան

Ֆրանսիայի մէջ, ինչտեղ աւարտեց  
Նա իւր ընթացքը իբրև մի հերոս:  
Ոչ մի թշնամի չը կարողացաւ  
Նորա չափ առաջ տանել իւր սուրը:  
Տապանագիրը լինի այն տեղը,  
Ինչտեղ որ ընկաւ:

**ՖԱՍՏՈԼՖ**

(Տալով իւր սուրը թագաւորին):  
Տէր, քո գերին եմ:

**ԿԱՐԼՈՍ**

(Սուրը յետ տալով):

Ո՛չ, առէք: Կոպիտ պատերազմն անգամ  
Գիտէ մեծարել բարեպաշտ պարտքը:  
Դուք պէտք է ազատ տանէք ձեր տիրոջ  
Դէպի գերեզման: — Դիւ Շատէլ, զնացէք,  
Ազնէսս դողում կլինի ինձ համար,  
Մխիթարեցէք նորան յայտնելով  
Թէ կենդանի ենք մենք և յաղթեցինք:  
Եւ յաղթանակով տարէք նորան Բէյմս:  
(Դիւ Շատէլը գնում է:)

**ՈՒԹԵՐՈՐԴ ԵՐԵՒՈՅԹ**

**Ա.Ռ.Ա.Ջ.Ի.Ն.Ն.Ե.Ր.Ը և Լ.Ա. Հ.Ի.Ր**

**ԴԻԻՆՈՒՍ**

Մենակ էք, Լա Հիր. ո՛ւր է Յովհաննան:

**Լ.Ա. Հ.Ի.Ր**

Այդ ես եմ հարցնում: Չեղ մօտ էր կռվում,  
Երբ որ հեռացայ:

**ԴԻԻՆՈՒՍ**

Ես կարծում էի,

Թէ կը պաշտպանէք նորան, երբ ինքս  
Շտապով օգնութիւն հասայ արքային:

**ԲՈՒՐԳՈՒՆԴ**

Թշնամու խուռն բազմութեան մէջ նոր  
Տեսայ, ծածանում էր նորա դրօշը:

**ԴԻԻՆՈՒՍ**

Վայ մեզ, ո՛ւր է նա: Շտապենք, աղատենք —  
Ես վախենում եմ, թէ վտահացաւ  
Շատ առաջ գնալ, և շրջապատած  
Թշնամիներով մենակ կռվում է,  
Եւ անօգնական յաղթահարվում է  
Այժմ ամբոխից:

**ԿԱՐԼՈՍ**

Գնացէք, փրկեցէք:

**Լ.Ա. Հ.Ի.Ր**

Երթանք, պատրաստ եմ:

**ԲՈՒՐԳՈՒՆԴ**

Այո՛, գնանք, շտապենք:

**պատերազմական դաշտի մի այլ ամառի  
կողմը**

Հեռուից երևում են Բէյմսի աշտարակները լուսաւորուած արևի ճառագայթներով:

**ԻՆՆԵՐՈՐԴ ԵՐԵՒՈՅԹ**

**Մ.Ի. Ա. Ս. Պ. Ե. Տ.**, սևազգեստ և երեսը դիմակով ծածկած: **Յ. ՈՎ. Հ. Ա. Ն. Ն. Ա.**  
հալածում է նորան մինչև բեմի առաջակողմը, ինչտեղ նա կանգնում է և  
սպասում է Յովհաննային:

**Յ. ՈՎ. Հ. Ա. Ն. Ա.**

Ո՛վ դու նենգաւոր, հիմա հասկացայ  
Խորամանկութիւնդ: Դու ինձ խաբելով  
Կեղծեալ փախուստով հեռացրիր կռուից  
Եւ ազատեցիր շատ անգլիացոց

Մահուան օրհասից: Բայց ինքի հիմա  
կը մեռնես այստեղ:

ՍԵՒ ԱՍՊԵՏ

Ինչի՞ կատաղած  
ետեիցս ընկած հալածում ես ինձ:  
Ինձ վիճակուած չէ քո ձեռով մեռնիլ:

ՅՈՎՀԱՆՆԱ

Բողոր սրտովս ատում եմ ես քեզ,  
Ինչպէս ատում եմ զիշերը, որի  
Գոյնը կրում ես: Մի անյաղթելի  
Բաղձանք ստիպում է ինձ խաւարեցնել  
Կեանքիդ արեւը: Ո՞վ ես, բացարձակ  
Դիմակդ — եթէ պատերազմի մէջ  
Չէի տեսել ես Տալբօի մահը,  
Կը կարծէի թէ դու ես քաջ Տալբօն:

ՍԵՒ ԱՍՊԵՏ

Միթէ լռել է մարգարէական  
Ձայնը սրտիդ մէջ:

ՅՈՎՀԱՆՆԱ

Ո՛չ, նա ատում է,  
Որ դժբաղդութիւնն է մօտս կանգնած:

ՍԵՒ ԱՍՊԵՏ

Յովհաննա դ՛ Արկ, մինչ Բէյմի դռները  
Հասար յաղթութեան թևերի վերայ:  
Բաւականացիր այդ ստացած փառքով,  
Արձակիր բաղդը, որ քեզ ծառայեց  
Իբրև մի գերի, առաջ քան թէ նա  
Ձայրացած ինքը կազատէ իրան:  
Հաւատարմութիւնն ասելի է նրան  
Եւ դեռ ոչ որին երբէք մինչև վերջ  
Չէ ծառայել նա:

ՅՈՎՀԱՆՆԱ

Ինչի՞ ընթացքս  
Իտարեցնում ես և ստիպում թողնել

Գործս անկատար: Պէտք է աւարտեմ  
Եւ այդպէսով իմ ուխտը կատարեմ:

ՍԵՒ ԱՍՊԵՏ

Ո՞վ դու գորաւոր, ոչ որ կարող չէ  
Քեզ ընդդիմանալ, դու ամեն կովում  
Յաղթող ես լինում — բայց այսուհետև  
Ել կռիւ մի՛ մտնիր. լսիր խըրատս:

ՅՈՎՀԱՆՆԱ

Ձեռից չեմ թողնի երբէք այս սուրը,  
Մինչև Անգլիան չը խոնարհեցնեմ:

ՍԵՒ ԱՍՊԵՏ

Ահա, Բէյմը իւր աշտարակներով,  
Ընթացքիդ վերջը ու նպատակը —  
Ահա տեսնում ես, ինչպէս փայլում է  
Կաթուղիկէի բարձր գմբէթը:  
Այնտեղ կը մտնես դու յաղթանակով,  
Թագով կը պսակես արքայիդ գլուխը  
Եւ կը կատարես, ինչ որ ուխտել ես:  
— Բայց մի՛ գնա, դարձիր, լսիր խըրատս:

ՅՈՎՀԱՆՆԱ

Ո՞վ ես, երկեղու, խաբէբայ էակ,  
Որ ուզում ես ինձ վախեցնել, շփոթել,  
Համարձակվում ես սուտ գուշակութեամբ  
Ինձ մոլորեցնել:

(Սկազգեստ ասպետը ուզում է հեռանալ. Յովհաննան կտրում է նորա ձանապարհը:)

Ո՛չ, պատասխանիր,

Թէ չէ կը մեռնես իսկոյն իմ ձեռով:

(Յովհաննան ուզում է սրով զարկել նորան:)

ՍԵՒ ԱՍՊԵՏ

(Ձեռով դիպչում է Յովհաննային, որ մնում է անշարժ:)

Սպանիր նրան, ով որ մահկանացու է:

(Տեսարանը յանկարծ մթնում է. կայծակ և որոտմունք. Ասպետը անյայտանում է:)

ՅՈՎՀԱՆՆԱ

(Սկզբումը կանգնած է անշարժ, բայց շուտով ժողովում է իրան:)

Սա հողեղէն չէր, այլ մի դժոխային  
Խաբեբայ պատկեր, ապստամբ ողի  
Որ բարձրացել էր հրեղէն անդունդից  
Սիրտս շփոթելու: Բայց ո՞վ կարող է  
Ինձ զարհուրեցնել, քանի որ Աստուծոյ  
Սուրբ ձեռիս է: Յաղթութեամբ պէտք է  
Պսակեմ ընթացքս: Եթէ դժոխքն էլ  
Բոլոր զօրութեամբ յարձակուի ինձ վրայ,  
Ես չեմ վհատի, ես չեմ վախենայ:  
(Ուզում է գնալ:)

ՏԱՍՆԵՐՈՐԴ ԵՐԵՒՈՅԹ

ԼԻՕՆԵԼ, ՅՈՎՀԱՆՆԱ

ԼԻՕՆԵԼ

Անիծած, իսկոյն կռուի պատրաստուիր  
Մեղանից մէկը պիտ' մեռնի այստեղ:  
Դու մեր քաջերից շատերին մեռցրիր.  
Ազնիւ ճալթօն իմ բազուկների վրայ  
Փչեց վեհ հողին—կամ կառնեմ քեզնից  
Այն քաջի վրէժը, կամ կը մասնակցիմ  
Նորա օրհասին: Եւ որ զիտենաս  
Թէ քեզ մեծ փառք է, մեռնեմ, թէ յաղթեմ,  
Ահա իմացիր—ես եմ Լիօնէլ,  
Մեր զօրքում մնացած վերջին իշխանը,  
Եւ այս բազուկը դեռ չէ նուաձած:

(Նա յարձակվում է Յովհաննայի վերայ. կարճ մենամարտութիւնից յետոյ,  
Յովհաննան վայր է ձգում սուրբ նորա ձեռից:)

Ո՞վ ապերախտ բաղդ:

(Նորա կովում են առանց գէնքի:)

ՅՈՎՀԱՆՆԱ

(Բռնում է ետևից նորա սաղափարտի գարդմանակը և խլում է սաղափարտը:  
Լիօնէլի դէմքը բացվում է, մի և նոյն ժամանակ Յովհաննան բարձրացնում է սուրբ:)

Ստացիր ուզածդ:

Սուրբ կոյսը քեզ իմ ձեռով զոհում է:

(Այդ բոպէին նայում է նա Լիօնէլի երեսին, որի տեսքը գրաւում է նորան.  
Նա մնում է անշարժ և կամաց վայր է թողնում ձեռը:)

ԼԻՕՆԵԼ

Ի՞նչ ես ուշացնում մահու հարուածը,  
Առ կեանքս, ինչպէս առար պարծանքս.  
Ես քո ձեռին եմ, մի խընայիր ինձ:  
(Յովհաննան ձեռով նշան է անում նորան, որ հեռանայ:)  
Փախչեմ, կեանքս քեզ պարտական լինիմ—  
Լաւ է կը մեռնիմ:

ՅՈՎՀԱՆՆԱ

(Երեսը դարձնելով:)

Ես չեմ կամենում

Գիտենալ, թէ քո կեանքն իմ ձեռին էր:

ԼԻՕՆԵԼ

Ես ատում եմ քեզ և քո պարզւեր—  
Ես չեմ կամենում, որ դու ինձ խնայես—  
Սպանիր թշնամուդ, որ քեզ ատում է,  
Որ կամենում էր ինքը քեզ սպանել:

ՅՈՎՀԱՆՆԱ

Սպանիր—և փախիր:

ԼԻՕՆԵԼ

Այս ի՞նչ է

ՅՈՎՀԱՆՆԱ (երեսը ծածկելով:)

Վայ ինձ:

ԼԻՕՆԵԼ (մօտ գնալով:)

Ասում են, թէ դու սպանում ես բոլոր  
Բրիտանիացոց, որոնց յաղթում ես—  
Ինձ է՞ր ես խնայում:

ՅՈՎՀԱՆՆԱ

(Շուտ բարձրացնում է սուրբ, բայց նայելով նորա երեսին իսկոյն կրկին վայր է թողնում:)

Ո՛վ սուրբ կոյս:

ԼԻՕՆԵԼ

Նորան

Ինչի՞ ես կանչում, քեզ չէ ճանաչում,  
Երկինքը քեզ հետ ոչ ինչ գործ չունի:

ՅՈՎՀԱՆՆԱ

(Սաստիկ շփոթուած:)

Վայ ինձ, ի՞նչ արի. ուխտս կտարեցի:  
(Յուսահատութեամբ կցում է ձեռները:)

ԼԻՕՆԵԼ

(Նայում է նորան կարեկցութեամբ և մօտ է գնում:)  
Տարաբաղդ աղջիկ, ես քեզ խղճում եմ.  
Դու ինձ շարժեցիր մեծահոգութեամբ.  
Զգում եմ անցնում է ատելութիւնս.  
Ես կարեկցում եմ քեզ: Ասա՛, ո՞վ ես  
Ի՞նչտեղից եկար:

ՅՈՎՀԱՆՆԱ

Հեռացիր, փախիր:

ԼԻՕՆԵԼ

Ես ափսոսում եմ մանուկ հասակդ,  
Գեղեցկութիւնդ: Տեսքդ շարժում է  
Սիրտս կուրծքիս մէջ. ես կամենում եմ  
Փրկել քեզ. եկ, եկ, հրաժարուի՛ր դժոխքից,  
Դէն ձգիր զէնքը:

ՅՈՎՀԱՆՆԱ

Ես անարժան եմ

Կրել այս զէնքը:

ԼԻՕՆԵԼ

Շուտով դէն ձգիր

Եւ հետևիր ինձ:

ՅՈՎՀԱՆՆԱ (սարսափած:)

Ես քեզ հետևի՞մ:

ԼԻՕՆԵԼ

Դու պիտի փրկուիս: Ե՛կ հետս, ես քեզ  
Ուզում եմ փրկել. բայց մի ուշանար  
Սաստիկ ցուում է սիրտս քեզ համար  
Եւ փափագում է քո փրկութիւնը:  
(Բռնում է նորա ձեռը:)

ՅՈՎՀԱՆՆԱ

Ահա՛ գալիս է Դիւնուան. նորա  
Որոնում են ինձ: Եթէ քեզ տեսնեն—

ԼԻՕՆԵԼ

Ես կը պաշտպանեմ քեզ:

ՅՈՎՀԱՆՆԱ

Ես կը մեռնիմ,

եթէ քեզ սպանեն:

ԼԻՕՆԵԼ

Սիրում ես դու ինձ:

ՅՈՎՀԱՆՆԱ

Երկնային սուրբեր:

ԼԻՕՆԵԼ

Արդեօք միւս անգամ

Կը տեսնեմ ես քեզ:

ՅՈՎՀԱՆՆԱ

Երբէք, ո՛չ երբէք:

ԼԻՕՆԵԼ

Այս սուրբ ահա թող գրեաւ լինի,  
Որ մենք կը տեսնուինք:

(Խլում է նորա սուրբը:)

ՅՈՎՀԱՆՆԱ

Խելագար, ի՞նչպէս

Համարձակվում ես:

ԼԻՕՆԵԼ

Հիմա գորութեան

Տեղի եմ տալիս. էլի կը տեսնուինք:

(Դուրս է գնում:)

### ՏԱՍՆԵՒՄԻԵՐՈՐԴ ԵՐԵՒՈՅԹ

ԴԻԻՆՈՒԱ, ԼԱ ՀԻՐ, ՅՈՎ ՀԱՆՆԱ:

ԼԱ ՀԻՐ

Նա կենդանի է, ահա այստեղ է:

ԴԻԻՆՈՒԱ

Մի վախենար, մենք, բարեկամներդ,  
Մօտդ ենք, Յովհաննա:

ԼԱ ՀԻՐ

Տեսէք փախչողը

Լիօնէլը չէ՞

ԴԻԻՆՈՒԱ

Թող փախչի: Արդար

Գործը յաղթող է, Յովհաննա. Իէյմը  
Արդէն բաց արեց մեզ իւր դռները,  
Եւ ժողովուրդը ուրախ, ցնծութեամբ  
Գիմաւորում է իւր թաղաւորին:—

ԼԱ ՀԻՐ

Տեսէք, թէ ինչպէս դեղինեց Յովհաննան,  
Ուշաթափվում է:

(Յովհաննան տատանում է և թուլանում է:)

ԴԻԻՆՈՒԱ

Վիրաւորուած է—

Հանկեք զերահը—բազուկն է խոցուած,  
Բայց թեթև վէրք է:

ԼԱ ՀԻՐ

Արիւն է գնում:

ՅՈՎ ՀԱՆՆԱ

Թողէք իմ կեանքն էլ քամուի նորա հետ:

(Նա ուշաթափ ընկնում է Լա Հիրի բազուկների վերայ:)

(Ետեւ 3 օր)

### ԶՈՐՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

մի փառաւոր զարդարած դահլիճ

Սիւները զարդարած են ծաղիկ փունջերով, բեմի ետեւ լսվում է սրնգի և  
փողերի ձայներ:

### ԱՌԱՋԻՆ ԵՐԵՒՈՅԹ

ՅՈՎ ՀԱՆՆԱ

Ահա հանդարտ են զէնքերը, պատերազմը դադարեց  
Արիւնահեղ կոիւներին ուրախութիւն յաջորդեց,  
Փողոցներում ամեն կողմը նուագածութիւն, երգ և պար,  
Հանդիսաւոր շքով փայլում են սուրբ սեղան ու տաճար.  
Եւ յաղթական կամարները զարդարուած են ոստերով,  
Եւ սիւները պսակուած են ծաղիկների փունջերով,  
Իէյմն ընդարձակ չէ բաւական իւր բազմաթիւ հիւրերին,  
Որոնք գալիս են մասնակցիլ այս ազգային հանդիսին:

Իւրաքանչիւր սիրտ վառուած է մէկ զգացմունքով ցնծութեան,  
Եւ ամենքը սերտ կապուած են զաղափարով միութեան.  
Նոքա, որոնք ատելութեամբ նայում էին մէկ մէկին,  
Զմայած հոգով մասնակից են ընդհանրութեան հրճուանքին.  
Եւ ով իրան Ֆրանկեան ցեղին դաւանում է հարազատ,  
Իւր ազգի փառքը տեսնելով, զգում է իւր անձը հպարտ,  
Նորոգուեցաւ Ֆրանսիական հին թագի շուքը կրկին,  
Բոլոր ազգը հնազանդում է իւր հարազատ արքային:

Բայց ինձ, որ այս շքեղութիւնն ընծայեցի իմ ազգին,  
Ընհանրութեան երջանկութիւնն ինձ չէ գրաւում բընաւին:

Ախ, կուրծքիս մէջ բողբոջին սիրտս փոխուած եմ ըզգում,  
 Նա փառաւոր այս հանդիսից հեռու, հեռու է փախչում.  
 Նա այստեղեց բրիտանական զօրքի բանակն է դիմում,  
 Աչքս այնտեղ հայրենիքիս թշնամունն է որոնում,  
 Եւ ստիպուած եմ ես հեռանալ ուրախութեան շրջանից,  
 Որ իմ սրտի ծանր յանցանքը թաղցնեմ աշխարհից:

Ո՛վ: Ե՞ս, ես պէտք է կրեմ անարատ  
 կուրծքիս մէջ մի այր մարդու պատկերը,  
 Երկնային շքով լիացած սիրտս  
 Պէտք է զրուակ՝ երկրաւոր սէրը:  
 Ես, հայրենիքիս ազատարարս,  
 Ամենաբարձրեալ Աստուծոյ զինուորս  
 Պէտք է տարփաւոր սիրով բորբոքուիմ  
 Իմ բընիկ երկրի թշնամու համար,  
 Եւ ի՞նչ երեսով նայեմ արեւին,  
 Ինչի՞ չեմ մեռնում ես ամօթահար:

Աւանդ, վայ ինձ, ի՞նչ հնչեւներ,  
 Ի՞նչպէս խաբում են ականջս.  
 Կարծես նա է հետս խօսում,  
 Կարծես կանգնած է առաջս:

Երանի ինձ պատերազմի  
 Փոթորիկը յափշտակէր.  
 Արիւնահեղ կրօններում  
 Նուազած հոգիս նոր ոյժ կառնէր:

Այս ձայները, հնչեւները  
 Ի՞նչպէս սիրտս կաշկանդում են,  
 Ի՞նչպէս հոգիս թուլացնում են,  
 Աչքիս արտասունքը քամում են:

Սպանէի նորան: Ի՞նչպէս սպանէի,  
 Երբ որ նայեցի նորա աչքերում:  
 Նորան ըսպանել: Աւելի շուտով

Կրճեղքէր սուրս սեփական կուրծքս:  
 Մի՞թէ արժանի եմ պատուհասի,  
 Որ դու՞ ըզգացի, մի՞թէ յանցանք է  
 Կարեկցութիւնը: — Ի՞նչ, կարեկցութիւն.  
 Է՞ր չըլտեցիր մարդասիրութեան  
 Եւ կարեկցութեան ողորմած ձայնին,  
 Երբ սուրդ զոհում էր ուրիշներին,  
 Երբ որ վալիսցի երիտասարդը  
 Այնքան աղաչեց իւր կեանքի համար:  
 Նենդաւոր սիրտ դու, դու սուտ ես խօսում,  
 Գթութեան ձայնը չէր քեզ թելադրում:

Ինչի՞ նայեցի նորա աչքերին,  
 Ախ ինչի՞ տեսայ այն ազնիւ դէմքը:  
 Տարաբաղդ աղջիկ, քո այդ հայեացքն էր  
 Յանցանքիդ սկիզբը: Տէր Աստուածը կոյր  
 Գործիք է ուզում, և կոյր աչքերով  
 Պէտք է գործէիր. բայց երբ որ տեսար,  
 Յետ քաշեց քեզնից Աստուած իւր ձեռը,  
 Եւ քեզ պատեցին դժոխքի ցանցերը:

Ո՛վ համեստ ցուպ, ախ ինչի՞ քեզ  
 Ես սրբի հետ փոխեցի,  
 Ո՛վ սուրբ կաղնի, ախ, ինչի՞ քո  
 Սօսափիւնը լսեցի:  
 Երանի՞ դու չէիր յայտնուել  
 Ինձ, թաղուհի երկնային,  
 Ա՛ն ինձանից, արժանի չեմ  
 Ես փառաւոր քո թագին:

Ա՛խ, ես տեսայ երկինքը բաց  
 Եւ ժողովը սուրբերի,  
 Բայց իմ յոյսը չէ երկնքում,  
 Այլ այստեղ է վրայ երկրի:  
 Է՞ր սոսկալի այս պաշտօնը  
 Կամեցար դու ինձ յանձնել,

Զգայուն ստեղծած սիրտս մի՞թէ  
Կարող էի քարացնել:

Եթէ յայտնել կամենում ես  
Քո զօրութիւնը երկնային,  
Ապա պէտք է որ ուղարկես  
Քո անարատ հրեշտակներին,  
Որոնք անմահ են, չեն ըզգում,  
Որոնք երբէք չեն արտասվում:  
Բայց մի՛ ընտրիր որպէս զործիք  
Մի փափկասիրտ հովիւ աղջիկ:

Ինչ փոյթ էր ինձ պատերազմը,  
Արքաների կռիւն ու վէճ,  
Գառնուկներս արածելով  
Հանգիստ էր սիրտս իմ մէջ.  
Բայց դու բռնի ինձ մղեցիր  
Այս պալատը փառաւոր.  
Ես մեղք չունիմ: այս վեճակը,  
Ա՛խ, չընտրեցի կամաւոր:

### ԵՐԿՐՈՐԴ ԵՐԵՒՈՅԹ

Ա. Գ. Ն. Ե. Ս. Ս. ՕՐԵԼ, ՅՈՎ. ՀԱՆՆԱ.

ՍՕՐԵԼ

(Գալիս է սաստիկ ուրախացած և Յովհաննային տեսնելով, վազում է նորա մօտ և փաթաթվում է նորա վզին. յանկարծ ուշքի գալով թողնում է նորան և ընկնում է նորա առաջ:)

Այսպէս չէ: Պէտք է քո ոտը ընկնիմ:

ՅՈՎ. ՀԱՆՆԱ.

(Ուզում է բարձրացնել նորան:)

Վեր կաց: Այս ի՛նչ է: Դու մոռանում ես  
Թէ քեզ և թէ ինձ:

ՍՕՐԵԼ

Թող ինձ, Յովհաննա,

Ուրախութիւնն է ինձ խոնարհեցնում  
Այսպէս քո առաջ— իմ սիրտը լեքն է:  
Թող թեթևացնեմ Աստուծոյ առաջ:  
Քո մէջ պաշտում եմ անտեսանելի  
Իմ Տէր Արարչին: Դու այն հրեշտակն ես,  
Որ իմ տիրոջը Ռէյսն առաջնորդեց  
Եւ արքայական թագով պսակում է:  
Կատարուեցաւ այն, ինչ որ ես տեսնել  
Երբէք կեանքիս մէջ չէի երազել:  
Պատրաստ է հանդէսը թագադրութեան,  
Թագաւորն արդէն զգեստաւորուել է,  
Բոլոր իշխանները ժողովվել են,  
Որ արքայական նշանները տանեն.  
Անթիւ ժողովուրդ խումբ խումբ դիմում է  
Մայր եկեղեցին: Ահա՛, լսում ես  
Ինչպէս հնչում են երաժշտութիւնն  
Ու զանգակները.— Ո՛հ, որքան մեծ է  
Երջանկութիւնս:

(Յովհաննան կամաց բարձրացնում է նորան: Ագնէս Սօրելը կարճ ժամանակ լռում է նայելով Յովհաննայի աչքերին:)

Բայց դու միշտ ծանր ես,

Դու ուրիշներին բաղդաւորում ես,  
Ինքդ չես ըզգում բաղդաւորութիւն.  
Քո սիրտը սառն է. դու անզգայ ես  
Մեր ուրախութեան: Արդէն տեսել ես  
Երկնային շքեղ փառաւորութիւնն,  
Եւ աշխարհային երջանկութիւնը  
Կարող չէ շարժել: քո մաքուր կուրծքը:

(Յովհաննան սաստիկութեամբ բռնում է նորա ձեռք բայց չուտով էլի թողնում է:)

Ո՛հ, թէ իբրև կին կարողանայիր  
Դու էլ ինձ պէս զգալ: Հանիր այդ զօհհը  
Հանիր, պատերազմն արդէն վերջացաւ,  
Կրկին կին եղիր: Միրազգաց սիրտս  
Փախչում է քեզնից, քանի նման ես  
Դու խիստ Պալլասին:

ՅՈՎՀՆԱՆԱ

Ի՞նչ ես պահանջում:

ՍՕՐԷԼ

Թող այդ զէնքերը, հանիր այդ զրահը:  
Սէրը վախենում է երկաթապատ  
Կուրծքիդ մօտենալ: Ո՛հ, եղեր մի կին  
Եւ դու սէր կը զգաս:

ՅՈՎՀՍՆՆԱ

Թողնեմ զէնքերը,

Հիմա: Ո՛չ: Կուվում պիտի դէմ անեմ  
Իմ կուրծքը մահուան — Ո՛հ, երանի թէ  
Եօթնապատիկ զրահ պաշտպանէր այժմ ինձ  
Ձեր հանդէսներէց և նոյն իսկ ինձնից:

ՍՕՐԷԼ

Քեզ սիրում է կոմս Գիւնուան: Նորա  
Պատուական սիրտը, որ նուիրած էր  
Միմիայն փառքին և դիւցազնական  
Առաքինութեան, այժմ քեզ համար  
Այդ ազնիւ սիրտը բորբոքուած է սուրբ  
Սիրոյ զգացմունքով: Ո՛հ, գեղեցիկ է  
Սիրուիլ դիւցազնից, աւելի ևս —  
Սիրել դիւցազնին:

(Յովհաննան զգուանքով դարձնում է երեսը:)

Ատճում ես նորան —

Ո՛չ, ո՛չ, դու միայն չես սիրում նորան —  
Եւ ինչք՞ պէտք է ատես: Ատելին  
Նա է մեզ համար, ով որ մեզանից  
Յափշտակում է մեր սիրականին.  
Բայց քեզ սիրելի չէ և ոչ մէկը.  
Սիրտդ հանդարտ է — Եթէ ըզգայիր —

ՅՈՎՀՍՆՆԱ

Ողբա՛, արտասուիր իմ բաղդի վերայ.

ՍՕՐԷԼ

Բայց ի՞նչ է պակաս քո երջանկութեան.

Դու կատարեցիր, ինչ որ խոստացար,  
Ֆրանսիան ազատ է: Դու յաղթանակով  
Իւր թագադրութեան քաղաքը բերիր  
Քո թագաւորին, փառաւորուեցար,  
Քեզ մեծարում է, օրհնաբանում է  
Ժողովուրդը, որ բաղդաւորեցիր.  
Բոլոր լեզուները քեզ են գովում,  
Դու այս հանդիսի աստուածուհին ես:  
Եւ նոյն իսկ արքան իւր շքեղ թագով  
Չէ փայլում քեզ հետ հաւասար փառքով:

ՅՈՎՀՍՆՆԱ

Ո՛հ, երանի թէ կարողանայի  
Ծածկուիլ գետնի տակ:

ՍՕՐԷԼ

Ի՞նչ է պատահել,

Այդ ի՞նչ ես ասում: Էլ ո՞վ կարող է  
Ազատ վեր նայել այսօրուայ օրը  
Թէ դու աչքերդ պիտ' խոնարհեցնես:  
Ե՛ս պիտի կարմրիմ, ես, որ քո առաջ  
Ձգում եմ իմ անձը շատ փոքր ու չնչին,  
Որ անկարող եմ քո դիւցազնական  
Զօրութեանը և մեծութեան հասնել:  
Խոստովանիմ քեզ իմ թուրութիւնը  
Սիրտս չէ գրաւում ոչ հայրենիքիս  
Փառքը, ոչ գահի նորոգուած շուքը,  
Ոչ ժողովուրդի ուրախութիւնը:  
Միայն մէկը կայ, որ բոլորովին  
Տիրել է սրտիս, որի համար սա  
Միայն ըզգում է, և այդ մէկ հասն է  
Սրտիս սիրելին, հոգուս պաշտելին,  
Որին ժողովուրդը մեծարում է  
Որին օրհնում է, որի ոտի տակ  
Սիրով սփռում է այս ծաղիկները:

ՅՈՎՀՍՆՆԱ

Ո՛հ, երջանիկ ես, երանելի ես,

Որ քո սիրելին սիրելի է և  
 Ամբողջ Ֆրանսիային: Վստահ կարող ես  
 Բաց անել սիրտդ ամենի առաջ,  
 Բարձրաձայն յայտնել քո ցնծութիւնը,  
 Համարձակ նայել մարդկանց երեսին:  
 Քաղաւորութեան այս շքեղ տօնը  
 Քո սիրոյ տօնն է: Բոլոր անհամար  
 Այս բազմութիւնը, որ ժողովվել է  
 Այս պարիսպներում, մանակից է քո  
 Ջգացմունքին, որ սուրբ է և նուիրական:  
 Ժողովուրդը քեզ է փառաւորում,  
 Քեզ համար է նա պսակներ հիւսում,  
 Ամենքը քեզնով են ուրախանում:  
 Քո սիրելին է նա, որ բոլորի  
 Սիրտը զուարթացնող պայծառ արևն է,  
 Եւ քո տեսածը քո սիրոյ փայլն է:

ՍՕՐԷԼ

(Փաթաթվում է նորա վզին):  
 Հիացնում ես ինձ, դու բոլորովին  
 Հասկանում ես ինձ: Այո՛ քո մասին  
 Սխալ էր կարծիքս. լաւ իմանում ես  
 Թէ ինչ է սէրը և ձիշտ յայտնում ես  
 Դու իմ զգացմունքը: Այժմ աներկիւղ  
 Կարող է սիրոս սրտիդ մօտենալ:

ՅՈՎՀԱՆՆԱ

(Սաստկութեամբ խրուելով նորա գրկից):  
 Թող ինձ, հեռացիր, մի պղծիր անձդ  
 Իմ ժանտախտային մերձաւորութեամբ:  
 Երջանիկ եղեր: Թող ինձ զիշերի  
 Խորը խաւարում ծածկեմ իմ դէմքը  
 Իմ նախատինքը, իմ զարհուրանքը:—

ՍՕՐԷԼ

Վախեցնում ես ինձ, չեմ հասկանում քեզ,  
 Ոչ էլ քեզ երբէք հասկացել եմ ես,  
 Եւ միշտ ծածուկ է եղել ինձ համար

Անթափանցել քո բընութիւնը:  
 Ո՛վ զիտէ արդեօք, թէ քո սուրբ սիրտը  
 Քո քնքուշ հոգին ինչն է վախեցնում:

ՅՈՎՀԱՆՆԱ

Դու, դու ես սուրբը, դու ես մաքուրը  
 Եթէ տեսնէիր իմ սրտի խորը,  
 Կը սարսափէիր և կարտաքսէիր  
 Քեզնից թշնամի, դաւաճան աղջկան:

ԵՐՐՈՐԴ ԵՐԵՒՈՅԹ

ԴԻԻՆՈՒԱ, ԴԻԻ ՇԱՏԷԼ և ԼԱ ՀԻՐ ՅՈՎՀԱՆՆԱՅԻ ԴՐՕՂԱԿՈՎ:

ԴԻԻՆՈՒԱ

Քեզ ենք որոնում, Յովհաննա: Ահա՛  
 Արդէն ամեն բան պատրաստ է: Արքան  
 Ուղարկում է մեզ և կամենում է,  
 Որ դու սուրբ դրօշը տանես նորա առաջ  
 Իշխանների հետ մի կարգին գնալով,  
 Պէտք է ամենքից մօտ լինիս նրան:  
 Նա չէ ուրանում և կամենում է  
 Բոլոր աշխարհի առաջ վկայել,  
 Որ այս փառաւոր օրուայ պատիւը  
 Քեզ է պարտական, դու ես պարգևել:

ԼԱ ՀԻՐ

Ահա՛ քո դրօշը, բռնիր, ազնիւ կոյս,  
 Գընանք իշխանները քեզ են սպասում,  
 Ժողովուրդը քեզ տեսնել է ուզում:

ՅՈՎՀԱՆՆԱ

Ես պիտի զընամ արքայի առաջ,  
 Ես պիտի ձեռիս տանեմ այս դրօշը:

ԴԻԻՆՈՒԱ

Բացի քեզանից ո՛ւմն է վայելուչ,  
 Ո՛ւմ ձեռն է մաքուր, որ այս սրբազան

Դրօշը կրօնելու արժանի լինի:  
Սա ծածանում էր քո ձեռին կուռի  
Դաշտերի վերայ, այժմ այս խաղաղ  
Հանդիսի համար կրիր իրրև զարդ:

(Լա հիրը ուզում է տալ դրօշը Յովհաննային, որ զարհուրելով յետ է քաշ-  
վում:)

ՅՈՎՀԱՆՆԱ

Հեռու, ո՛հ, հեռու:

ԼԱ ՀԻՐ

Ի՞նչ է Յովհաննա,  
Դու վախենում ես սեփական դրօշից,  
Ահա, աես,

(Պարզում է դրօշը:)

Այն է, որով յաղթեցիր:

Տես նկարած է վերան երկնային  
Թագուհին կանգնած երկրազնդի վրայ,  
Ինչպէս որ ինքը պատուիրել էր քեզ:

ՅՈՎՀԱՆՆԱ

(Չարհուրանքով նայում է դրօշին:)

Նա է, նա ինքը, այդպէս յայտնուեցաւ  
Տեսէք ինչ աչքով նայում է նա ինձ,  
Ինչպէս կնձռում է նա իւր ճակատը,  
Ինչպէս աչքերը փայլատակում են:

ՍՕՐԷԼ

Ի՞նչպէս շփոթուեցաւ: — Ո՛հ, հանդարտ եղեր,  
Ուշքդ ժողովիր: Սա խկուրթիւնն է,  
Սա միայն նորա նմանութիւնն է,  
Ինքը երկնային օթևանումն է:

ՅՈՎՀԱՆՆԱ

Ո՛վ դու սոսկալի, գալիս ես պատժել  
Քո արարածը: Պատժիր ինձ, փչացրու,  
Թափիր յանցաւոր իմ գլխի վերայ  
Քո կայծակները: Ուխտս քանդեցի,  
Ես անպատուեցի, ես հայհոյեցի

Քո սուրբ անունը:

ԴԻԻՆՈՒԱ

Վայ մեզ, այս ի՞նչ է  
Ի՞նչ չարագուշակ անբաղդ խօսքեր են:

ԼԱ ՀԻՐ

(Չարմանալով Դիւ Շատէլին:)

Հասկանում էք դուք սորա պատճառը

ԴԻԻ ՇԱՏԷԼ

Աչքով տեսնում եմ: Վաղուց այս բանից  
Վախենում էի:

ԴԻԻՆՈՒԱ

Ի՞նչ, ի՞նչ էք ասում:

ԴԻԻ ՇԱՏԷԼ

Զեմ համարձակում իմ միտքը ասել  
Աստուած տար որ այս օրը շուտ անցնէր  
Եւ թագաւորը պսակած լինէր:

ԼԱ ՀԻՐ

Մի՞թէ այս դրօշը, որ ահարկու էր  
Թշնամիներին, այժմ քո սիրտը  
Սարսափ է ձգում: Սա Ֆրանսիայի  
Թշնամիներին սարսափելի է,  
Բայց միշտ ողորմած է հաւատարիմ  
Նրա զաւակներին

ՅՈՎՀԱՆՆԱ

Այո, ուղիղ է:

Բարեկամների համար բարի է,  
Թշնամիներին սարսափեցնում է:

(Լսվում է թագադրութեան հանդիսի երաժշտութիւնը:)

ԴԻԻՆՈՒԱ

Ուրեմն դրօշն առ, շուտ առ, հանդէսը  
Արդէն սկսվում է. շուտ, էլ չուշանանք:

տեսարանը փոխվում է, ընդարձակ հրապարակ մաշք եկեղեցու առաջ:

**ՉՈՐՐՈՐԴ ԵՐԵՒՈՅԹ**

Բեմի ետևի կողմը բռնած ունին ՀԱՆԳԻՍԱՏԵՍՆԵՐԸ, որոնց միջից շուրս գալով ԲԷՐՏՐԱՆ, ԿԼՕԴ ՄԱՐԻ և ԷՏԻԷՆ առաջ են գալիս. փոքրից յետոյ նոյնպէս ՄԱՐԳՕ և ԼՈՒԻՉՕՆ: Թագադրութեան հանդիսի երաժշտութիւնը շարունակվում է խուլ կերպով հեռուից:

**ԲԷՐՏՐԱՆ**

Ահա, լսում էք երաժշտութիւնն,  
Արդէն գալիս են: Ո՞րն է լաւ արդեօք  
Գրնանք բարձրանանք այն տանիքի վրայ,  
Թէ ժողովուրդի մէջ մտնենք, որ լաւ  
Տեսնենք հանդէսը:

**ԷՏԻԷՆ**

Հնար չըկայ անցնել:

Տես, փողոցները լի են բազմութեամբ  
Զիով ու կառքով: Լաւ է կանգնենք այս  
Տների առաջ, այստեղից շատ լաւ  
Կարող ենք տեսնել, երբ որ կանցկենան  
Նոքա մեր առաջ:

**ԿԼՕԴ ՄԱՐԻ**

Կարծես Ֆրանսիայի

Կէսը այստեղ է: Այնքան զօրեղ է  
Հոսանքը, որ մեզ մինչ անգամ բերեց  
Այստեղ հեռաւոր Լօտարինգիայից

**ԲԷՐՏՐԱՆ**

Եւ ո՞վ կարող է պարսպ տանը մնալ,  
Երբ հայրենիքում այսպիսի մի մեծ  
Գործ է կատարվում: Եւ որքան քրտինք  
Եւ որքան արիւն թափուեցաւ, մինչև  
Թագն օրինաւոր արքային անցաւ,

Եւ մեր հարազատ բուն թագաւորը,  
Որի գլխին այժմ մենք թագ ենք կապում,  
Զրպէտք է պակաս հանդիսով պատկուի,  
Քան թէ նա, որին փարիզե բնակիչք  
Պատկեցին Սէն Դնի: Նա բարեմիտ չէ,  
Ո՞վ այս հանդիսից հեռու է մընում  
Եւ շեղեցէ արքան: չէ աղաղակում:

**ՀԻՆԳԵՐՈՐԴ ԵՐԵՒՈՅԹ**

ՄԱՐԳՕ և ԼՈՒԻՉՕՆ մօտենում են նոցա:

**ԼՈՒԻՉՕՆ**

Մարգօ, կը տեսնենք մենք մեր քրոջը:  
Ա՛խ, ինչպէս իմ սիրտը բաբախում է:

**ՄԱՐԳՕ**

Այո՛, կը տեսնենք նորան իւր փառքի  
Եւ մեծութեան մէջ, և կասենք մենք մեզ,  
Ահա Յովհաննան, ահա մեր քոյրը:

**ԼՈՒԻՉՕՆ**

Ես չեմ հաւատայ, մինչև չըտեսնեմ  
Նորան իմ աչքով, թէ այն հրջօրը  
Որին կանչում են Օրլէանի կոյս,  
Մեր Յովհաննան է, մեր կորած քոյրը:  
(Երաժշտութիւնը հետզհետէ մօտենում է:)

**ՄԱՐԳՕ**

Դեռ կասկածում ես, ահա կըտեսնես:

**ԲԷՐՏՐԱՆ**

Նայեցէք, ահա գալիս են նոքա:

**ՎԵՑՆԵՐՈՐԴ ԵՐԵՒՈՅԹ**

ՍՐՆԳԱ ՀԱՐՆԵՐ և ՓՈՂ. ՀԱՐՆԵՐ երևում են ամենից առաջ, նոցա հետևում են սպիտակազգեստ ՄԱՆՈՒԿՆԵՐ, որոնք ձեռներին բռնած ունին կանաչ ոստեր, նոցա ետեից գալիս են երկու ՄՈՒՆԵՏԻԿ, յետոյ մի գունդ ՆԻԶԱԿԱԻՈՐՆԵՐ և ԴԱՏԱԻՈՐՆԵՐ իրանց պաշտօնական զգեստներով, յետոյ երկու ՄԱՐՇԱԼ գաւազանով, ԲՈՒՐԳՈՒՆԻ ԴԻԱՅԻ ԳՈՒՔՍԸ սրով, ԳԻՒՆՈՒԱ արքայական գաւազանով, ուրիշ ԻՇԽԱՆՆԵՐ թագով, արքունի գնդակով և գատաւորական գաւազանով և նուէրներով, նոցա ետեից ԱՍՊԵՏՆԵՐ իրանց նշաններով, ԵՐԳԻԶ

ՄԱՆՈԿՆԵՐ բուրվառներով, յետոյ երկու ԵՊԻՍԿՈՊՈՍ օծման խորի  
ամանով, ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԸ խաչով, նորան հետևում է ՅՈՎՀԱՆՆԵՍ  
ՆԱՆ, դրօշով: Նա գնում է կորագլուխ և անհաստատ քայլերով: Նորան  
տեսնելով քոյրերը զարմացման և ուրախութեան նշաններ են յայտնում:  
Յովհաննայի ետեից գալիս է ԹԱԳԱՒՈՐԸ ամպհովանու տակ, որ բըռ-  
նած ունին չորս ԲԱՐՕՆՆԵՐ, յետոյ ՊԱԼԱՏԱԿԱՆՆԵՐ և վերջը  
ԶԻՆՈՒՈՐՆԵՐ: Երբ որ մտնում են եկեղեցին, երաժշտութիւնը լռում է:

### ԵՐԵՒՆԵՐՈՐԴ ԵՐԵՒՈՅԹ

ԼՈՒԻՋՕՆ, ՄԱՐԳՕ, ԿԼՕԳ ՄԱՐԻ, ԷՏԻԷՆ, ԲԷՐՏՐԱՆ

ՄԱՐԳՕ

Տեսար մեր քրոջը:

ԿԼՕԳ ՄԱՐԻ

Որ ոսկէ զբահով

Արքայի առաջ զընում էր դրօշով:

ՄԱՐԳՕ

Այո՛, մեր քոյրն էր, մեր Յովհաննան էր:

ԼՈՒԻՋՕՆ

Չըճանաչեց մեզ: Նա չէ իմանում,

Թէ որքան մօտ է քոյրերի կուրծքը:

Տխուր, գունաթափ և զողզողալով

Գնում էր դրօշ տակ — շիմա ուրախ չեմ,

Որ տեսայ նորան:

ՄԱՐԳՕ

Ահա՛ ես տեսայ

Մեր քրոջ փառքն ու շքեղութիւնը —

Ով արդեօք մեզնից երազումն անգամ

Կարող էր մտածել այսպէս փառաւոր

Տեսնել այն աղջկան, որ արածում էր

Մեր լեռների վրայ իւր ոչխարները:

ԼՈՒԻՋՕՆ

Ահա՛ կատարուեց մեր հօր երազը,

Որ մենք Րէյմսի մէջ պիտ' խոնարհէինք

Մեր քրոջ առաջ. ահա՛ այստեղ է

Այն եկեղեցին, որ երազի մէջ

Տեսաւ մեր հայրը. և ինչպէս տեսաւ,

Այնպէս էլ եղաւ: Բայց նա երազում

Տեսաւ նոյնպէս և տխուր պատկերներ:

Այո, ես ուրախ չեմ, որ մեր քրոջը

Այսպէս մեծ տեսայ:

ԲԷՐՏՐԱՆ

Բայց ինչք՞ պարապ

Կանգնել ենք այստեղ: Գնանք եկեղեցին,

Տեսնենք օծումը:

ՄԱՐԳՕ

Այո՛, եկէք գնանք

Գուցէ պատահինք մեր քրոջը այնտեղ:

ԼՈՒԻՋՕՆ

Մենք տեսանք նորան: Գառնանք մեր զիւղը:

ՄԱՐԳՕ

Ի՞նչ. գառնանք ողջոյն չըտուած նորան,

չեար չը խօսած:

ԼՈՒԻՋՕՆ

Նա այսուհետև

Մեզ չէ պատկանում: Նա պէտք է ապրի

Իշխանների և արքանների հետ —

Բայց մենք ո՞վ ենք, որ սրնապարծութեամբ

Ձգտում ենք նորա փառքին մօտենալ:

Նա մեզ օտար էր, դեռ երբ որ տանն էր:

ՄԱՐԳՕ

Բայց մի՞թէ ամօթ կը համարի մեզ.

Մի՞թէ քոյրերին նա կարհամարհէ:

ԲԷՐՏՐԱՆ

Ինքն արքան ամօթ չէ համարում մեզ.

Նա այնպէս սիրով ողջոյն էր տալիս

Ամենայեօին իւր հրպատակին:

Յովհաննան որքան կուզէ բարձրանայ,

Բայց արքան էլ մեծ է նորանից

(Եկեղեցու միջից լսվում են թմբկի և փողերի ձայներ):

ԿԼՕԳ ՄԱՐԻ

Ել ի՞նչ ենք կանգնել, գնանք եկեղեցին:

(Նորա գնում են բեմի ետեի կողմը և խառնվում են ժողովուրդի մեջ):

### ՈՒԹԵՐՈՐԴ ԵՐԵՒՈՅԹ

ՏԻՔՕ, գալիս է սևազգեստ, նորան հետևում է ԲԱՅՄՕՆ, որ աչխատում է յետ պահել նորան:

ԲԱՅՄՕՆ

Կացէք, հայր Տիքօ, կացէք, մի՛ յոնէք  
Ժողովուրդի մէջ: Տեսէք, ամենքը  
Ինչպէս ուրախ են, ձեր տրամուխիւնը  
Անպատուութիւն է այս շքեղ տօնին:  
Եկէք հեռանանք շուտ այս քաղաքից:

ՏԻՔՕ

Տեսա՞ր տարաբաղդ զաւակս, արդեօք  
Լա՛ւ նկատեցիր:

ԲԱՅՄՕՆ

Ո՛հ, աղաչում եմ,

Շուտով հեռացէք:

ՏԻՔՕ

Նկատեցիր դու,

Ինչպէս դողում էր, ինչպէս դեղնած էր,  
Ինչպէս շփոթուած էր նորա երեսը:  
Անբաղդ աղջիկը ինքն էլ է ըզզում  
Իւր դրբութիւնը: Յարմար բոպէ է,  
Չեմ ուզում կորցնել. այժմ կարող եմ  
Չաւակս փրկել: (Ուզում է գնալ:)

ԲԱՅՄՕՆ

Մի՛ գընաք, կացէք:

Այդ ի՞նչ էք անում:

ՏԻՔՕ

Ես կամենում եմ

Յանկարծ վրայ հասնել, իւր անտի փառքից  
Վայր ձգել նորան. այն բռնութեամբ  
Պիտի յետ դարձնեմ նորան առ Աստուած,  
Որից հեռացաւ:

ԲԱՅՄՕՆ

Լաւ մտածեցէք,

Մի՛ կորուստի մէջ ձգէք ձեր աղջկան:

ՏԻՔՕ

Փոյթ չէ, թէ մեռնի մարմինը, միայն  
Հոգին թող ապրի:

(Յովհաննան դուրս է վազում եկեղեցուց առանց դռնի: Ժողովուրդը դիմում է նորա մօտ, մեծարում է նորան և համբուրում է նորա հանդերձը: Նա մի քանի ժամանակ մնում տեսարանի խորքում բազմութեամբ շրջապատած:)

Ահա՛ աղջիկս:

Ինչպէս գունաթափ յանկարծ դուրս վազեց  
Նա եկեղեցուց: Երկիւղն է նորան  
Այդպէս հալածում Աստուծոյ տանից:  
Ո՛հ, դա երկնային արդարութիւնն է,  
Որ նորա վերայ այժմ յայտնվում է:

ԲԱՅՄՕՆ

Մնա՞ք բարով, ձեզ հետ էլ չեմ կարող գալ:  
Ես եկայ այստեղ քաղցր յոյսերով,  
Եւ հեռանում եմ դառը վշտերով:  
Այժմ, ես կրկին տեսայ ձեր աղջկան,  
Եւ զգում եմ նորից կորցնում եմ նորան:

(Նա դուրս է գնում: Տիքօն հեռանում է հակառակ կողմը:)

### ԻՆՆԵՐՈՐԴ ԵՐԵՒՈՅԹ

ՅՈՎ ՀԱՆՆԱ, ԺՈՂՈՎՈՒՐԿ, յետոյ նորա ՔՈՅՐԵՐԸ:

ՅՈՎ ՀԱՆՆԱ

(Ազատվում է ժողովուրդից և առաջ է գալիս:)

Չեմ կարող մընալ — ինձ հալածում են  
Խիստ ոգիները, որոտմունքի պէս  
Ականջիս հնչում է երգեհոնը.  
Կարծես ուզում են փչել զլեխ վրայ  
Կաթուղիկէի սուրբ կամարները:  
Ազատ երկնքի տակ պիտ' որոնեմ  
Ապահովութիւն: Սուրբ տաճարի մէջ  
Թողի իմ դրօշը, և էլ յաւիտեան  
Չը պէտք է դիպչի նորան իմ ձեռք: —  
Ինձ այնպէս է թվում, կարծես սիրելի  
Քոյրերս Մարդօն և Լուիզօնը  
Ինչպէս երազում անցան իմ առաջ: —  
Աւաղ, դա միայն սուտ երևոյթ էր.  
Նորա հեռու են, անհասանելի:

Ինչպէս հեռու է իմ մանկութիւնը,

իմ անմեղութեան երջանկութիւնը:

ՄԱՐԳՕ (առաջ գալով.)

Ահա Յովհաննան:

ԼՈՒԻՉՕՆ (վազում է նորա մօտ.)

Ո՛հ, սիրելի քոյր:

ՅՈՎՀԱՆՆԱ

Ուրեմն ցնորք չէր— Դուք էք ուրեմն—

Ձեզ եմ ես սխմում այժմ իմ կուրծքին,

Քեզ, իմ Լուիզօն, և քեզ իմ Մարգօ:

Օտար, բազմամարդ այս անապատում,

Դարձեալ գրկում եմ հարազատներին:

ՄԱՐԳՕ

Տես նա դեռևս ճանաչում է մեզ,

Էլն առաջուայ մեր բարի քոյրն է:

ՅՈՎՀԱՆՆԱ

Եւ այսքան հեռու բերեց ձեզ ինձ մօտ

Ձեր քնքոյշ սէրը: Դուք չէք բարկանում

Ձեր քրրոջ վերայ, որ սառը սրտով,

Առանց հրաժեշտի հեռացաւ ձեզնից:

ԼՈՒԻՉՕՆ

Քեզ աստուածային գաղտնի հրամանը

Կանչեց ու տարաւ:

ՄԱՐԳՕ

Քո մեծ համբաւը,

Որ տարածուած է այժմ ամեն տեղ,

Որ քո անունը յայտնեց աշխարհին,

Ձարթեցրեց և մեզ մեր համեստ գիւղում

Եւ այս փառաւոր հանդէսը բերեց:

Եկե՛կ ենք տեսնել քո շքեղ փառքը,

Եւ մենք մենակ չենք:

ՅՈՎՀԱՆՆԱ (շուտ)

Հայրս ձեզ հե՛տ է:

Ո՛ւր է ո՛ւր, ինչե՞ք չէ երևում ինձ:

ՄԱՐԳՕ

Հայրս մեզ հե՛տ չէ:

ՅՈՎՀԱՆՆԱ

Ո՛չ: Նա իւր որդուն

Չէ ուզում տեսնել: Դուք չէք բերել ինձ

Նրա օրհնութիւնը:

ԼՈՒԻՉՕՆ

Նորան յայտնի չէ

Մեր այստեղ գալը:

ՅՈՎՀԱՆՆԱ

Յայտնի չէ, ինչե՞ք—

Դուք շրփոթվում էք: Ինչե՞ք էք լռում

Ու գետնին նայում: Ո՛ւր է իմ հայրը:

ՄԱՐԳՕ

Ինչ որ հեռացար—

ԼՈՒԻՉՕՆ (Մարգօին նշան տալով.)

Մարգօ:

ՄԱՐԳՕ

Մեր հայրը

Սաստիկ տխուր է:

ՅՈՎՀԱՆՆԱ

Տխուր է, ինչե՞ք:

ԼՈՒԻՉՕՆ

Բայց մտիթարուէր, դու գիտես նորա

Կասկածոտ սիրտը: Նա կը հանդարտի

Եւ կուրախանայ, երբ որ կիմանայ,

Որ բաղդաւոր ես:

ՄԱՐԳՕ

Այո՛, ի հարկէ

Դու բաղդաւոր ես, պէտք է որ լինիս,

Քանի որ այդքան մեծ ես ու պատուած:

ՅՈՎՀԱՆՆԱ

Ես բաղդաւոր եմ, որ ձեզ տեսնում եմ,

Ձեր քաղցր ձայնը կրկին լսում եմ,

Հայրենի տունը, երբ որ յիշում եմ,

Ուր հովվում էի իմ գառնուկները:

Ահա այնտեղ ես բաղդաւոր էի

Իբրև դրախտի մէջ— Ո՛հ, արդե՞ք էլի

Պիտի տեսնեմ այդ երջանկութիւնը:

(Նա խածկում է իւր երեսը Լուիզօնի կուրծքի մէջ. Երևում են կոտ Մա-

բին, Էտիէնը և Բէրտրանը, որոնք չը համարձակելով մօտենալ, կանգնում են և հեռուից նայում են։)

ՄԱՐԳՕ

Եկէք, Էտիէն, Բէրտրան, Կլօդ Մարի,  
Եկէք, հպարտ չէ մեր քոյր Յովհաննան.  
Նա շատ բարի է և այնպէս սիրով  
Խօսում է մեզ հետ, ինչպէս որ երբէք  
Դեռ չէ խօսել նա, քանի որ զիւղում  
Ապրում էր մեզ հետ:

(Նոքա մօտենում են և ուզում են Յովհաննայի ձեռք բռնել: Սա ապշած նայում է նոցա և սաստիկ զարմացման մէջ է:)

ՅՈՎՀԱՆՆԱ

Ի՞նչ տեղ էի ես:

Արդեօք տեսածս երազ էր, որից  
Հիմա զարթեցայ: Մի՞թէ Դօմ Բըմից  
Հեռացել եմ ես: Ես քընած էի  
Այն կախարդական կաղնի ծառի տակ,  
Զարթեցայ, և դուք շուրջս կանգնած էք,  
Դուք իմ մտերիմ բարեկամներս:  
Երազում միայն տեսայ արքաներ,  
Ճակատամարտեր և պատերազմներ—  
Եւ այդ բոլորը ստուերի պէս անցաւ  
Իմ աչքի առաջ: Շատ է երազում  
Մարդ երբ քընում է այն ծառի տակը—  
Ի՞նչպէս եկաք Բէյմն, ես ինչպէս եկայ:  
Չէ՞ որ հեռացել չեմ ես մեր զիւղից:  
Ո՛հ, պարզ խօսեցէք, որ հանգստանայ  
Վրդոված սիրտս:

ԼՈՒԻՉՕՆ

Մենք Բէյմնի մէջ ենք,

Տեսածդ երազ չէ, այլ իսկութիւն է.  
Դու այդ բոլորը ինքդ ես կատարել—  
Միտդ բեր, նայիր դու քո չորս կողմը,  
Շօշափիր կուրծքիդ ոսկեփայլ զրահը:

(Յովհաննան ձեռով շօշափում է իւր կուրծքը և զարհուրում է:)

ԲԷՐՏՐԱՆ

Այդ սաղաւարտը իմ ձեռից ստացաք:

ԿԼՕԴ ՄԱՐԻ  
Զարմանք չէ, որ ձեզ երազ է թվում,  
Որովհետեւ ձեր կատարած գործը  
Երազել անգամ անկարելի է:

ՅՈՎՀԱՆՆԱ

Եկէք գնանք, փախչենք, ես ձեզ հետ կըգամ,  
Կըվերագառնամ կրկին մեր զիւղը,  
Կերթամ և կընկնիմ ճընողիս գիրկը:

ԼՈՒԻՉՕՆ

Ո՛հ, Էկ, հեռանանք:

ՅՈՎՀԱՆՆԱ

Այտեղ չափազանց

Բարձրացնում են ինձ, աւելի, քան թէ  
Արժանի եմ ես: Ձեզ անձանօթ չէ  
Իմ մանկութիւնը. դուք ինձ տեսէէք  
Փոքր և անկարող, դուք ինձ սիրում էք,  
Եւ ոչ թէ պաշտում:

ՄԱՐԳՕ

Մի՞թէ կը թողնես

Փառք ու պատիւդ:

ՅՈՎՀԱՆՆԱ

Ես դէն կը ձգեմ

Ինձնից ատելի այս վարդարանքը,  
Որ ձեր սրտերը բաժնում է իմից:  
Ուզում եմ կրկին հովիւհի դառնալ,  
Իբրև աղախին կը ծառայեմ ձեզ,  
Եւ կը քաւեմ խիստ ապաշխարութեամբ  
Ծանր յանցանքս, որ անսպարճութեամբ  
Կամեցայ ես ինձ ձեզնից բարձրացնել:  
(Լսվում է թմբուկների ձայն:)

ՏԱՍՆԵՐՈՐԴ ԵՐԵՒՈՅԹ

ԹԱԳԱՒՈՐԸ դուրս է գալիս եկեղեցուց, նա զարդարուած է թագաւորա-  
կան զարդերով: ԱԳՆԷՍ ՍՕՐԷԼ, ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԸ, ԲՈՒՐ-  
ԳՈՒՆԴ, ԳԻՒՆՈՒՍ, ԼԱՀԻՐ, ԳԻՒ ՇԱՏԷԼ ԱՍՊԵՏՆԵՐ,  
ՊԱԼԱՏԱԿԱՆՆԵՐ և ԺՈՂՈՎՈՒՐԴ:

ԺՈՂՈՎՈՒՐԴ

(Կրկին և կրկին աղաղակում է, այն ինչ թագաւորը առաջ է գալիս:)  
Կեցցէ՛ մեր արքան, կարճաւ եօթներորդ:

(Հնչում են փողեր: Թագաւորը նշան է տալիս և մունետիկները գաւազանները բարձրացնելով պատուիրում են լռել:)

ԹԱԳԱՒՈՐ

Բարի ժողովուրդ, մենք շնորհակալ ենք  
Ձեր սիրոյ համար: Այս թագը, որով  
Պսակեց մեզ Աստուած, պէտք է գրաւուէր  
Սրի զօրութեամբ, հպատակներին  
Ազնիւ արիւնով: Բայց խաղաղութեամբ  
Պիտի վարդարուի ձիթենու ուտով:  
Շնորհակալութիւն յայտնում ենք նոցա,  
Որոնք մեզ համար պատերազմեցան  
եւ ներողութիւն ամենքին, որոնք  
Մեր դէմ կուռեցան: Որովհետեւ մեզ  
Աստուած ցոյց տուեց յայտնի իւր շնորհը,  
Այդ պատճառով էլ մեր արքայական  
Առաջին խօսքը թող լինի — շնորհ:

ԺՈՂՈՎՈՒՐԻ

Կեցցէ՛ մեր արքան, Կարողոս Բարի:

ԹԱԳԱՒՈՐ

Աստուծոց, վեհագոյն պետից են ստանում  
Թագը Ֆրանսիայի թագաւորները,  
Բայց մեզ շնորհեց նա յայտնի կերպով  
Այսօր իւր ձեռով:

(Դառնալով Յովհաննայի կողմը:)

Ահա այստեղ է

Աստուածաւաքը, որ օրինաւոր  
Ձեր թագաւորին կրկին ձեզ տուեց,  
Որ փշրեց լուծը օտար բռնութեան:  
Սորա անունը պէտք է հաւասար  
Լինի սուրբ անուան Դօմինիկոսի,  
Որ է պաշտպանը մեր հայրենիքի:  
Սորա յիշատակը կանմահացնենք  
Փառաւոր արձան մի կանգնեցնելով:

ԺՈՂՈՎՈՒՐԻ

Կեցցէ՛ կոյսը, մեր ազատարարը:

(Հնչում են փողեր:)

ԹԱԳԱՒՈՐ

Թէ դու էլ մեզ պէս մարդոյ ծնունդ ես,  
Ասա, արդեօք որ երջանկութիւնը  
Կարող է քո սիրտը ուրախացնել.  
Բայց եթէ երկինքն է հայրենիքդ,  
Եթէ կուսական այդ կերպարանքում  
Ծածկուած է լոյսը երկնաւոր բնութեան,  
Ապա արձակիր մեր աչքի կապը,  
Եւ թող տեսնենք քո լուսաւոր փառքը,  
Ինչպէս երևում ես երկնքի մէջ,  
Որ ծունկ խոնարհած երկրպագնք քեզ:

(Ընդհանուր լուրթիւն ամենքի աչքը ուղղած է Յովհաննայի վերայ:)

ՅՈՎՀԱՆՆԱ

Տէր Աստուած, ահա հայրս գայլս է:

ՏԱՍՆԵՒՄԻԵՐՈՐԴ ԵՐԵՒՈՅԹ

ՏԻԲՕ դուրս է գալիս բազմութեան միջից և կանգնում է ուղղակի Յովհաննայի դիմացը:

ՇԱՏ ՁԱՅՆԵՐ

Նրա հայրը:

ՏԻԲՕ

Այո՛, այս տարաբաղդի  
Թշուառ հայրն եմ ես, որին Աստուծոյ  
Արդարութիւնը բերում է այստեղ,  
Որ ամբաստանէ ինքը իւր աղջկան:

ԲՈՒՐԳՈՒՆԻ

Այս ի՞նչ է:

ԴԻԻ ՇԱՏԵԼ

Հիմա բանը կը պարզուի

Սոսկալի կերպով:

ՏԻԲՕ (Թագաւորին:)

Դու համարում ես

Քեզ Աստուածային զօրութեամբ փրկուած,  
Ո՛վ խաբուած իշխան, և դու կուրացած  
Ազդ Ֆրանսիական: Ոչ, դու փրկուած ես  
Հնարքով զիւական:

(Ամենքը սարսափած յետ են քաշվում:)

ԴԻԻՆՈՒԱ

Ինչպե՞ս է սա:

ՏԻՐՈ

Ոչ ես, այլ թէ դու ես խելագարը,  
 Սոքա բոլորը և այս իմաստուն  
 Եպիսկոպոսը, որոնք կարծում են,  
 Թէ երբէք իրան մի վատ աղջկայ  
 Ձեռով կը յայտնէ երկնքի տէրը:  
 Տեսնենք, կարո՞ղ է սա և հօր առաջ  
 Պաշտպանել յանդուգն իւր սրտութիւնը  
 Որով խաբել է թէ ժողովուրդին  
 Եւ թէ արքային: Պատասխանիր ինձ  
 Սուրբ Երրորդութեան ահաւոր անուամբ,  
 Սուրբերի դասին ես դու պատկանում:

(Ընդհանուր լուծիւն, ամենքն էլ լի ակնկալութեամբ նայում են Յովհաննային, որ կանգնած է անշարժ:)

ՍՕՐԷԼ

Արարիչ Աստուած, նա պապանձում է:

ՏԻՐՈ

Ի հարկէ պէտք է պապանձի, դողայ  
 Այս անուան առաջ, որից դժոխքը  
 Անգամ սարսում է — Սա մի սրբուհի,  
 Աստծուց ուղարկուած — Սա այդ հընարեց  
 Անիծած տեղը, այն կախարդական  
 Կաղնի ծառի տակ, ուր վաղուց արդէն  
 Խորհուրդ են կազմում չար հոգիները —  
 Այնտեղ վաճառեց սա սատանային  
 Իւր անմահ հոգին: Թող բազուկները  
 Բաց անէ, և դուք իսկոյն կը տեսնէք  
 Այն նշանները, որոնց նոցա վրայ  
 Կրօշմել է դժոխքը:

ԲՈՒՐԳՈՒՆԿ

Սարսափելի է —

Սակայն հօր խօսքին պէտք է հաւատալ,  
 Որ վկայում է իւր աղջկայ դէմ:

ԴԻՒՆՈՒԱ

Ո՛չ, խելագարին պէտք չէ հաւատալ,  
 Որ ինքը իրան խայսառակում է  
 Այս սարսափելի ամբաստանութեամբ:

ՍՕՐԷԼ (Յովհաննային:)

Ո՛հ, խօսիր, վերջ տուր այդ զարհուրելի  
 Լուծիւնը: Մենք հաւատում ենք քեզ,  
 Մենք բոլորովին վստահ ենք քեզ վրայ,  
 Մեզ բաւական է քո մի հատ խօսքը —  
 Բայց խօսիր, մի՛ լռիր, ջնջի՛ր սոսկալի  
 Այս մեղադրանքը — ասա, անմեղ ես,  
 Եւ կը հաւատանք:

(Յովհաննան կանգնած է անշարժ: Ագնէս Սօրէլը սարսափած հեռանում է նորանից:)

ԼԱ ՀԻՐ

Նա զարհուրած է.

Ահն ու զարմանքը լեզուն կապեցին —  
 Անմեղութիւնը անգամ կարող չէ  
 Առանց սարսափի լսել սոսկալի  
 Այս մեղադրանքը:

(Նա մօտենում է Յովհաննային:)

Պինդ կաց, «Յովհաննա,

Ուշքդ ժողովրդ: Անմեղութիւնը  
 Ունի մի լեզու, ունի մի հայեացք,  
 Որ կործանում է զըզարտութիւնը.  
 Բարձրացրու ձայնդ ակնիւ բարկութեամբ:  
 Վեր ուղղիր աչքդ, թող ամօթահար  
 Պատժուի անարժան կասկածը, որ սուրբ  
 Առաքինութիւնդ հայհոյում է:

(Յովհաննան անշարժ է: Լա Հիրը սարսափած հեռանում է, ընդհանուր շփոթութիւնը աւելանում է:)

ԴԻՒՆՈՒԱ

Ժողովուրդ, ինչե՞ զարհուրում ես դու,  
 Եւ դուք, իշխաններ, ինչե՞ էք դողում:  
 Սա անմեղ է, ես երաշխաւոր եմ,  
 Երաշխաւոր եմ իմ իշխանական  
 Պատուովս այն: Ահա ձգում եմ  
 Ես իմ ձեռնոցը. թող դուրս գայ, ով որ  
 Սիրտ ունի կանչել սորան յանցաւոր:  
 (Սաստիկ սրտամուռ, ամենքը սարսափում են:)

(սովորածս ինք ՏԻՔՕ ՅՍ)

Պատասխանիր այն Աստուծոյ անուամբ,  
Որ որոտում է ահա վերեւից:  
Ասա, անմեղես, ուրացիր, որ քո  
Սիրտը նուիրած է սատանային,  
Եւ պատուհասիր իմ ստուգութիւնը:

(Երկրորդ աւելի սաստիկ որոտմանը. ժողովուրդը փախչում է ամեն կողմը.)  
ԲՈՒՐԳՈՒՆԻ

Աստուած օգնէ մեզ: Ինչ սարսափելի  
Նշաններ են այս:

ԴԻԻ ՇԱՏԷԼ (Թագաւորին.)  
Եկեք, տէր արքայ,

Փախէք այս տեղից:

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ (Յովհաննային)  
Ես քեզ հարցնում եմ

Աստուծոյ անուամբ. ասա արդեօք դու  
Լռում ես զգացմունքից անմեղութեան, թէ  
Մեղապարտութեան: Թէ քեզ համար է  
Այս որոտմունքը, բռնիր այս խաչը  
Եւ մի նշան տուր քո անմեղութեան:

(Յովհաննան մնում է անշարժ. կրկին լսվում է սաստիկ որոտմունք. Թագաւորը, Ագնէս Սօրէլը, Արքեպիսկոպոսը, Լա Հիրը և Դիւ Շատէլը դուրս են գնում:)

### ՏԱՍՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ԵՐԵՒՈՅԹ

ԴԻԻՆՈՒԱ, ՅՈՎ ՀԱՆՆԱ.

ԴԻԻՆՈՒԱ.

Իմ ամուսինն ես — ես հաւատացի  
Քեզ, երբ առաջին անգամը տեսայ  
Եւ նոյն հաւատը ունիմ և այժմ:  
Քեզ աւելի եմ հաւատում, քան թէ  
Այս որոտմունքին, որ զուգուում է  
Վերեւ ամպերում: Գիտեմ, լռում ես  
Ազնիւ բարկութեամբ, արհամարհում ես  
Հերքել այս անարգ զրպարտութիւնը,  
Ապաւինելով սուրբ և անարատ  
Անմեղութեանդ: Հա, արհամարհիր

Բոլորը միայն ինձ վստահացիր:  
Քո անմեղութեան վերայ ես, երբէք  
Կասկած չեմ յայտնել: Խօսք չեմ պահանջում  
Քեզանից, միայն թէ ձեռք տուր ինձ  
Խրեւ մի նշան, որ վստահութեամբ,  
Աներկիւղ սրտով ապաւինում ես  
Իմ բազկին և քո արդարութեանը:

(Նա մեկնում է Յովհաննային իւր ձեռք, բայց սա մերժելով դարձնում է  
երեսը: Դիւնուան մնում է ապշած ու սարսափած:)

### ՏԱՍՆԵՐԿԵՐՈՐԴ ԵՐԵՒՈՅԹ

ՅՈՎ ՀԱՆՆԱ, ԴԻԻ ՇԱՏԷԼ, ԴԻԻՆՈՒԱ, ՎԵՐՋԸ ԲԱՅՄՕՆ.  
ԴԻԻ ՇԱՏԷԼ (յետ գալով.)

Յովհաննա դ'Արկ, ձեզ արքան տալիս է  
Իրաւունք ազատ հեռանալ քաղքից,  
Որի դռները բաց են ձեզ համար:  
Դուք երկիւղ չունիք վերաւորանքից.  
Ձեզ պաշտպանում է արքայի խօսքը —  
Դուք, կոմս Գիւնուա, հետեւեցէք ինձ —  
Այստեղ մինալը անվայել է ձեզ:  
— Ինչ ցաւայլ վերջ:

(Նա գնում է: Դիւնուան սթափում է իւր ապշութենից, մի անգամ էլ  
նայում է Յովհաննային և հեռանում է: Վերջապէս երևում է Բայմօնը,  
որ կարճ միջոց հեռուից տրտմութեամբ նայում է Յովհաննային. յետոյ մօ-  
տենում է նորան և բռնում է նորա ձեռքը:)

ԲԱՅՄՕՆ

Յարմար բոպէ է,

Փողոցներումը այժմ մարդ չըկայ,  
Տուէք ինձ ձեր, ձեռք, զրնանք միասին:

(Յովհաննան նորան տեսնելով սթափում է, նայում է նորան և յետոյ ուղ-  
ղում է աչքերը դէպի երկինքը. յետոյ շուտ բռնում է նորա ձեռք և հե-  
ռանում է:)

# ՀԻՆԳԵՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

## մի վայրենի անուան

Հեռուից երևում են ածխագործների խրճիթներ: Բոլորովին մութն է: Սաստիկ որոտում ու փայլատակում է և մի և նոյն ժամանակ լսվում են հրացանների ձայներ:

## ԱՌԱՋԻՆ ԵՐԵՒՈՅԹ

ԱՅՍԻՍՅԱԳ ԱՅԻԱԳՈՐԾ ԵՒ ՆՈՐԱ ԿԻՆԸ  
ԱՅԻԱԳՈՐԾ

Ի՛նչ զարհուրելի փոթորիկ է այս:  
Հըրեղէն գետեր սպառնում է թափել  
Երկինքն երկրի վրայ, և լոյս ցերեկը  
Այնպէս մթնեցաւ, որ կարելի է  
Աստղերը տեսնել: Մրրիկը, ինչպէս  
Ջայրացած դժոխք, սաստիկ գոռում է  
Ու կատաղում է, երկիրը գողում  
Ու սասանում է և կոտորուելով  
Խոնարհեցնում են հին կաղնիները  
Իրանց գլխները: Եւ զարհուրելի  
Այս պատերազմը, որ կատարվում է  
Այնտեղ վերևը, որից սարսափած  
Գազաններն անգամ խոնարհ սողում են  
Իրանց որջերը, չէ կարողանում  
Հաշտեցնել մարդկանց ու խաղաղացնել:  
Հողմ ու փոթորիկ գոռգոռոցի հետ  
Հըրաղէնքների թնդիւնն է լսվում:  
Երկու բանակը իրար դէմ կանգնած,  
Միայն անտառն է նոցա բաժանում,  
Եւ ամեն բոպէ պէտք է ըսպասել  
Մի արիւնահեղ, սաստիկ կոտորած:

ԿԻՆԸ

Աստուած օգնէ մեզ: Չէ՞ որ թշնամին  
Ջարգուած էր, ցրուած: Այդ ի՛նչպէս եղաւ,

Որ նոքա նորից նեղացնում են մեզ:

ԱՅԻԱԳՈՐԾ

Դա նորանից է, որ թագաւորից  
Ել չեն վախենում: Ինչ որ թէյմի մէջ  
Աղջեկը իբրև կոխարգ յայանուեցաւ,  
Մարդոյ թշնամին էլ չէ օգնում մեզ,  
Եւ այսպէս ահա ամեն բան նորից  
Անյաջող է դնում:

ԿԻՆԸ

Տես, ո՞վ է զալիս:

## ԵՐԿՐՈՐԴ ԵՐԵՒՈՅԹ

ՐԱՅՄՕՆ, ՅՈՎ ՀԱՆՆԱ Ե ԱՌԱՋԻՆ ԵՐԸ,  
ՐԱՅՄՕՆ

Ահա խրճիթներ: Այստեղ փոթորիկից  
Կը պատասխարուինք: Ել չէք դիմանայ:  
Ահողջ երեք օր թափառում էք դուք,  
Միշտ խուսափելով աշխարհի աչքից  
Եւ կերակրուելով վայրի բոյսերով:  
(Մրրիկը հանդարտվում է և երկինքը նորից պարզվում է.)  
Մանկը, բարեսիրտ ածխագործներ են:

ԱՅԻԱԳՈՐԾ

Յողնած էք, մահէք: Խրճիթը ձերն է:

ԿԻՆԸ

Ինչո՞ք զէնք է կրում քնքոյշ աղջեկը:  
Բայց ժամանակը այնքան զժուարէ,  
Որ և կին մարդը պէտք է զրահ հագնի:  
Ասում են, որ և նոյն խի թաղուհին,  
Տիկին Իզարոն, զրահ ունի հագած  
Թշնամու զօրքում, և մի հովվուհի  
Պատերազմէ մեր օրինաւոր  
Արքայի համար:

ԱՅԻԱԳՈՐԾ

Ինչո՞ք եւ խօսում:

Գլնո՞ւ խրճիթից աղջեկայ համար  
Մի բաժակ խրճիթը բեր, որ զօրանայ:

ԲԱՅՄՕՆ (Յովհաննային.)  
 Տեսնում էք, անգուլթ չեն բողոր մարդիկ,  
 Անպատուներն էլ կան բարի սրտեր:  
 Զուարթացէք. ահա մրրիկը անցաւ  
 եւ խաղաղ, հանդարտ ճառագայթելով  
 Ահա արեգակը մայր է մտնում:

ԱԾԽԱԳՈՐԾ  
 Անշուշտ արքայի բանակն էք զընում,  
 Որ զէնք էք կրում — բայց ըզրոյշ կայէք.  
 Այստեղից հեռու չեն Անդխացիք,  
 եւ նոցա գունդերը թափառում են  
 Այս անտառի մէջ:

ԲԱՅՄՕՆ  
 Աւաղ մեղ, ինչպէս  
 Պիտի ազատուինք:

ԱԾԽԱԳՈՐԾ  
 Սպասեցէք, մինչև  
 Տըղաս քաղաքից կը վերադառնայ:  
 Նա ձեզ ապահով կանցկայնէ ծածուկ  
 ձանապարհներով: Մեզ լաւ յայտնի են  
 Բոլոր անցքերը:

ԲԱՅՄՕՆ  
 Հանեցէք դրահը  
 եւ սաղաւարտը. դոքա կը մասնեն  
 Զեզ, չեն պաշտպանի:

(Յովհաննան զլուսը շարժում է.)

ԱԾԽԱԳՈՐԾ  
 Ինչի՞ աղջիկը  
 Այդպէս տխուր է: — Այս ի՞՞վ է դալիս:

**ԵՐՐՈՐԴ ԵՐԵՒՈՅԹ**

Գալիս է ԱԾԽԱԳՈՐԾԻ ԿԻՆԸ մի բաժակ ձեռին, ԱԾԽԱԳՈՐԾԻ

ՏՂԱՆ

ԿԻՆԸ

Այս մեր տըղան է գալիս քաղաքից:

(Յովհաննային)

Խմեցէք, աղնիւ կոյս, Աստուած օրհնէ ձեզ:

ԱԾԽԱԳՈՐԾ (Լուր որդուն.)

Այդ դու ես, Անէտ. ի՞նչ լուր ես բերում:

ՏՂԱՆ

(Նայում է Յովհաննային, որ այդ վայրկեանին բաժակը դնում է բերանին, ճանաչում է նորան, մօտ է դնում և խլում է բաժակը.)

Մայր, ի՞նչ ես տնում, այդ ո՞ւմ ես սպասվում:

Սա Օրէանի կախարհ աղջիկն է:

ԱԾԽԱԳՈՐԾ և ԿԻՆԸ

Աստուած օրհնէ մեզ:

(Երեսները խաչակնքում են և փախչում են.)

**ԶՈՐԴՈՐԴ ԵՐԵՒՈՅԹ**

ԲԱՅՄՕՆ, ՅՈՎՀԱՆՆԱ

ՅՈՎՀԱՆՆԱ (Հանդարտ և մեղմ.)

Ահա սեսնում ես

Ինչպէս անէծքը ինձ հեռուում է,  
 Ինչպէս ամենքը ինձից փախչում են:  
 Հողանք մասին, և դու էլ թող ինձ:

ԲԱՅՄՕՆ

Թողնում ձեզ, հիմա: Եւ ո՞վ կըլինի  
 Զեր ուղիկիցը:

ՅՈՎՀԱՆՆԱ

Ես ընկեր ունիմ.

Լսեցիր ինչպէս որոտաց զլիս.  
 Իմ աւաջնորդն է ճակատագիրս:  
 Դու անհոգ եղիր. ես իմ վախճանին  
 Կը հասնիմ, թէև ինքս չուզեմ:

ԲԱՅՄՕՆ

Ո՞ր էք ուզում գնալ: Այնտեղ կանգնած են  
 Անդլիացիքը, որոնք երգուել են  
 Արիւնոտ վերէ՛ք աւանել ձեզանից —  
 եւ այնտեղ մերոնք, որոնք մերժեցին  
 Զեզ, աքսորեցին —

ՅՈՎ. ՀԱՆՆԱ

ինձ կը պատահի

Միայն այն, ինչ որ դրած է իմ ձականին:

ԲԱՅՄՕՆ

Ո՛վ պէտք է սընունդ ձարէ ձեզ համար,

Ո՛վ կը պաշտպանէ ձեզ դազաններէ,

Աւելի ևս դազան մարդկանցից.

Ո՛վ կը խընամէ ձեզ, երբ որ հիւանդ,

Կամ թշուառ լինիք:

ՅՈՎ. ՀԱՆՆԱ

ես ձանաչում եմ

Բողոր բոյսերը և արմատները,

ես սովորել եմ իմ ոչխարներէ,

Որոշել, ո՞րն է առողջարարը,

Որը թունաւոր — Գիտեմ ասողերի

Ընթացքն երկնքում, այլ և ամպերի

Գրնացքն օդի մէջ, և իմանում եմ,

Ինչտեղ աղբիւր կայ ծածկուած գետնի տակ —

Մարդս շատ վաղ բանի կարօտ է:

ԲԱՅՄՕՆ (Բանում է նորա ձեռք)

Չէք ուզում դարձ գալ, Աստուծոյ հետ հաշտուել —

Սուրբ եկեղեցու զիրկը յետ դառնալ:

ՅՈՎ. ՀԱՆՆԱ

Ուրեմն դ՞ու էլ մեղադրում ես ինձ

Ծանր մեղքի մէջ:

ԲԱՅՄՕՆ

Ապա ի՞նչ անեմ,

Տեսնելով ձեր լուռ խոստովանութիւնն:

ՅՈՎ. ՀԱՆՆԱ

Դու, որ թշուառիս մենակ չը թողեր,

Ինձ հաւատարիմ միայն մընացիր,

Հետս միացար, երբ բողոր աշխարհ

Հալածում է ինձ, ո՞հ, մի՞թէ դու էլ

Համարում ես ինձ ծանր յանցարոր

Եւ աստուածութեան:

(Բայցօնը չէ պատասխանում):

Ո՛հ, այդ շատ խիստ է:

ԲԱՅՄՕՆ

Իրաւ կախարդ չէք:

ՅՈՎ. ՀԱՆՆԱ

Ե՞ս, ես կախարդ եմ:

ԲԱՅՄՕՆ

Եւ այն հրաշքերը կատարեցիք դուք

Աւածոյ զօրութեամբ և նրա Սուրբերի:

ՅՈՎ. ՀԱՆՆԱ

Ի հարկէ, ապա այլ ի՞նչ միջոցով:

ԲԱՅՄՕՆ

Եւ դուք լուցիք այն սարսափելի

Մեղադրանքի դէմ: Հիմա էք խօսում,

Հիմա, բայց երբ որ արքայի առաջ

Պէտք էր ձեզ խօսիլ, է՞ր պապանձկցաք:

ՅՈՎ. ՀԱՆՆԱ

Ես հնազանդեցայ իմ ձակատագրին,

Որ Տէր Աստուածը սահմանել էր ինձ,

ԲԱՅՄՕՆ

Ձեր հօրը ոչինչ չը կարողացաք

Դուք պատասխանել:

ՅՈՎ. ՀԱՆՆԱ

Հօրս բերանով

Աստուած էր խօսում, որ մեզ փորձում է

Իբրև բարի հայր:

ԲԱՅՄՕՆ

Երկինքը ևս

Վըրայից ձեր դէմ:

ՅՈՎ. ՀԱՆՆԱ

Երկինքն էր խօսում,

Եւ այդ պատճառով ևս էլ լուցի:

ԲԱՅՄՕՆ

Ի՞նչ, մի հատ խօսքով կարող էիք դուք

Ձեզ արդարացնել, բայց ձեր լուռութեամբ

Մոլորութեան մէջ թողիք աշխարհը

ՅՈՎ. ՀԱՆՆԱ

Մոլորութիւն չէր, այլ ձակատագիր:

ԲԱՅՄՕՆ

Ուրեմն անմեղ կըսեցիք բոլոր  
 Այս նախատիւքը, և ամենին  
 Տրտունջ չըլտուեց ձեր շրթունքներէց:  
 - Ես զարմանում եմ ձեզ վրայ, սոսկում եմ,  
 Եւ փղձկում է սիրտս կուրծքիս մէջ:  
 Ո՛հ, ուրախութեամբ ընդունում եմ ես  
 Ձեր խօսքը իբրև զուտ ճշմարտութիւն,  
 Որովհետև ինձ ծանր է հուստաւ  
 Թէ յանցաւոր էք: Բայց կարող էի  
 Արդեօք երազել, որ մի մարդու սիրտ  
 Լռութեամբ համբարէ այն մեղադրանքին:

ՅՈՎՀԱՆՆԱ

Արժանի՞ էի առաքեալ լինել,  
 Եթէ կուրօրէն չըհնազանդէի  
 Իմ Տիրոջ կամքին: Այնքան թշուառ չեմ,  
 Որքան կարծում ես: Կարի՞ք եմ ըզզում.  
 Բայց դա առանձին զժբաղդութիւն չէ  
 Իմ վիճակի մէջ: Ես սքսորուած եմ  
 Եւ փախստական. բայց անապատում  
 Սովորեցայ ես ինքս ինձ ձանաչել:  
 Երբ պատած էի պատուի շողերով,  
 Այն ժամանակը սիրտս խուզած էր,  
 Ես թշուառ էի, երբ որ աշխարհքը  
 Ինձ նախանձում էր - չիմա հանդիստ եմ,  
 Եւ այս մրրիկը, որ ըսպառնում էր  
 Վերջ տալ բնութեան, իմ բարեկամն էր:  
 Նա աշխարհի հետ իմ սիրտն էլ մաքրեց.  
 Այժմ կուրծքիս մէջ խաղաղութիւն է:  
 Թող այսուհետև ինչ կուզէ լինի,  
 Եւ արկարութիւն չեմ ըզզում իմ մէջ:

ԲԱՅՄՕՆ

Ո՛հ, եկէք, եկէք, բոլոր աշխարհին  
 Շուտով յայտնենք ձեր անմեղութիւնը:  
 ՅՈՎՀԱՆՆԱ  
 Նա, որ շփոթութիւն ուղարկեց, ինքը

Արկարատէ այն: Ճակատագրի  
 Պատուը կընկնի, երբ որ զըհասնի:  
 Կը դայ այն օրը, որ ինձ կըմաքրէ,  
 Եւ նոքա, որոնք այժմ ինձ մերժում են  
 Եւ դատապարտում, կիմանան իրանց  
 Մոլորութիւնը և արտասուելով  
 Կողքան վիճակս:

ԲԱՅՄՕՆ

Ես լռութեամբ սպասեմ,  
 Մինչև զիպուածը -  
 ՅՈՎՀԱՆՆԱ (Բռնում է նորա ձեռքը)  
 Դու տեսնում ես այն,

Ինչ որ բնական է, աչքդ երկրաւոր  
 Կատրով է կատած. բայց ես տեսել եմ  
 Անմահականին - Առանց Աստուծոյ  
 Մի մտղ կարող չէ ընկնել մեր զլիւից -  
 Տես, մայր է մտնում այնտեղ արեւը -  
 Ինչպէս նա վաղը կրկին կը ծաղի  
 Իւր պայծառութեամբ, նոյնպէս էլ անշուշտ  
 Մի օր կը յայտնուի ճշմարտութիւնը:

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԵՐԵՒՈՅԹ

ԹԱԳՈՒԷԻ ԻԶԱՐՕ և ԶԻՆՈՒՈՐՆԵՐ ԵՐԵՒՈՒԹԵԱՆ ԲԵՄԻ ԿՈՂՄԸ:  
 ԻԶԱՐՕ (դեռ բեմ դուրս չեկած.)  
 Այս ճանապարհը ուղիղ կը տանէ  
 Մեզ անդլիական զօրքի բանակը:  
 ԲԱՅՄՕՆ  
 Վայ մեղ, թշնամիք  
 (Գալիս են զինուորներ, տեսնում են Յովհաննային և զարհուրելով յետեն  
 դաշվում:)  
 ԻԶԱՐՕ  
 Հ՛ր, ի՛նչ կանգնեցաք:  
 ԶԻՆՈՒՈՐՆԵՐ  
 Աստուած օգնէ մեզ:  
 ԻԶԱՐՕ  
 Ինչի՞ց վախեցաք:  
 Դուք զինուորներ չէք, դուք երկչուներ էք -

(Նա առաջ է դալիս և Յովհաննային տեսնելով յետ է քաշուում):

Այս ի՞նչ եմ տեսնում:

(Շուտով ժողովում է իրան և մօտենում է Յովհաննային):

Անձնատուր կղեր:

Դու իմ գերին եմ:

ՅՈՎՀԱՆՆԱ

Այո, գերիդ եմ:

(Բայժօնը յուսահատութեամբ փախչում է:)

ԻԶԱԲՕ (ղինուորներին):

Կապեցէք ձեռները շղթաներով:

(Ձինուորները ահուդողով մօտենում են Յովհաննային. նա ինքը մեկ-նում է նոցա իւր ձեռները, որ կապեն):

Այս է հրդօրը և զարհուրելին,

որ ձեր զունդերը ոչխարների պէս

Քշում էր իւր առաջ, որ այժմ կարող չէ

Իրան պաշտպանել: Սա հրաշագործ է,

երբ հաւատում են, և տկար մի կին,

երբ որ այր մարդ է կանգնած առաջը:

(Յովհաննային.)

Զօրքն ինչի՞ թողլը, ո՞ր է Գիւնուան

Պաշտպան ասպետդ:

ՅՈՎՀԱՆՆԱ

Ես արտորում եմ:

ԻԶԱԲՕ (զարմացած)

Դօժէ՞նն արտօրեց:

ՅՈՎՀԱՆՆԱ

Մի հարցիր: Հիմա

Քո ձեռն եմ ընկել, որոշեր բաղլս:

ԻԶԱԲՕ

Նա քեզ արտօրեց, որ աղափայտ

Նորան անդունդից, որ նորա զլին

Թագ զըրիր Բէյնում և Ֆրանսիայում

Թագաւորեցիր: Աքտրեց: Այո,

Որդուս զորանով ձանաչում եմ ես:

— Ձինուորներ, տարէք սորան բանակը,

Յոյց տուէք զօրքին այս զարհուրելին,

Որի առաջը նա սարսափում էր:

Սա կախարդ: Սորա կախարդութիւնը

Ձեր յնորքն էր միայն և Լրիշոտ սիրտը:

Սա մի յիմար է, որ իւր արքային

Ձոհեց իւր անձը, և փոխարէնը

Այժմ ստանում է վարձ արքայական —

Լիօնէլի մօտ տարէք: Ասացէք,

Թէ Ֆրանսիացոյ բաղլը շղթայած

Ուղարկում եմ նրան. ես էլ դալիս եմ:

ՅՈՎՀԱՆՆԱ

Լիօնէլի մօտ: Սպանիի ինձ այստեղ,

Բայց մի՛ ուղարկիր դու ինձ նորա մօտ:

ԻԶԱԲՕ (ղինուորներին):

ձիշտ կատարեցէք հրամանս: Գնացէք:

(Նա դուրս է գնում):

### ՎԵՅԵՐՈՐԴ ԵՐԵՒՈՅԹ

ՅՈՎՀԱՆՆԱ, ԶԻՆՈՒՈՐՆԵՐ

ՅՈՎՀԱՆՆԱ (ղինուորներին)

Ո՛վ Անդրեայիք, մի՛ թոյլ տաք, որ ողջ

Ազատուիմ ձեզից: Առէք ձեր վրէժը,

Կոխեցէք սրտիս մէջ ձեր սրբերը,

Անշունչ դիտիս տարէք ձեզից:

Ձեր զօրավարի ոտների առաջ:

Մտածեցէք, որ ես կոտորեցի

Ձեր կորիճներին, բընաւ զթուփին

Յոյց չըտուի ձեզ, հեղեղների պէս

Վազեցրի արիւնը անդիտական,

Եւ ուրախութեամբ վերադառնալու

Բաղլից զրկեցի ձեր զիւցաղներին:

Առէք ձեր վրէժը, սպանեցէք այստեղ,

Թէ չէ միշտ այսպէս տրկար չեմ լինի —

ԶԻՆՈՒՈՐՆԵՐԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐԸ

Թագուհու հրամանը կատարեցէք:

ՅՈՎՀԱՆՆԱ

Ո՛հ, ևս աւելի մեծ թշուառութիւն

Դեռ սպասում է ինձ: Ահաւոր Սուրբ Կոյս,

Քո ձեռը ծանր է: Մի՞թէ զրկել ես

Ինձ բողբոջին քո զթութիւնից:

ԵՆ աստուածային նշան չեմ տեսնում,  
ԵՆ չեն երևում սուրբ հրեշտակները,  
ԵՆ հրաշք չէ լինում, երկինքը փակ է:  
(Նա դուրս է գնում զինուորների հետ):

**Ֆրանսիական քանակը:  
ԵՕԹՆԵՐՈՐԴ ԵՐԵՒՈՅԹ**

**Դ Ի Ի Ն Ո Ւ Ա, Ա Ր Ք Ե Պ Ի Ս Կ Ո Պ Ո Ս, Դ Ի Ի Շ Ա Տ Է Լ**  
ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Իշխան, զսպեցէք ձեր մեայլ վիշաք.  
Եկէք զնանք մեղ հետ, յետ դառէք կրկին  
Ձեր արքայի մօտ: Եկէք, մի՛ թողնէք  
Ընդհանուր գործը այս ծանր բոսկին,  
Երբ որ մենք նորից նեղուած կարօտ ենք  
Ձեր հըզօր բազկին:

Դ Ի Ի Ն Ո Ւ Ա

Ինչի՞ նեղուած ենք,  
Ինչի՞ զօրացաւ կրկին թշնամին:  
Արդէն ամենայն ինչ կատարուեցաւ.  
Ֆրանսիան յաղթող էր և պատերազմը  
Վախճանին հասած: Դուք աքսորեցիք  
Ձեր ազատողին, հիմա ինքներդ  
Ազատեցէք ձեզ. խի կա չեմ ուզում  
ԵՆ այսուհետե տեսնել բանակը,  
Ինչտեղ նա չըկայ:

Դ Ի Ի Շ Ա Տ Է Լ

Մտածեցէք, իշխան,  
Մի՛ արձակէք մեղ այդ պատասխանով:

Դ Ի Ի Ն Ո Ւ Ա

Լռեցէք, Դիւ շատէ՛լ: Ես ձեզ ատում եմ,  
Ձեզանից ոչ ինչ չեմ ուզում լսել:  
Նորա վերայ նախ դուք կասկածեցաք:

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Ո՞վ նորա վերայ չըզայթակեցաւ,  
Ո՞վ չերկմեցաւ այն դժբաղդ օրը:  
Մենք շփոթուած էինք, սարսափած էինք,  
Հարուածը սասափի ցնցեց մեր սիրտը—  
Ո՞վ կարող էր այն ահեղ բոսկին

Կշռելով մտածել: Հիմա սթափում ենք  
Մեր թմրութենից, հիմա տեսնում ենք,  
Ինչպէս էր վարվում նա, երբ մեղ հետ էր:  
Այո՛, սխալուեցանք— Մենք վախենում ենք,  
Որ շատ անիրաւ վարուեցանք նրա հետ—  
Արքան զղջում է, դուքսը իւր մեղքը  
Խոստովանում է, Լա շիրը սասափի  
Անմիտար է, և ամեն մի սիրտ  
Տրամուլթեամբ պատած:

Դ Ի Ի Ն Ո Ւ Ա

Նա մի խաբերայ:

Եթէ կամենայ ճշմարտութիւնը  
Մարմնանալ և մեր աչքին երևիլ,  
Ապա պէտք է կրէ նորա պատկերը:  
Եթէ աշխարհում կայ անմեղութիւն,  
Հաւատարմութիւն, սրտի մաքրութիւն,  
Պէտք է որ նորա շքութիւնների վրայ  
Եւ պարզ աչքերում ունենան կայան:

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Երկինքը հրաշքով թող լուսաւորէ  
Այս մութ դաղանիքը, որ մեր հողեղէն  
Աչքերի համար թափանցելի չէ—  
Բայց ինչպէս կուզէ պարզուի ու լուծուի,  
Անշուշտ մէկ բանում յանցաւոր ենք մենք.  
Կամ պաշտպանեցինք մենք մեզ դժոխային  
Դիւթական զէնքով, կամ աքսորեցինք  
Մենք մի սրբուհի, և այդ երկուսն էլ  
Պէտք է հրաւիրեն այս խեղճ երկրի վրայ  
Երկնքի ցառումն ու պատուհասը:

**ՈՒԹԵՐՈՐԴ ԵՐԵՒՈՅԹ**

**Մ Ի Ա Ջ Ն Ո Ւ Ա Կ Ա Ն և Ա Ռ Ա Ջ Ի Ն Ն Ե Ր Ը, փոքրինչ յետոյ Բ Ա Յ Մ Օ Ն**  
ԱՋՆՈՒԱԿԱՆ

Մի երիտասարդ հովիւ ուզում է  
Ձեզ տեսնել, իշխան: Ձեզ հետ առանձին  
Խօսելիք ունի, ասում է, իբր  
Նա Յովհաննայի մօտից է դալիս:—

ԴԻԻՆՈՒԱ

Շտապիր ներս բեր նրան: Նորա մօտից է:

(Ազնուականը բաց է անում դուռը և մտնում է Բայմօնը: Դիւնուան շուտ մօտենում է նորան:)

Ասա՛, ո՛ւր է նա, ո՛ւր է Յովհաննան:

ԲԱՅՄՕՆ

Ողջոյն ձեզ, իշխան: Երջանիկ եմ ես,

Որ այս երկիւղած եպիսկոպոսին,

Սրբակրօն հօրը, հալածեալների

Հզօր պաշտպանին և դժբաղդների

Բարեխնամ օրոջ ձեզ մօտ եմ դանում:

ԴԻԻՆՈՒԱ

Ո՛ւր է Յովհաննան:

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Ասա՛, իմ որդի:

ԲԱՅՄՕՆ

Տէր, նա կախարհ չէ. վկայ է Աստուած

Վկայ են սուրբեր, որ ժողովուրդը

Սաստիկ սխալվում է: Դուք աքսորեցիք

Անմեղութիւնը և արտաքսեցիք

Առաքեալ աղջկան:

ԴԻԻՆՈՒԱ

Ասա՛, ո՛ւր է նա:

ԲԱՅՄՕՆ

Նորան ուղեկից էի Արդէնեան

Անտառների մէջ, ուր նա իւր սրտի

Ծածուկն ինձ յայտնեց: Թող տանջանքի մէջ

Աւանդեմ հողիս, թող անմաս մընամ

Յաւիտենական կրանութիւնից,

Թէ նա անմեղ չէ, սրբազան տէր իմ:

ԴԻԻՆՈՒԱ

Նոյն իսկ արեւը երկնականարում

Նրանից մաքուր չէ: Ասա՛, ո՛ւր է նա:

ԲԱՅՄՕՆ

Ո՛հ, թէ ձեր սիրտը փոխել է Աստուած —

Ապա շտապեցէք ազատել նորան.

Նա գերի ընկաւ անղիացոց մօտ:

ԴԻԻՆՈՒԱ

Ի՞նչ, գերի ընկաւ:

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Տարաբաղէ աղջիկ:

ԲԱՅՄՕՆ

Երբ որ Արդէնեան անտառների մէջ

Ապաստանարան էինք որոնում,

Այնտեղ բռնուեցաւ խեղճը թագուհուց

Եւ անղիացոց ձեռք մատուցաւ:

Ո՛հ, ազատեցէք ձեզ ազատողին

Սոսկալի մահից:

ԴԻԻՆՈՒԱ

Շուտով ղէնք առնենք,

Թմբուկ զարկեցէք, զօրքը դուրս բերէք

Պատերազմելու. թող սաի կանգնի

Բոլոր Ֆրանսիան: Ազգի պատիւը

Վրտանդի մէջ է, թագը, ծիրանին

Յափշտախուած են: Չըննայենք արիւն,

Չօհնեք մեր կեանքը և դեռ չը մթնած

Պէտք է Յովհաննան լինի ազատուած:

(Նորա դուրս են գնում:)

Վի աշտարակ վերերը պատուհանով

ԻՆՆԵՐՈՐԻ ԵՐԵՒՈՅԹ

ՅՈՎՀԱՆՆԱ ԿԼԻՕՆԵԼ:

ՖԱՍՏՈԼՅ (շտապով ներս մտնելով)

Եւ անհնար է զսպիլ ամբոխը,

Նորա պահանջում են կատաղաբար

Աղջկայ մահը: Մի՛ հակառակիք,

Սպանեցէք նորան և վայր ձգեցէք

Այս աշտարակից նորա զըւուխը.

Նորա արիւնը միայն կարող է

Հաշտեցնել զօրքը:

ԻԶԱՐՕ (ներս է մտնում)

Սանդուխներ են դնում

Եւ պատրաստվում են յարձակուիլ մեզ վրայ:

Պէտք է կատարել զօրքի պահանջը:

Մի՛թէ ուզում էք, որ հիմէից քանդեն

Այս աշտարակը և մեզ էլ փչայնեն:

Դորան պաշտպանել չէք կարող. առէք:

ՍՈՒՆԵՆԻ

Թող դան յարձակուին, թողէք կատաղին,  
Ամրոցը պինդ է, և ես պատրաստ եմ  
Թաղել ինձ նորա վշտառանների տակ,  
Քան թէ կատարել ամբոխի կամքը:  
— Պատասխան տուր ինձ, Յովհաննա, եղեր  
Դու իմը, և ես կը պաշտպանեմ քեզ  
Ողջ աշխարհի դէմ:

ԻԶԱՐՕ  
Մի՞թէ մարդ չէք դուք:  
ԼԻՕՆԵԼ

Քեզ արտաքսեցին ազգակիցներդ,  
Եւ այսուհետեւ դու պարտական չես  
Ոչինչ անարժան քո հայրենիքին:  
Քո սէրը խնդրող այն վասթարները  
Հեռացան քեզից, չը վտասհացան  
Ձէնքով պաշտպանել նոքա պատիւդ:  
Բայց ես, ահա ես կը պաշտպանեմ քեզ  
Թէ իմ և թէ քո ժողովուրդի դէմ —  
Դու մի ժամանակ կարծել տուիր ինձ  
Իբր քեզ համար թանգ է իմ կեանքը,  
Եւ այն ժամանակ ես կանդնած եի  
Քո դէմ կռուի մէջ իբրև թշնամի:  
Այժմ դու չունիս ոչ ոք բարեկամ,  
Բացի ինձանից:

ՅՈՎՀԱՆՆԱ  
Դու թշնամի ես

Ինձ և իմ ազգին. ոչինչ կարող չէ  
Մեզ միտերել: Ես չեմ կարող քեզ  
Միրել, բայց եթէ իրաւ հակուած է  
Միրաց դէպի ինձ, բաղդաւորիր  
Մեր ժողովուրդները — հեռացրու զօրքդ  
Իմ հայրենիքից, յետ տուր մեզ բոլոր  
Այն քաղաքները, որոնց սիրել էք,  
Կրկին յետ դարձրու բոլոր աւարը,  
Աղատութիւն տուր մեր գերիներին  
Եւ տուր հաշտութեան համար ուղարկիր  
Պատանդներ, ապա արքայիս կողմից  
Ես կառաջարկեմ քեզ խաղաղութիւն:

ԻԶԱՐՕ

Շղթայած անդամ կամենում ես դու  
Մեզ օրէնքներ տալ:

ՅՈՎՀԱՆՆԱ

Շուտ արա, թէ չէ

Յետոյ կը ստիպուիս: Երբէք Ֆրանսիան  
Պիտի չը կրէ Անդլիայի լուծը,  
Երբէք, ո՛չ երբէք: Աւելի շուտով  
Մի լայն դերեզման կը դառնայ նա ձեր  
Զօրքերի համար: Արդէն ընկած են  
Ձեր ընտիրները. այժմ ապահով  
Վերադարձի վրայ պէտք է մտածէք:  
Ձեր զօրութիւնը ու փառքը անցաւ:

ԻԶԱՐՕ

Ի՛նչպէս կարող էք համբերել դուք այս  
Խեղադար աղջկայ յանդիւնութեանը:

ՏԱՍՆԵՐՈՐԴ ԵՐԵՒՈՅԹ

Մ Ի Հ Ա Ր Ի Ի Ր Ա Պ Ե Տ, շտապով ներս է մտնում:  
Հ Ա Ր Ի Ի Ր Ա Պ Ե Տ

Ո՛վ տէր զօրապետ, շտապեցէք զօրքը  
Կռուի պատրաստել: Գրօշները պարզած  
Առաջ են դալիս Ֆրանսիայիքը,  
Նոցա զէնքերով փայլում է դաշտը:

ՅՈՎՀԱՆՆԱ (ողևորուած.)

Ֆրանսիացիքը առաջ են դալիս.  
Դէհ, դուրս եկ դաշտը, հպարտ Անդլիա,  
Դուրս եկ կռուելու:

ՖԱՍՏՈՒՅ

Անմիտ, զսպիր քո

Ուրախութիւնը. դու էլ չես տեսնի  
Այս օրուայ վերջը:

ՅՈՎՀԱՆՆԱ

Աղոս կը յաղթէ,

Եւ ես կը մեռնիմ: Քաջերը էլ իմ  
Բաղին կարօտ չեն:

ԼԻՕՆԵԼ

Ես ծաղրում եմ այն

Թուլամորթներին: Արդէն քսան անգամ

Քրչել ենք նոցա պատերազմներում,  
 Քանի չէր կռվում նոցա համար այս  
 Դիւցազն աղջիկը: Բոլոր Ֆրանսիական  
 Ազգից միայն մէկին չեմ արհամարհում,  
 Եւ այդ մէկ հատին էլ արքային —  
 Եկէք գնանք, Ֆաստօլի և նոցա համար  
 Պատրաստենք դարձեալ այնպիսի մի օր,  
 Ինչպէս որ Կրէկի ու Պուատիէի մօտ:  
 Իսկ դուք, Թադուհի կը մնաք այստեղ  
 Եւ Յովհաննայի վերայ կը հսկէք,  
 Մինչև պատերազմը կը վերջանայ.  
 Ձեզ մօտ Թողնում եմ ես յիսուսն ասպետ:

ՖԱՍՏՈԼԻ

Ի՞նչ, Թշնամու դէմ զը նանք ու Թողնենք  
 Այս կատաղածին այստեղ մեր ետե:

ՅՈՎՀԱՆՆԱ

Վախեցնում է քեզ շղթայած մի կին:

ԼԻՕՆԷԼ

Յովհաննա, խօսք առբ, որ չես փախչելու:

ՅՈՎՀԱՆՆԱ

Միակ բաղձանքս է ազատութիւնս:

ԻԶԱԲՕ

Կապեցէք նորան երրեակ շղթայով:

Ես ձեզ իմ գլխով երաշխաւոր եմ,

Որ նա չի փախչի:

(Յովհաննային կապկալում են ծանր շղթաներով.)

ԼԻՕՆԷԼ (Յովհաննային.)

Այդպէս ես ուզում,

Դու մեզ, ստիպում ես: Բայց քո ձեռին է.

Թող Ֆրանսիան, կը թիր Անգլիայի դրօշը,

Եւ դու ազատ ես, և կատաղութեամբ

Այժմ արիւնդ պահանջողները

Կը ծառայեն քեզ:

ՖԱՍՏՈԼԻ (շապտով.)

Գնանք, դնանք, զօրապետ:

ՅՈՎՀԱՆՆԱ

Ի՞նչ ես շատ խօսում. Ֆրանսիացիքը

Առաջ են գալիս, պաշտպանիւ անձի.

(Լսվում են փողերի ձայներ, Լիօնէլը լուռ դուրս է գնում.)

ՖԱՍՏՈԼԻ

Թագուհի, զիտէք, ինչ պիտի անէք,

Եթէ որ բազմ մեր դէմ կը լինի,

Եթէ տեսնէք, որ մերոնք փախչում են —

ԻԶԱԲՕ (դաշոյնը հանելով.)

Դուք բոլորովին միամիտ եղէք,

Սա մեր անկուճը պիտի չըտեսնէ:

ՖԱՍՏՈԼԻ (Յովհաննային.)

Դու արդէն զիտես, ինչ է քեզ սպասում.

Հիմա աղօթիր, որ ազգդ յաղթէ:

(Նա դուրս է գնում.)

ՏԱՍՆԵԻՄԻԵՐՈՐԴ ԵՐԵԻՈՅԹ

ՅՈՎՀԱՆՆԱ, ԻԶԱԲՕ, ԶԻՆՈՒՈՐԵՆԵՐ.

ՅՈՎՀԱՆՆԱ

Այ՛, կաղօթեմ, ո՞վ կարգելէ ինձ:

Ահա լսում եմ իմ Ժողովուրդի

Պատերազմական երաժշտութիւն:

Ո՛հ, ինչպէս դուարթ հնչում է սրտիս

Եւ ինձ յաղթութեան աւետիս տալիս:

Փչանայ Անգլիան, յաղթէ Ֆրանսիան:

Առաջ, իմ քաջեր, առաջ, հեռու չէ

Կոյսը ձեզանից, նա էլ կարող չէ,

Ինչպէս որ երբեմն սուրբ դրօշը ձեռին,

Առաջնորդել ձեզ — ծանր շղթաներ

Կապում են նորան, բայց նորա հոգին

Թեւաւորուած ձեր պատերազմական

Երգերով, ազատ Թռչում է բանտից:

ԻԶԱԲՕ (Զինուորաներից մէկին.)

Գընա, բարձրացիր աշտարակի վրայ,

Որ պատերազմի դաշտին է նայում.

Ասա՛, ինչպէս է կռիւը փոփոխվում:

(Զինուորը բարձրանում է.)

ՅՈՎՀԱՆՆԱ

Առաջ, Ֆրանսիացիք, առաջ, իմ քաջեր,

Վերջին կռիւն է: Մի յաղթութիւն էլ,

Եւ կը կործանուի իսպառ Թշնամին:

ԻԶԱԲՕ

Դէ՛հ, ի՞նչ ես տեսնում:

ԶԻՆՈՒՈՐ

Արդէն խառնուեցան:

Մի վագրի մորթով ծածկուած վայրենի

Արար ձիու վրայ առաջ է թռչում

Իւր ժանդարմներով:

ՅՈՎՀԱՆՆԱ

Կոմս Գիւնուան է:

Առաջ, քաջ զինուոր, առաջ, կը յաղթես:

ԶԻՆՈՒՈՐ

Կամուրջին վրայ է վազում Բուրգունդը:

ԻԶԱԲՕ

Ո՛հ երանի թէ տասը տէգ ցցուի

Այն դաւաճանի խարդախ սրտում:

ԶԻՆՈՒՈՐ

Լորդ

Ֆաստոլջին այրաբար դէմ է դընում նրան:

Նոքա ցած իջան երիվարներից:

Դքսի մարդիքը և մերոնք մէկ մէկ

Մենամարտում են:

ԻԶԱԲՕ

Արդեօք չե՞ս տեսնում

Թագաժառանգին, չե՞ս ճանաչում նրան

Թագաւորական նշաններիցը:

ԶԻՆՈՒՈՐ

Բոլորը թանձր փոշով պատած է,

Չեմ կարողանում ոչինչ որոշել:

ՅՈՎՀԱՆՆԱ

Թէ նա ունենար իմ աչքը, կամ ես

Կանգնած լինէի վերեւը նրա տեղ,

Ամենափոքր բանն էլ չէր փախչի

Իմ տեսութենից: Վայրի թռչունը

Կարող եմ համրել թռչելիս, բազէն

ձանաչել օդում, որքան բարձր լինի:

ԶԻՆՈՒՈՐ

Խրամի մօտ սաստիկ իրար են խառնվում:

Երևում է, որ մեծամեծները,

Առաջինները այնտեղ են կռվում:

ԻԶԱԲՕ

Դեռ ևս կանգոն է մեր զրօշակը:

ԶԻՆՈՒՈՐ

Այո՛, օղի մէջ ծածանում է նա:

ՅՈՎՀԱՆՆԱ

Պատի ճեղքերից եթէ նայէի,

Կուլին, աչքերով կը հրամայէի:

ԶԻՆՈՒՈՐ

Վայ, ի՞նչ իմ տեսնում, մեր զորավարը

Շրջապատած է—

ԻԶԱԲՕ (Դաշոյնը բարձրացնելով.)

Մեռի՛ր, տարաբաղդ:

ԶԻՆՈՒՈՐ (շուտ.)

Նա ազատուեցաւ: Քաջ լորդ Ֆաստոլջը

Ետեից հասաւ թշնամու վերայ:

Նա ճեղքեց նորա թանձր գունդերը:

ԻԶԱԲՕ (Դաշոյնը յետ քաշելով.)

Հրեշտակդ խօսեց:

ԶԻՆՈՒՈՐ

Յաղթութիւն: Ահա՛,

Ահա՛, փախչում են:

ԻԶԱԲՕ

Որո՞նք են փախչում:

ԶԻՆՈՒՈՐ

Ֆրանսիացիք և Բուրգունդիացիք:

Ողջ դաշտը ծածկուած է փախչողներով:

ՅՈՎՀԱՆՆԱ

Աստուած իմ, Աստուած, մի՞թէ թողել ես

Ինձ բոլորովին:

ԶԻՆՈՒՈՐ

Ցանում են ծանր

Մի վերաւորեալ: Մարդիկ վազում են

Նորան օգնելու: Նա մի իշխան է:

ԻԶԱԲՕ

Մերոնցից է, թէ Ֆրանսիացի է:

ԶԻՆՈՒՈՐ

Գլխից հանեցին սաղաւարտը: Դա

Գիւնուա կոմսն է:

ՅՈՎ. ՀԱՆՆԱ. (Սաստիւթեամբ բռնում է շղթաները.)

Աւաղ ես միայն

Շղթայած կին եմ:

ՋԻՆՈՒՈՐ

Կաց, կաց, այն ո՞վ է

Կապոյտ, ոսկեթել վերարկուի մէջ:

ՅՈՎ. ՀԱՆՆԱ. (եռանդով.)

Իմ վեհապետն է, իմ թագաւորն է:

ՋԻՆՈՒՈՐ

Նրա ձին խրտնում է — վայր ձգեց նորան —

Մեծ դժուարութեամբ ուզում է կանգնել —

(Յովհաննա լսում է այս խօսքերը կրքոտ շարժումներով.)

Մերոնք շուտաքայլ մօտենում են նրան —

Հասան — պատեցին —

ՅՈՎ. ՀԱՆՆԱ

Ո՛հ, մի՞թէ չունի

Երկինքն էլ հրեշտակ:

ԻԶԱԲՕ (ծաղրելով.)

Հիմա, այ հիմա,

Ազատիչ, հասիր ազատել նորան:

ՅՈՎ. ՀԱՆՆԱ

(Ընկնում է ծնկան վերայ և աղօթում է սաստիկ ձայնով.)

Աստուած, լիր ինձ իմ նեղութեան մէջ,

Ջերմ պաղատանքով ուղղում եմ հոգիս

Քեզ մօտ երկինքը: Կարող ես սարդի

Ոստայնի թելը ամրացնել ինչպէս

Նաւի հաստ պարան, ամենակարող

Քո զօրութեանը հեշտ է երկաթէ

Պինդ կապանքները ոստայնի բարակ

Թելերի փոխել — Կամեցիր, կընկնին

Այս շղթաները և կը պատառուին

Բանախ պատերը — Դ՛հ, Տէր, օգնեցիր

Սամսոնին, երբ կոյր էր և շղթայած,

Եւ համբերում էր թշնամիների

Դառն կատակին — Ապաւինելով

Քեզ, պինդ բռնեց նա բանտի սիւները,

Եւ խոնարհեցաւ, և կործանեցաւ

Այն շինութիւնը:

ՋԻՆՈՒՈՐ

Յաղթութիւն:

ԻԶԱԲՕ

Ի՞նչ կայ:

ՋԻՆՈՒՈՐ

Արքան բռնուեցաւ:

ՅՈՎ. ՀԱՆՆԱ

Տէր Աստուած, օգնիր:

(Նա երկու ձեռով սաստիւթեամբ բռնում է շղթաները և կոտորում է. Մի և նոյն վայրկենին յարձակվում է մօտակայ զինուորի վերայ, խլում է նորա սուրը և դուրս է վազում: Բողոքն էլ ապշած նայում են նորա ետեւից.)

### ՏԱՍՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ԵՐԵՒՈՅԹ

Ա Ռ Ա Ջ Ի Ն Ն Ե Ր Ը առանց Յ Ո Վ Հ Ա Ն Ն Ա Յ Ի .

ԻԶԱԲՕ (երկար լուսթենից յետոյ.)

Այս ի՞նչ էր: Արդեօք երազումն էի:

Ո՞ր կողմը փախաւ, ինչպէս կոտորեց

Այս շղթաները: Ամբողջ աշխարհին

Չէի հաւատայ, թէ չէի տեսել

Ես իմ աչքերով:

ՋԻՆՈՒՈՐ (Աշտարակի գլխից.)

Այս ի՞նչ է. մի՞թէ

Թւեր ունի նա: Արդեօք մի մրրիկ

Յափշտակեց նրան:

ԻԶԱԲՕ

Ցած ումն է արդէն:

ՋԻՆՈՒՈՐՆԵՐ

Կռուի մէջ տեղն է — Նորա զընացքը

Աւելի շուտ է, քան թէ իմ աչքը:

Նա մէկ այստեղ է — մէկ այնտեղ — հիմա

Յանկարծ տեսնում եմ նորան շատ տեղեր:

— Զօրքը ճեղքում է — Ամենքը նորան

Տեղն են տալիս: Ֆրանսիացիքը

Նորից կանգնեցան — Վայ, ինչ եմ տեսնում.

Մերոնք թափում են իրանց զէնքերը.

Մեր դրօշներն ընկան —

ԻԶԱԲՕ

Ի՞նչ, նա խըլում է

Մեր յաղթութիւնը:

ՋԻՆՈՒՈՐ

Ուղիղ արքայի

Կողմն է դիմում նա — Հասաւ — դուրս քաշեց

Նրան կռուի միջեց— Լորդ Ֆաստոլֆն ընկաւ—  
Մեր զօրապետը գերի բռնուեցաւ:

ԻԶԱԲՕ

Եւ բան չեմ ուզում լսել, ցած իջի՛ր:

ԶԻՆՈՒՈՐ

Փախէք թագուհի, փախէք, կը բռնեն.

Ահա գալիս են աշտարակի վրայ

Զինուորուած մարդիկ:

(Նա ցած է իջնում.)

ԻԶԱԲՕ (Սուրբ մերկացնելով.)

Կռուեցէք, վատեր:

### ՏԱՍՆԵՐԵՔԵՐՈՐԴ ԵՐԵՒՈՅԹ

Գալիս է ԼԱ 'ՀԻԲԸ ԶԻՆՈՒՈՐՆԵՐՈՎ: Երբ որ նա մտնու  
թագուհու զինուորները թափում են զէնքերը:

ԼԱ ՀԻԲ (Յարգանքով մտնելով է թագուհուն.)

Թագուհի, տեղի տուէք զօրութեան—

Զեր ասպետները անձնատուր եղան,

Եւ օգուտ չունի զիմադրութիւնը:

— Ընդունեցէք իմ ծառայութիւնը,

Հրամայեցէք, ո՛ր առաջնորդեմ ձեզ:

ԻԶԱԲՕ

Ուր կուգէ լինի, նոյն է ինձ համար,

Միայն թէ դօժէնին չը հանդիպիմ ես:

(Տալիս է սուրբ Լա Հիրին և հետևում է նորան զինուորների հետ միասին.)

### պատերազմի դաշտը

### ՏԱՍՆԵՒՉՈՐՍԵՐՈՐԴ ԵՐԵՒՈՅԹ

Բեմի ետևի մասնում շատ ԶԻՆՈՒՈՐՆԵՐ պարզած դրօշներով ԹԱ  
ԳԱՒԱՒՈՐ և ԲՈՒՐԳՈՒՆԴԻ ԴՈՒՔՍԸ որոնց բազուկների վերա  
ընկած է ՅՈՎ ՀԱՆՆԱ մահացու կերպով վիրաւորուած: Ամենևին կեն  
դանութեան նշան չէ երևում նորա վերայ: Նորա կամաց առաջ են գ  
լիս: Ներս է վազում Ա Գ Ն Ե Ս Ս Օ Ր Է Լ Ը:

ՍՕՐԷԼ (Ընկնելով թագաւորի գերկը.)

Ազատուած էք դուք— ո՞ղջ էք, անվնաս—

Ելի ստացայ՝ ձեզ:

ԹԱԳԱՒՈՐ

Այո՛, ազատուած —

Ահա՛ այս գընով:

(Յայց է տալիս Յովհաննայի վերայ.)

ՍՕՐԷԼ

Յովհաննա, Աստուած,

Մեռնում է:

ԲՈՒՐԳՈՒՆԴԻ

Արդէն հոգին աւանդեց.

Բաժանուեց մեզնից իբրև մի հրեշտակ:

Տեսէք, պարկած է անցաւ և հանդարտ,

Իբրև քնած մանուկ: Ասես խաղում է

Դէմքին երկնային խաղաղութիւնը:

Եւ շունչ չէ առնում, բայց տաք ձեռներից

Դեռ նշմարվում է կենդանութիւնը:

ԹԱԳԱՒՈՐ

Մեռաւ— այլ ևս զարթելու չէ նա,

Եւ չեն բացուելու նորա աչքերը:

Արդէն շքում է երկնքում իբրև

Լուսաւոր հոգի, և էլ չէ տեսնում

Ոչ մեր ցաւը և ոչ էլ զղջումը:

ՍՕՐԷԼ

Նա բաց է անում աչքերը, տեսէք,

Դեռ կենդանի է:

ԲՈՒՐԳՈՒՆԴԻ (զարմացած.)

Ի՞նչ, գերեզմանից

Յետ է դառնում նա, յաղթում է մահուան:

Նա բարձրանում է: Ահա՛ կանգնեցաւ:

ՅՈՎ ՀԱՆՆԱ (կանգնում է և նայում է իւր շուրջ.)

Այս ի՞նչ տեղ եմ ես:

ԹԱԳԱՒՈՐ

Բարեկամներից

Եւ թագաւորից բազուկների մէջ:

ՅՈՎ ՀԱՆՆԱ

(Երկար միջոց անթարթ աչքով նայելուց յետոյ.)

Ո՛չ, ես կախարդ չեմ, այո՛, կախարդ չեմ:

ԹԱԳԱՒՈՐ

Սուրբ և անարատ ես ինչպէս հրեշտակ,

Բայց մեր աչքերը տեսէք զիջեր:

ՅՈՎՀԱՆՆԱ. (Զուարթ ժպտով նայելով իւր շուրջ.)  
 Իմ ժողովուրդի մէջն եմ ուրեմն.  
 Էլ արհամարհած չեմ ես ու մերժած,  
 Չեն անիծում ինձ, ամենքը քաղցր  
 Աչքով են նայում—Այո՛, այժմ ես  
 Ամեն բան որոշ ու պարզ տեսնում եմ:  
 Ահա՛ իմ արքան, ահա՛ Ֆրանսիայի  
 Կրօնները, բայց իմ դրօշը չեմ տեսնում—  
 Ո՛ւր է: Չեմ կարող առանց դրօշիս գնալ:  
 Տէրը յանձնեց ինձ և պէտք է կրկին  
 Նորա աթոռի առաջ վայր դնեմ:  
 Այո՛, կարող եմ համարձակ ցոյց տալ  
 Իմ դրօշը նորան, որովհետև միշտ  
 Հաւատարմութեամբ կրել եմ ես այն:

ԹԱԳԱԻՈՐ

Տուէք իւր դրօշը:

(Կրօշը տալիս են Յովհաննային, որ այն ձեռին բռնած կանգնած է բոլորովին ազատ: Երկինքը փայլում է վարդագոյն լուսով:)

ՅՈՎՀԱՆՆԱ

Տեսնում էք օդում

Այն ծիածանը: Բաց են երկնքի  
 Ոսկէ դռները: Հրեշտակները շուրջ,  
 Փառաւորապէս կանգնած է այնտեղ  
 Աստուածամայրը, յաւիտենական  
 Մանուկը գրկում: Աիրով ժպտելով,  
 Մեկնում է նա ինձ իւր բազուկները:  
 Այս ի՞նչ եմ ըզգում—ինձ բարձրացնում են  
 Թեթև ամպերը—ծանր զըրահս  
 Թեւաւորվում է—վեր—վեր—երկիրը  
 Մընում է ետև—ցաւն է կարճատև,  
 Ուրախութիւնը յաւիտենական:

(Կրօշը վայր է ընկնում նորա ձեռից և նա մեռած ընկնում է նորա վերայ:—Ամենքը երկար միջոց կանգնած են անխօս և սաստիկ շարժած:—Թագաւորը թեթև նշան է տալիս և բոլոր դրօշները թեթևութեամբ վայր են թողնում նորա վերայ, այնպէս որ բոլորովին ծածկվում է նոցանով:)

« Ազգային գրադարան



NL0171225

